ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՊԱՏՄԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

KAREN MATEVOSYAN

HISTORICAL ARCHAEOLOGICAL OBSERVATIONS

ARUCH, HAVUTS TAR, ANI, AGHTAMAR,
VAYOTS DZOR

MOUGNI PUBLISHERS
Yerevan 2020

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՊԱՏՄԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

ԱՐՈՒՃ, ՀԱՎՈՒՑ ԹԱՌ, ԱՆԻ, ԱՂԹԱՄԱՐ, ՎԱՅՈՑ ՁՈՐ

«ՄՈՒՂՆԻ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Երևան 2020

ՀՏԴ 93/94:902
ԳՄԴ 63.3+63.4
Մ 151

Մաթևոսյան Կարեն

Մ 151 Պատմահնագիտական դիտարկումներ/ Կ. Մաթևոսյան.– Եր.: «Մուղնի» հրատ.:
2020.– 136 էջ:

Գրքում ներկայացվում են մի շարք հուշարձանների ու հնավայրերի մասին հեղինակի պատմահնագիտական դիտարկումներն ու վերլուծությունները, դրանցից մի քանիսի տեղորոշման վերաբերյալ արվում են ենթադրություններ, ինչպես նաև առաջարկություններ՝ դրանց հետագա ուսումնասիրության ուղղությամբ: Այդ վայրերն են՝ Արուճը, Հավուց թառի վանքը, Անին, Աղթամարը և Վայոց ձոր գավառը (Գլաձոր, Հերմոն, Վերին Նորավանք):

Նախատեսված է հայոց պատմությամբ, մշակույթով ու արվեստով զբաղվող մասնագետների, ինչպես նաև ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 93/94:902
ԳՄԴ 63.3+63.4

ISBN 978–99941–33–87–1

© Մաթևոսյան Կարեն, 2020

ՆԱԽԱԲԱՆ

Շուրջ 40-ամյա գիտահետազոտական աշխատանքի ընթացքում շատ բան է հաջողվել անել, որի արդյունքը հրատարակված բազմաթիվ գրքերն ու հոդվածներն են[1], սակայն կան նաև որոշ գործեր, որոնց իրականացումը միայն հետազոտողի ցանկությունից չի կախված, այլ որոշակի միջոցներ ու հնարավորություններ է պահանջում: Խոսքը մասնավորապես պատմահնագիտական թեմաների, և որոշ հնավայրերում ուսումնասիրությունների ու պեղումների հնարավորության մասին է: Դրանց մի մասը գուցե կարելի կլինի իրականացնել տասնամյակներ հետո: Ստորև ներկայացնում եմ մի շարք հուշարձանների ու հնավայրերի վերաբերյալ իմ դիտարկումները և վերլուծությունները, առաջադրելով որոշ ենթադրություններ ու առաջարկություններ, որոնք կարող են ուղենիշ լինել հետագա հետազոտությունների համար: Այդ վայրերն են՝ **Արուճը**, **Հավուց թառի** վանքը, **Անին, Աղթամարը** և **Վայոց ձորը**:

Սույն գործը շարադրում եմ գիտահանրամատչելի եղանակով, տեղ-տեղ հուշագրության ձևով: Բայց մինչև բուն նյութին անցնելն ուզում եմ համառոտ ներկայացնել գիտական աշխատանքի իմ անցած ուղին, քանի որ մեծապես դրանով է պայմանավորվել հետաքրքրություններիս շրջանակը՝ պատմություն, աղբյուրագիտություն, մշակույթ, ճարտարապետություն և արվեստ, որով ավելի հասկանալի կդառնա հետագա շարադրանքը: Ի դեպ, 2007-ին լույս տեսած «Ով ով է. հայեր» կենսագրական հանրագիտարանում իմ անվան դիմաց գրված է «արվեստագիտության թեկնածու»[2], իսկ որոշ ժամանակ անց Հայկական հանրագիտարանի մեկ այլ հրատարակության մեջ՝ «արվեստագիտության դոկտոր»[3], որն իրականությանը չի համապատասխանում, քանի որ ես պատմական գիտու-

---

[1] Ամբողջական ցանկը տես գրքի վերջում:

[2] «Ով ով է. հայեր» կենսագրական հանրագիտարան, հ. 2, Երևան, 2007, էջ 13:

[3] Հայ գրատպություն և գրքարվեստ, հանրագիտարան, Երևան, 2015, էջ 674:

թյունների թեկնածու և դոկտոր եմ: Բայց այդ թյուրիմացությունը ծագել է իմ գործունեության ու գիտական աշխատությունների մի մասի մշակութային և արվեստագիտական ուղղվածությունից: Ինչևէ, ստորև ներկայացվող, որոշ իմաստով աշխատանքային «ինքնակենսագրությունը» կարծում եմ պարունակում է այդ և այլ հարցերի պատասխանները:

Ավելացնեմ, որ գրքում տեղ են գտել նաև նախկինում հրատարակված նյութերի հետ կապված որոշ լրացումներ, նոր տվյալներ, որոնք ի հայտ են եկել վերջին տարիների ուսումնասիրությունների արդյունքում:

Ավարտել եմ Խաչատուր Աբովյանի անվ. հայկական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը (1979 թ.) և երեք տարի պատմություն դասավանդել Բյուրականի միջնակարգ դպրոցում: Հանգամանքների բերումով 1980 թ. ապրիլից աշխատանքի եմ անցել նաև Հայաստանի պետական պատկերասրահում (այժմ՝ Հայաստանի Ազգային պատկերասրահ) որպես կրտսեր գիտաշխատող՝ Հայ հին և միջնադարյան արվեստի սեկտորում: Հենց այդ ժամանակից է սկսվել իմ գիտական, հետազոտական աշխատանքը, որի ուղղվածությունը հայ միջնադարյան արվեստն էր: Նշված բաժնի նյութը հայկական եկեղեցիների որմնանկարներից և ձեռագրերի մանրանկարներից կատարված ընդօրինակությունների հավաքածուն էր՝ շուրջ 700 միավոր, որի համար անհրաժեշտ էր նոր քարտարան կազմել, տեղեկություններով դրանք լրացնել և այլն: Սա իմ բուհական կրթության հետ ուղղակի կապ չունեցող ոլորտ էր, ուստի հարկ եղավ մասամբ վերամասնագիտանալ, ծանոթանալ արվեստագիտական, հատկապես հայ արվեստին նվիրված առկա գրականությանը, թանգարանային գործի առանձնահատկություններին: Բայց այդ ամենը շատ սահուն կատարվեց, քանի որ վայրը՝ հայ ու համաշխարհային կերպարվեստի հրաշալի հավաքածու ունեցող մեր պատկերասրահը, ինչպես նաև մասնագիտական միջավայրը, տրամադրող էին: Առաջին հոդվածներս գրել եմ Արուճի ու Լմբատավանքի 7-րդ դ. որմնանկարների և 1211 թ. «Հաղբատի Ավետարանի» մանրանկարչության մասին:

1986 թ. պատկերասրահում բացվեց հին և միջնադարյան արվեստի ցուցադրությունը, հատուկ այդ նպատակով՝ մեծադիր որմնանկարների համար նախատեսված երեք խոշոր ցուցասրահներում: Ինձ հանձ-

նարարվեց որմնանկարչության ցուցասրահների համար ուղեցույց գրել, որը պարզվեց հեշտ բան չէր, քանի որ որմնանկարչության մասին շատ քիչ գրականություն կար: Միաժամանակ հարկ եղավ անդրադառնալու ոչ միայն ցուցադրվող գործերին, այլև մի շարք հարակից հարցերի՝ Հայ Եկեղեցու՝ պատկերների նկատմամբ ունեցած վերաբերմունքին և այլն[4]: Պատկերասրահում իմ աշխատանքային կենսագրության հաջորդ փուլերն էին՝ ավագ գիտաշխատող, Հայ հին և միջնադարյան արվեստի սեկտորի վարիչ, 1987-ից՝ նույնանուն բաժնի վարիչ, ապա գիտքարտուղար (1995- 2004 թթ.):

Առաջ անցնելով ասեմ, որ որմնանկարչության ոլորտին անդրադարձել եմ նաև ավելի ուշ. 2014-2015 թթ. Թիֆլիսի առաջնորդանիստ Ս. Գևորգ եկեղեցու որմնանկարների վերականգնման աշխատանքին մասնակցել եմ որպես գիտական խորհրդատու և տեխնիկական վերահսկող[5], իսկ աշխատանքի ավարտից հետո՝ այդ որմնանկարներին նվիրված եռալեզու ալբոմի համահեղինակ[6]: Դադիվանքի որմնանկարին վերաբերող՝ «Վիկտորիա» հիմնադրամի միջոցով կազմակերպված մեկ այլ արժեքավոր հրատարակության մասնակցել եմ 2018 թ.[7], իսկ 2019-ին նույն հիմնադրամի միջոցով լույս տեսավ «Հայկական որմնանկարչություն», գիտական հոդվածների և նյութերի ժողովածուն (կազմող և խմբագիր Կ. Մաթևոսյան, Երևան, 2019):

Աշխատանքային գործունեությանս հաջորդ կարևոր հանգրվանը էջ-

---

[4] Կ. Մաթևոսյան, Որմնանկարչությունը Հայաստանի պետական պատկերասրահում (Հայաստանի պետ. պատկերասրահի հրատ.), Երևան, 1990 (թվայնացվածը՝ www.armenianart.org կայքում):

[5] Ծրագիրն իրականացվում էր IDeA հիմնադրամի նախաձեռնությամբ, իսկ բուն վերականգնումը կատարել են Հայաստանի որմնանկարների վերականգնման գիտահետազոտական կենտրոնի մասնագետները (ղեկավար՝ Արժանիկ Հովհաննիսյան):

[6] Surb Gevorg Cathedral. The Frescoes, Preface authors Karen Matevosyan, Avet Avetisyan, Yerevan, 2015 (անգլերեն, հայերեն, վրացերեն, ռուսերեն):

[7] Դադիվանքի որմնանկարներին նվիրված ալբոմ-ուսումնասիրությունը Գայանե Գեորգյանի ու նրա «Վիկտորիա» հիմնադրամի նախաձեռնությունն էր, որը կատարվեց հեղինակային խմբով: Մաթևոսյան Կարեն, Ավետիսյան Ավետ, Ջարյան Արա, Լամուրե Քրիստին, Դադիվանք. վերածնված հրաշալիք (հայերեն, ռուսերեն, անգլերեն), Երևան, 2018:

միածնի Հոգևոր ճեմարանն էր: Երջանկահիշատակ հայրս՝ պատմաբան, ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանը (1922–2004) այն տարիներին ճեմարանում ձեռագրագիտություն և հայ դպրոցների պատմություն առարկաներն էր դասավանդում: 1985 թ. ճեմարանում պատմության նոր դասախոս ունենալու հարց էր ծագել և ինձ հրավիրեցին: Հիմնականում տարեց դասախոսների մեջ 27 տարեկան «պարոնի»[8] հայտնվելը ուսանողները սիրով ընդունեցին: Բայց ամենակարևորը Վազգեն Ա Վեհափառ հայրապետի առանձնահատուկ բարյացակամ վերաբերմունքն էր իմ նկատմամբ[9]:

Ճեմարանում դասավանդելը էական դեր ունեցավ իմ մասնագիտական կատարելագործման մեջ: Բանն այն է, որ հայ ժողովրդի պատմության սովետական հրատարակություններում (դասագրքերից սկսած), գրեթե անտեսված էր եկեղեցու պատմությունը: Մինչդեռ ճեմարանում, որտեղ սաները նաև եկեղեցու պատմություն էին անցնում, պարզապես անհնար էր առանց դրա պատշաճ իմացության հայ ժողովրդի պատմություն դասավանդել: Դրան ավելացրած, անհրաժեշտ էր գիտելիքների որոշակի պաշար ունենալ եկեղեցագիտական, դավանաբանական,

[8] Այն ժամանակ ողջ երկրում ուսուցիչների, դասախոսների, պաշտոնյաների, ընդհուպ կենտկոմի քարտուղարի (երկրի առաջին դեմքի) համար գոյություն ուներ մեկ դիմելաձև՝ «ընկեր»: Էջմիածնի վանքում աշխարհական պաշտոնյաներին և դասախոսներին կոչում էին «պարոն»:

[9] Վազգեն կաթողիկոսի ժամանակ, ամեն տարի փետրվարին, միայն Վարդանանց տոնի օրը, Պատարագից հետո բացվում էին Վեհարանի դռները, և ժողովուրդը ներս էր գալիս ու սրահում ներկա գտնվում տոնին նվիրված միջոցառմանը՝ բանախոսություն և կարճ համերգ, և վերջում ստանում Վեհափառի օրհնությունը: 1986 թ., երբ դեռ մի քանի ամսվա դասախոս էի, Վարդանանց տոնի բանախոսությունն ինձ հանձնարարվեց: Գրեցի (բավական ոգեշունչ խոսք ստացվեց, տես «Էջմիածին» 1986, Բ, էջ 19–20) և ելույթ ունեցա, որը Վեհափառը հավանել էր, հետո ինձ իր մոտ կանչեց դրվատելու: Նաև հանձնարարեց ճեմարանի սաների համար գրել մի տեքստ Հայաստանի առաջին հանրապետության պատմության մասին, որը զերծ լինի կոմունիստական պրոպագանդայից (զուտ պատմություն): Կատարեցի, և դա էլ հավանեց: Հետո իմացա, որ անգամ պատճենահանել տալով բաժանել է միաբանական ժողովի մասնակիցներին, ասելով, որ մեր ճեմարանի պատմության նոր դասախոսն է գրել, դուք էլ ծանոթացեք: Դրանից հետո, ամեն առիթով, Վազգեն կաթողիկոսը որևէ կերպ, քաջալերական մի խոսքով, արտահայտում էր իր ջերմ վերաբերմունքն իմ նկատմամբ:

ծիսական և այլ հարցերի վերաբերյալ, դասավանդման ժամանակ ուսանողներին հետաքրքրող հարցերին պատասխանելու համար: Կարճ ասած, ճեմարանում դասավանդելու առաջին տարիներին, ինչքան որ սովորեցրեցի, թերևս նույնքան էլ ինքս սովորեցի:

Ճեմարանի ուսումնական ծրագրում հայ ժողովրդի պատմության դասաժամերի մեջ շատ փոքր բաժին էր հատկացված մշակույթին, որի ծավալի մեջ արվեստին աննշան տեղ էր մնում: Այն ժամանակվա տեսուչին՝ Տ. Եզնիկ Պետրոսյանին (այժմ արքեպիսկոպոս) առաջարկեցի, որպեսզի առանձին մի դասընթաց կազմակերպվի նվիրված հայ եկեղեցական ճարտարապետությանը, մանրանկարչությանն ու որմնանկարչությանը, նկատի ունենալով, որ ճեմարանավարտների մեծ մասը ծառայության է անցնելու եկեղեցիներում, այս կամ այն կերպ առնչվելու է եկեղեցական արվեստին: Առաջարկությունն ընդունվեց, կազմեցի ծրագիր և դասընթացը ներդրվեց ավարտական լսարաններում: Ավելի ուշ ես դադարեցրեցի հայ ժողովրդի պատմության դասավանդումը և մնաց միայն այդ առարկան, որը հետագայում ստացավ «Հայ եկեղեցական արվեստ» անվանումը: Ճեմարանում դասավանդել եմ մինչև 2001 թ., հետագայում ևս երկու անգամ՝ երկուական տարով:

Բայց կապը Մայր Աթոռի հետ եղել է նաև այլ առումներով, մասնավորապես երջանկահիշատակ Գարեգին Ա կաթողիկոսի ժամանակ երեք տարի եղել եմ «Քրիստոնեայ Հայաստան» երկշաբաթաթերթի առաջին գլխավոր խմբագիրը, իսկ 2008 թ.՝ Գարեգին Բ կաթողիկոսի տնօրինությամբ՝ Մայր Աթոռի մշակույթի բաժնի տնօրեն: Մայր Աթոռի «Էջմիածին» պաշտոնական ամսագրում հրատարակել եմ շուրջ չորս տասնյակ գիտական հոդված: Մեծապես Եկեղեցու հետ էր կապված նաև «Մոմիկ» մշակութային միության գործունեությունը՝ 1991–2007 թթ., որի փոխնախագահն էի[10]: Ճեմարանական իմ սաների հատկապես ավագ սերնդի

[10] Աբրահամ վարդապետ Մկրտչյանի (այժմ՝ արքեպիսկոպոս) նախաձեռնությամբ 1991-ի ապրիլին ստեղծեցինք «Հայ քրիստոնեական մշակույթի «Մոմիկ» երիտասարդական միություն» հասարակական կազմակերպությունը, որը հիմնականում միավորում էր քրիստոնեական թեմաներով ստեղծագործող արվեստագետներին: Միությունը կազմակերպել է դասախոսություններ, տասնյակ ցուցահանդեսներ Հայաստանում և Սփյուռքի համայնքներում, որոնց մասնակցել եմ (Կանադա, Լիբանան, Սիրիա, Դանիա, Ավստրալիա), հրատարակել գրքեր, այդ

ներկայացուցիչների հետ, հետագայում նաև համագործակցության առիթներ եմ ունեցել:

Պատկերասրահում աշխատելու և ճեմարանում դասավանդելու տարիներին սկսեցի նաև իմ թեկնածուական դիսերտացիայի շարադրումը, որպես ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ: Թեման էր՝ «Անի քաղաքի գրչության կենտրոնը», որի համար նյութեր ժողովելու վայրը Մատենադարանն էր, իսկ իմ աշխատանքին հետևողն ու խորհուրդներ տվողը հայրս՝ Արտաշես Մաթևոսյանը, որ այն տարիներին Մատենադարանի գլխավոր ավանդապահն էր: Ընդհանրապես, նրա երազանքն էր, որ իր միակ զավակը հայագետ և հայոց բազմահարուստ ձեռագրական մշակույթի հետազոտող դառնա, քանի որ ինքն էլ այդ աշխարհի նվիրյալն էր: Ինձ երկու թեմա առաջարկեց՝ Աղթամարի կամ Անիի գրչության կենտրոնը: Առաջինից անհամեմատ մեծաթիվ ձեռագրեր էին պահպանվել, բայց Անին ինձ ավելի հոգեհարազատ էր, մանավանդ որ արդեն սկսել էի նաև «Հաղբատի Ավետարանի» մանրանկարներով զբաղվել, որոնք եզակի են, որպես քաղաքային միջավայրի ծնունդ և անիական աշխարհիկ արվեստի ազդեցության կրող: Աշխատանքը բավական հետաքրքիր ստացվեց, ներգրավեցի նաև Անիի մերձակա Հոռոմոսի վանքի ձեռագրերը, որոնք նույն մշակութային միջավայրի արգասիք էին: Պաշտպանության համար պարտադիր համարվող 4 գիտական հոդվածի փոխարեն հրատարակեցի 14 հոդված: Բայց պետք է խոստովանեմ, որ դիսերտացիայի պաշտպանությունը ինչ-ինչ պատճառներով բավական ձգձգվեց և իրականացավ միայն 1989 թ. գարնանը:

Հետագայում շարունակեցի Անիի վերաբերյալ ուսումնասիրություններս, անդրադառնալով հիմնականում այն հարցերին, որոնք նախկինում առանձնակի ուշադրության չէին արժանացել: Այս ամբողջն ամփոփվեց մի մենագրության մեջ, որը լույս տեսավ 1997 թ. Ս. Էջմիածնում, Գարեգին Ա կաթողիկոսի հովանավորությամբ[11]:

թվում՝ իմ ու Ավետ Ավետիսյանի հեղինակած «Ավետարանական պատկերներ» գիրքը (Երևան, 1993), նվիրված Տերունական շարքի 12 գլխավոր պատկերներին (թվայնացվածը՝ www.armenianart.org կայքում):

[11] Կ. Մաթևոսյան, Անի. Եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Ս. Էջմիածին, 1997 (թվայնացվածը՝ www.armenianart.org կայքում):

Պետք է նշեմ, որ Հայաստանի անկախության առաջին շրջանը մշակութային առումով հատկանշվեց, պատկերավոր ասած «մամուլի բումով»: Եթե խորհրդային շրջանում թերթերն ու ամսագրերը բացառապես պետական էին, ապա այդ դաշտի ազատականացման շնորհիվ երևան եկան բազմաթիվ նոր պարբերականներ: Դեռ 80-ականներից ես նաև թղթակցում էի տարբեր թերթերի, հիմնականում մշակութային զանազան հրապարակումներով: Այնպես ստացվեց, որ սկսեցի զբաղվել նաև խմբագրական աշխատանքով: 1994-1996 թթ. խմբագրել եմ «Լուսաւորիչ» շաբաթաթերթը, ապա, ինչպես վերը նշեցի, «Քրիստոնեայ Հայաստան» երկշաբաթաթերթը (1997-2000), որից հետո Սյունյաց թեմի նախաձեռնությամբ լույս տեսնող «Գիտելիք» ուսումնակրթական տեղեկատվական քառամսյա հանդեսը (2001): Վերջապես 2002-ին, հենց ինքս նախաձեռնեցի «Հայ արվեստ» մշակութային եռամսյա հանդեսի հրատարակությունը[12]: 2004-ից հանդեսն ընդգրկվել է ՀՀ ԲՈՀ-ի «Ատենախոսությունների արդյունքների տպագրության համար ընդունելի ամսագրերի ցուցակում», իսկ 2005-2007 թթ. պարբերականի համարները հրատարակվել են նաև անգլերենով՝ Շվեյցարահայ միության հովանավորությամբ[13]: Ցավոք, 2008 թ. գարնանից երկրում տիրող բարոյահոգեբանական ծանր մթնոլորտը հանդեսի հրատարակության դադարեցման պատճառ դարձավ:

---

[12] «Հայ արվեստ» հանդեսի հրատարակության համար ստեղծվեց «Ցոթ արվեստ» ՍՊԸ-ն, որի և հանդեսի գործադիր տնօրենը դարձավ պատկերասրահի իմ երկարամյա գործընկեր և բարեկամ Հասմիկ Գինոյանը: Խմբագրությունը գործել է Երևանի կենտրոնում, Հանրապետության 32 հասցեում, «Մոմիկ» միության գրասենյակում: Տարբեր տարիների խմբագրական խորհրդի անդամ են եղել ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանը, Մուրադ Հասրաթյանը, Շահեն Խաչատրյանը, Մարտին Միքայելյանը, Դանիել Երաժիշտը, Սերգեյ Խաչիկօղլյանը և ուրիշներ: Հանդեսը տարածվել է սփյուռքում՝ 14 երկրում, լիազոր ներկայացուցիչների միջոցով: Հրատարակման 7 տարվա ընթացքում «Հայ արվեստը» եղել է Հայաստանի և մասամբ Սփյուռքի մշակութային կյանքի իրադարձություններին արձագանքող հիմնական պարբերականը, հրատարակելով նաև վերլուծական, արվեստագիտական բազմաթիվ հոդվածներ:

[13] Բոլոր համարների թվայնացված օրինակները կարելի է տեսնել www.armenianart.org մշակութային բազմալեզու կայքում, որը ստեղծվել է իմ նախաձեռնությամբ և գործում է 2016 թ. գարնանից:

Աշխատանքային գործունեության այս բազմազանությունը (որի որոշ դրվագներ էլ զանց եմ առնում, ընթերցողի ժամանակը խնայելով), երբեք չեն խոչընդոտել, որ ինձ համար հոգեհարազատ գիտական, հետազոտական աշխատանքով զբաղվեմ:

Պատկերասրահում աշխատանքը թողնելուց և հորս մահից մեկ տարի անց՝ 2005 թ., որպես գիտաշխատող աշխատանքի անցա Մատենադարանում, Հայ մատենագրության բաժնում: Այդ ժամանակ տնօրենն էր ակադեմիկոս Սեն Արևշատյանը: Անհրաժեշտ էր դոկտորական ատենախոսության թեմա ընտրել: Նույն թվականին Ն. Մառի ծննդյան 140 ամյակին նվիրված՝ վաստակաշատ Պարույր Մուրադյանի խմբագրած ժողովածուում տպվեց իմ հոդվածը նվիրված Սամվել Անեցու ժամանակագրության հնագույն ձեռագրերին: Այն ընթերցելուց հետո բաժնի վարիչ Էդվարդ Բաղդասարյանը խորհուրդ տվեց հենց Սամվել Անեցու այդ գործի ուսումնասիրությունը դարձնել դոկտորական ատենախոսության նյութ: Պարույր Մուրադյանն էլ դիպուկ ձևակերպեց վերնագիրը՝ «Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերի աղբյուրագիտական քննություն»: Սկսվեց մի հետաքրքիր աշխատանք. պարզվեց, որ Մատենադարանում և հայերեն ձեռագրերի այլ հավաքածուներում գտնվող ժամանակագրության 70-ից ավելի ձեռագրերի մեջ, բացի հեղինակային բնագրից, կան տարբեր ժամանակ և տարբեր մարդկանց ձեռքով կատարված մեծ ու փոքր հարյուրավոր հավելումներ, լրացումներ, մի խոսքով, առկա է բավական մեծ պատմական, աղբյուրագիտական նյութ, որի ուսումնասիրությունն էլ ծնունդ տվեց այդ թեմայով հետագա տարիներին հրատարակված մի շարք հոդվածների ու գրքերի, իսկ 2008 թ. հուլիսին տեղի ունեցավ ատենախոսության պաշտպանությունը:

Կարելի է ասել, որ այդ տարիները մի տեսակ վերադարձ էին իմ բուն՝ պատմաբանի մասնագիտությանը, սակայն ավելի աղբյուրագիտական և ձեռագրագիտական խորացմամբ: Բարեբախտաբար հնարավորություն ունեցա ուսումնասիրելու Սամվել Անեցու երկի ոչ միայն Մատենադարանում, այլև Վենետիկում, Փարիզում, Սանկտ Պետերբուրգում գտնվող ձեռագրերը, Երուսաղեմից ստացա ձեռագրերի թվային պատճենները: Տարբեր ձեռագրերի ժողովված բնագրերը՝ համապատասխան ուսումնասիրությամբ ու ծանոթագրություններով, լույս

տեսան 2014-ին՝ «Սամուէլ Անեցի և շարունակողներ, Ժամանակագրութիւն» վերնագրով[14]:

2009 թ. Մատենադարանի տնօրեն, բարեհիշատակ Հրաչյա Թամրազյանի առաջարկությամբ զբաղեցրեցի Արվեստի պատմության և գրչության կենտրոնների ուսումնասիրության բաժնի վարիչի պաշտոնը: Նույն թվականին՝ համատեղությամբ դասախոսական աշխատանքի հրավիրվեցի Մանկավարժական համալսարան (իմ հարազատ բուհը)՝ Արվեստի պատմության և տեսության ամբիոն[15], որտեղ, մի քանի տարի անց (2015 թ.) արժանացա պրոֆեսորի կոչման:

Մատենադարանն այսօր հայագիտական աշխատանք կատարելու լավագույն վայրերից մեկն է: Այս եզրահանգման համար այն հիմնավորումն ունեմ, որ 2009-ից սկսած ամեն տարի մեկ կամ երկու գրքի հեղինակ կամ համահեղինակ եմ դարձել (ամբողջական ցանկը՝ սույն գրքի վերջում): Շարունակել եմ աշխատանքներս ոչ միայն պատմական, աղբյուրագիտական, այլև մշակույթի ու արվեստի ուղղություններով: 2012-2014 թթ. տարբեր գիտագործնական ծրագրերի շրջանակում երեք անգամ եղել եմ Արևմտյան Հայաստանում[16]:

2018 թ. մարտին Մատենադարանի տնօրեն Վահան Տեր-Ղևոնդյանի առաջարկով զբաղեցրել եմ գիտական գծով փոխտնօրենի պատվաբեր պաշտոնը: Վարչական աշխատանքն, իհարկե, գիտական գործերի համար ավելի քիչ ժամանակ է թողնում, բայց աշխատանքային այս շրջանն

---

[14] Սամուէլ Անեցի և շարունակողներ, Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ Կարեն Մաթևոսյանի, Երևան, 2014 (թվայնացվածը՝ www.armenianart.org կայքում): Գրքի խմբագիրն է Վահան Տեր-Ղևոնդյանը:

[15] Ամբիոնի վարիչը Մատենադարանի ավագներից՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանի որդի Արա Հակոբյանն էր (այժմ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր):

[16] 2012 թ. ՀՀ Գիտության պետական կոմիտեի «Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի գրչության կենտրոնները 10-15-րդ դդ.» իմ ղեկավարությամբ իրականացվող դրամաշնորհային թեմայի շրջանակում Արևմտյան Հայաստան եմ մեկնել Մատենադարանի իմ երիտասարդ գործընկերներ Լուսինե Թումանյանի և Արուսյակ Թամրազյանի հետ: 2013 և 2014 թթ. ճարտարապետության դոկտոր Արմեն Ղազարյանի հրավերով մասնակցել եմ «Անի համատեքստում» և «Մուշի ու շրջակայքի հայկական հուշարձանները» միջազգային գիտարշավներին:

էլ ավելի շատ հատկանշվում է խմբագրական, գիտակազմակերպչական և այլ ձեռնարկումներով: Հաճելի է տեսնել, որ Մատենադարանում այսօր կա հայագիտությանը նվիրված երիտասարդ սերունդ:

Ուրախ եմ նաև, որ հայագիտական և մանկավարժական գործունեության իմ անցած այս ճանապարհը գնահատվեց բարձրագույն պարգևով՝ 2019-ի դեկտեմբերի 20-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ձեռամբ՝ «Ս. Սահակ, Ս. Մեսրոպ» շքանշանի հանձնումով: Հայագիտական աշխատանքն իմ ընկալմամբ, պարզապես գիտական, հետազոտական գործ չէ, այլ ծառայություն և նվիրում: Աշխատանքը բերկրանք է, երբ զբաղվում ես սիրելի գործով:

Ի լրումն ասվածի. այս աշխատությունը գրվել է 2020 թ. ապրիլի 23-ից մայիսի 20-ը ընկած ժամանակահատվածում, երբ հայտնի համավարակի պատճառով ստիպված էինք աշխատավայր չգնալ և մնալ տանը: Այդ ակամա պարապուրդի առաջին ամսվա ընթացքում չեմ կարողացել գրել ոչ մի տող, հետո որոշեցի այս գաղափարը կյանքի կոչել, որի շուրջ մտածել էի նախկինում: Չգիտեմ, թե ինչպես է ստացվել, ընթերցողներն այդ մասին կդատեն: Մինչև տպագրությունը, առաջին ընթերցողը եղել է իմ տիկինը՝ Ժաննա Մաթևոսյանը, երկրորդն իմ ասպիրանտ, այժմ՝ պատմական գիտությունների թեկնածու՝ Լուսինե Թումանյանը: Գիրքը ձևավորել է իմ վաղեմի բարեկամ Տիգրան Ապիկյանը:

Հրապարակված լուսանկարների մեծագույն մասն իմ նկարածն է, Աղթամարի պատկերաքանդակների լուսանկարների համար խորին շնորհակալություն եմ հայտնում Հրայր Բազէ Խաչերեանին:

Գրքի տպագրությունը հովանավորելու համար երախտապարտ եմ Ս. Էջմիածնի ճեմարանի իմ նախկին սաներին, մասնավորապես՝ 1995 թվականի շրջանավարտներին, ովքեր այժմ իրենց եկեղեցանվեր և ազգօգուտ հոգևոր ծառայությունն են կատարում Հայաստանում և սփյուռքում:

ԱՐՈՒԾ

Իմ գիտական գործունեությունը սկսվել է Հայաստանի հնագույն բնակավայրերից մեկի՝ Արուճի հուշարձանների ուսումնասիրությամբ, մի վայր, որն ինձ քաջածանոթ էր դեռ պատանեկան տարիներից[17]: Առաջին հոդվածս Արուճի որմնանկարի մասին էր (1981 թ.), առաջին գիրքը՝ ողջ հուշարձանախմբի, որը լույս տեսավ 1987 թ.[18]:

ՀՀ Արագածոտնի մարզում, Երևանից 42 կմ արևմուտք, Երևան-Գյումրի մայրուղու ձախ կողմում գտնվող Արուճը պատմական հարուստ անցյալ և միջնադարյան արժեքավոր հուշարձաններ ունեցող բնակավայր է: Արուճի համալիրը բացառիկ է պաշտամունքային և աշխարհիկ կառույցների բազմազանությամբ: Այստեղ կարելի է տեսնել միջնադարյան հայ կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող տարաբնույթ ճարտարապետական կառույցներ՝ եկեղեցիներ, որոնցից մեկը 4-5-րդ դդ. բազիլիկն է, մյուսը 662-666 թթ. կառուցված մեծադիր, որմնանկարազարդ Կաթողիկեն (գրականության մեջ կոչվում է նաև Ս. Գրիգոր)[19],

---

[17] Արուճում է անցել իմ երջանկահիշատակ հոր՝ Արտաշես Մաթևոսյանի կյանքը՝ 12 տարեկանից, մինչև 1950-ականների սկզբին Երևան տեղափոխվելը: Այդտեղ նա իր հորեղբայր Սարո Հարությունյանի որդեգիրն է եղել: Վերջինիս կրտսեր որդու՝ Հրաչ Հարությունյանի տունը հարազատ վայր էր նաև ինձ համար: Դեռ դպրոցական տարիներին ամառային արձակուրդներն անց եմ կացրել Արուճում, իմ հորեղբոր որդիների՝ Հարությունի, Մաթևոսի և Վարդգեսի հետ:

[18] Կ. Մաթևոսյան, Արուճ (ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և մշակույթի հուշարձանների պահպ. և օգտ. գլխավոր վարչություն), Երևան, «Հայաստան», 1987:

[19] Արուճի տաճարի անվան հարցում գրականության մեջ առկա է մի թյուրիմացություն: 20-րդ դ. սկզբին եկեղեցուն անդրադարձող հեղինակներից ոմանք այն կոչել են Ս. Գրիգոր, որը ժամանակի ընթացքում լայն տարածում է գտել: Մինչդեռ տաճարի հիմնարկեքի արձանագրության մեջ Գրիգոր Սամիկոնյանն այն անվանում է Կաթողիկե: Եկեղեցին այդպես է կոչվում նաև 973 թ. վիմագրում և պատմիչների երկերում:

1. Արուճի Կաթողիկե եկեղեցին (լսնկ. 1980-ական թթ.):

իսկ 19-րդ դարում գյուղի կենտրոնում կառուցվել է մեկ այլ եկեղեցի («Ժամ», ինչպես տեղացիներն են կոչում), վաղ միջնադարյան քանդակազարդ քառակող կոթողներ, զարդաքանդակ խոյակներ, 10-11-րդ դդ. բազմաթիվ խաչքարեր և այլն: Արուճի աշխարհիկ ճարտարապետության կառույցներից են 7-րդ դ. իշխանական պալատը, որի զարդն է գահասրահը՝ երկու հսկա խոյակներով, բնակավայրի հարավում գտնվող պաշտպանական համակարգերը, տարբեր դարաշրջանների պարիսպներով, բուրգերով ու միջնաբերդով, հյուսիսային կողմում գտնվող քարավանատունը՝ որպես առևտրատնտեսական կառույց:

Բնակավայրի պատմության ամենաածաղկուն շրջանը կապված է Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի (661-685 թթ.) անվան հետ, որը շուրջ քառորդ դար երկրի փաստական տերն էր, և որի աթոռանիստը՝ փաստացի երկրի վարչական կենտրոնը, Արուճում էր: Այստեղ նա հին բազիլիկ եկեղեցու մոտ կառուցում է մի փառահեղ տաճար՝ Կաթողիկեն (գմբեթավոր դահլիճի տիպի հայկական ամենամեծ եկեղեցին), այնուհետև նրա հարևանությամբ հիմնում է շքեղ պալատ (նկ. 1, 2), հզոր պարիսպներով շրջափակում է ողջ ավանը (այս մասին հայտնում են պատ-

2. Արուճի եկեղեցին հարավից և պալատի գահասրահը՝ զույգ խոյակներով և նրանց միջև՝ գահի պատվանդանով:

միչներ Ղևոնդն ու Հովհաննես Դրասխանակերտցին):

Դվին-Անի առևտրական մայրուղու կենտրոնական մասում գտնվող Արուճը երկրորդ ծաղկման շրջան է ապրում Բագրատունիների և Զաքարյանների վերելքի ժամանակ, որի վկայություններից մեկը բնակավայրի մոտ կառուցված քարավանատունն է (նկ. 3): Խաղողի ու ծիրանի այգիներից հիմնականում զուրկ Շիրակի բնակչության համար Արուճը բերքառատ մի այգեստան է եղել, և պատահական չէ, որ Անիի, Հոռոմոսի և Հառիճի վանքերի նվիրատվական արձանագրություններում հիշատակվում են Արուճում գտնվող 14 այգի՝ հատուկ անուններով[20]: Վերջերս հրատարակված Շիրակի վիմագրերի հատորում հիշատակվում է Արուճի այգիներից ևս մեկը, որը նվիրաբերվել է Լմբատավանքին[21]: Կարելի է

[20] Այդ անուններն են՝ 1. Սաղար, 2. Շլիկ, 3. Կովարած, 4. Բլար Խաչկա, 5. Խաչկանց, 6. Մազոտն, 7. Եկեղեցպանի, 8. Քոշուտի, 9. Լապստակաց, 10. Առյուծական, 11. Աղպետենց, 12. Հանկանի, 13. Թուխայրեաց, 14. Խաչեղբայրենց (Կ. Մաթևոսյան, Արուճ, էջ 34):

[21] 13-րդ դարի նվիրատուն (անունը չի պահպանվել) նշում է. «ՏՈՒԱՔ Ի ՎԱՆՔՍ ԱՅԳԻ ՅԱՐՈՒՃ՝ ԶԳՈՄԴՈՒԱՆ...» (Դիվան հայ վիմագրության, պրակ X, Շիրակի

3. Արուճի քարավանատունը (11-րդ դ.):

ասել, որ մեկ վայրում գտնվող և հատուկ անուններ ունեցող այսքան մեծաթիվ այգիների հիշատակությունը վիմագրության մեջ հազվադեպ երևույթ է: Ուշագրավ է, որ Արուճում սովորություն է եղել խաչքարեր դնել տների բակերում և այգիներում, որի վկայությունն են ինչպես բուն բնակավայրում, այնպես էլ նրա շուրջը գտնվող, հիմնականում 11-րդ դարին վերաբերող բազմաթիվ խաչքարերը[22]:

Թեպետ Արուճի հուշարձանախումբը բավարար չափով ուսումնասիրված էր, սակայն նրան նվիրված իմ գրքում հնարավոր եղավ մի քանի նոր տեսակետներ առաջ քաշել: Էական նորություններից մեկը վե-

մարզ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 2017, էջ 74): Կարծում ենք, որ այգու անունն «անասնագոմ» իմաստն ունի, ծագում է դուար-տուար-տավար բառից (Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Երևան, 1926, էջ 424, 681): Արուճի մի այգի հիշատակվում է նաև Հոռոմոսի 1287 թ. վիմագրում՝ Ջամլին անունով (Horomos monastery: Art and History, Paris, 2015, p. 481, տպված է «Ջալլին»):

22 ԵՊՀ արվեստաբանության ամբիոնում մի քանի տարի առաջ «Արուճի խաչքարերը» թեմայով մագիստրոսական արժեքավոր թեզ է պաշտպանել Ռոզա Հարությունյանը:

4. Բազիլիկ կառույցը գլխավոր մուտքից:

ռաբերում էր Արուճի հնագույն բազիլիկ եկեղեցուն[23]: Բանն այն է, որ Արուճի պալատի 1950–52 թթ. պեղումներից հետո երևան եկած այս կա–

[23] Բազիլիկը գտնվում է Կաթողիկե տաճարից 47 մ հարավ–արևելք: Այն ներքուստ 18,7x10,6 մ մեծությամբ եռանավ բազիլիկ շինություն է, ձգված արևմուտքից արևելք: Ունի երկաստիճան գետնախարիսխ, որը հատուկ է միայն եկեղեցական շենքերին: Կառույցն ունի երկու մուտք՝ արևմուտքից և հյուսիսից: Հետագայում՝ շենքի վերակառուցման և ամրոցի վերածման ժամանակ, մուտք է բացվել նաև արևելքից: Կիսականգուն վիճակում պահպանվել են շինության բոլոր չորս պատերը 2,5–3 մ բարձրությամբ: Պատերի համար արտաքինից օգտագործված են համեմատաբար մեծ սրբատաշ քարեր՝ մեկը արևմտյան պատի մեջ է (3,4x0,7 մ), մյուսը հյուսիսային պատի (3,5x0,7 մ): Այս քարի վրա պահպանվել է շրջագծի մեջ փորագրված հավասարաթև խաչաքանդակ (տրամագիծը 46 սմ) և մի քայքայված եռատող՝ հին տառաձևերով արձանագրություն, որից ընթեռնելի են առանձին տառեր և բառեր՝ այդ թվում Քրիստոսի անվան փակագիրը: Հյուսիսային պատի այս հատվածում մեկ այլ քարի վրա կա ևս մի խաչաքանդակ: Բազիլիկի քարերի վրա չկան վարպետների նշաններ, որպիսիք առկա են Կաթողիկեի պատերին և մեկը՝ պալատի քարին:

ռույցը համարվել է Գրիգոր Մամիկոնյանի պալատի մի մասնաշենք: 1953 թ. Արուճի պալատի պեղումների արդյունքների մասին հանգամանալից հոդվածով հանդես է եկել պեղումների ղեկավար Վարազդատ Հարությունյանը, որը ոչ միայն նկարագրել է բացված շինությունները, այլև կատարել համապատասխան մեկնաբանություններ ու եզրակացություններ[24]: Պեղումների շնորհիվ Արուճի տաճարից հարավ և հարավ-արևելք բացվեցին առանձին երկու խոշոր շինություններ, ինչպես նաև մատուռի ավերակներ: Վ. Հարությունյանը մեծ շինություններից մեկը պայմանականորեն կոչել է առաջին դահլիճ, երկրորդը՝ աշխարհիկ շենք՝ սյունազարդ դահլիճով:

«Առաջին դահլիճ» անվանված բազիլիկ շինության որոշ մանրամասներ նրան հիշեցրել են եկեղեցական կառույց (նկ. 4), սակայն որոշ փաստարկներ նշելով ի վերջո այն եզրակացությանն է եկել, որ դա աշխարհիկ կառույց է[25]: Փաստորեն հուշարձանը պեղող հեղինակավոր մասնագետն շինությունը համարել էր պալատական առանձին դահլիճ, որը հետագայում (ուշ միջնադար) վերածվել է փոքրիկ ամրոցի: Իհարկե, շատ հեշտ էր այս տեսակետին համաձայնել ու անցնել առաջ, սակայն այդ ժամանակ ես տարված էի հայկական միջնադարյան ճարտարապետությանը նվիրված զանազան աշխատությունների ընթերցանությամբ և տոգորված սկսնակ հետազոտողին հատուկ հետաքրքրասիրությամբ: Հատկապես տպավորված էի Ալ. Սահինյանի «Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը» (Երևան, 1955) գրքով, որտեղ համեմատական

---

[24] Վ. Հարությունյան, 7-րդ. դարի աշխարհիկ ճարտարապետության մի նոր հուշարձան, ՀՍՍՀ ԳԱ, Տեղեկագիր, 1953, N 8:

[25] Վ. Հարությունյանը գրում է. «Դահլիճը, որի հատակագծի կոմպոզիցիան բազիլիկային է, գուցե մի պահ ենթադրել տա, որ այն եկեղեցի է եղել: Նույնիսկ հյուսիսային պատի վրա դրսից (հյուսիս-արևմտյան անկյան մոտ) փորագրված են շրջագծի մեջ ամփոփված հավասարաթև երկու խաչ: Սրանց մոտ կա նաև մի փոքր արձանագրություն, որը խիստ եղծված լինելու պատճառով դեռ չի հաջողվել վերծանել: Սակայն... դահլիճի արևելյան կողմում, դրսի կողմից պատը պահպանվել է այնպես, որ խորանների կամ բեմի մասին որևէ խոսք լինել չի կարող: Նշանակում է արևելյան պատը սկզբից կառուցվել է այդպես, ինչպես պահպանվել է, և ոչ մի վերակառուցման չի ենթարկվել: Ավելի ուշ ժամանակ դրսի կողմից կցել են նոր պատեր և անկյուններում՝ բուրգեր»: Նույն տեղում, էջ 58:

5. Որմնամույթը բազիլիկ կառույցի անկյունում:

քննությամբ ներկայացվում էր նաև այլ բազիլիկ կառույցներում կիրառված մոդուլային սկզբունքը և այլն: Արուճի, այսպես կոչված «Առաջին դահլիճում», իմ ուշադրությունը գրավեց շինության հյուսիսարևելյան անկյունում որմնամույթի առկայությունը (նկ. 5): Ընդհանրապես, բազիլիկ շենքի որմնամույթը (այսինքն պատին կից սյունը), ոչ մի կոնստրուկտիվ դեր չի կարող ունենալ կառույցի անկյունում, ուրեմն ինչու պիտի այդպես վարվեին: Քանի որ շինության պատերը ամբողջ պարագծով կիսաքանդ են, այսինքն վերին մասից բաց են, հնարավոր եղավ տեսնել, որ արևելյան կողմում նույնպես եղել են հատակագծում խաչաձև երկու մույթեր, որոնք պատի վերակառուցումից հետո մնացել են պատի մեջ: Այսինքն, ինչպես որ շինության մյուս 2 զույգ՝ առանձին կանգնած խաչաձև հատակագծով մույթերն են, որոնց կից պատերին կան որմնամույթեր (դրանց միջոցով է գոյանում ծածկի կամարը), այնպես էլ եղել է մույթերի 3-րդ զույգը, բայց քանի որ շենքը կրճատել են արևելյան կողմից, այդ մույթերը մնացել են նոր պատի մեջ: Սա նշանակում էր, որ շինությունն սկզբնապես ունեցել է 3 զույգ մույթ, և որ արևելյան կողմում խորան չկա, քանի որ այդտեղ պատը առաջ է բերվել ու վերաշարվել մույթերի 3-րդ զույգի հավասարությամբ: Այս հանգամանքները,

6. Հավասարաթև խաչ բազիլիկի հյուսիսային պատին:

նաև գետնախարսխի ու պատերին եղած հնագույն խաչաքանդակների առկայությունը (նկ. 6) նկատի ունենալով, ենթադրել եմ, որ կառույցը Արուճի հնագույն բազիլիկ եկեղեցին է եղել:

Իմ այս դիտարկումները հենց տեղում ներկայացրեցի գրքիս խմբագրին, ճարտարապետության դոկտոր Մուրադ Հասրաթյանին: Նա դրանք միանգամայն համոզիչ համարեց ու միաժամանակ զարմացած էր, որ այդ բանը չի նկատվել պեղումների շրջանում և առաջարկեց, որ իմ գրքում շատ մեղմ ձևակերպմամբ այդ բանը ներկայացվի: Բնականաբար, այդպես էլ արվեց, միաժամանակ նշեցի, որ «շինության արևելյան կողմի հետագա պեղումները միայն վերջնական լուծում կտան խնդրին»[26]:

Երեք զույգ մույթերի առկայության փաստն ընդունելով հանդերձ (ինձ համարելով դրա «հայտնաբերող»), ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանը չընդունեց շինության՝ ժամանակին բազիլիկ եկեղեցի լինելու վերաբերյալ ենթադրությունը[27] (ի դեպ, նրա հետ ես բարեկամա-

[26] Կ. Մաթևոսյան, Արուճ, էջ 68-70:

[27] Վ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 170: Տես նաև Հայկական ճարտարապետության պատմություն, հ. 6, Երևան, 2002, էջ 69: 2005-ին Հուշարձանների պահպանության գործակալությունը Արտյոմ Գրիգորյանի գլխավորությամբ արտագնա նիստ գումարեց Արուճում (Վ. Հարությունյանի ու իմ մասնակցությամբ), որտեղ որոշվեց բազիլիկի արևելյան մասում պեղումներ անել հարցի վերջնական ճշտման համար: Իմ առաջարկությունն էր, որ շինության արևելյան մասում ուշ միջնադարում կցակառուցված բուրգերի միջի հողը հանվի, եթե պարզվի, որ գետնախարիսխը շարունակվել է դեպի արևելք, ապա կհաստատվի շենքի կրճատման փաստը:

7. Բազիլիկի շարունակվող գետնախարիսխը:

8. Բազիլիկի արևելյան պատը՝ դրված նախկին կառույցի սալահատակի վրա:

կան հարաբերություններ եմ ունեցել):

2006 թ. Հուշարձանների պահպանության գործակալության նախաձեռնությամբ տեղի ունեցան բազիլիկ կառույցի շրջակայքի մաքրման աշխատանքներ, որոնք վերածվեցին պեղումների (ղեկավար՝ Գագիկ Մ.

9. Բազիլիկ եկեղեցու խորանի հատվածը:

Սարգսյան): Դրանց արդյունքում լիովին հաստատվեց, որ շինությունը նախկինում եղել է բազիլիկ եկեղեցի: Կառույցի արևելյան բուրգերի միջի հողը դուրս բերելուց հետո պարզվեց, որ այստեղ ոչ միայն շարունակվում է երկայնական պատերի գետնախարիսխը (նկ. 7), այլև արևելյան պատը կառուցված է նախնական կառույցի սալահատակի վրա (նկ. 8): Այսինքն, միանշանակ պարզ դարձավ, որ շինությունը եղել է եռանավ բազիլիկ, որն արևելյան կողմից կրճատվել է, և մույթերի երրորդ զույգը մնացել է արևելյան պատի մեջ: Կառույցն ունեցել է արտաքինից բազմանիստ խորան, ինչպես 4–5-րդ դդ. եկեղեցիներից շատերը: Հյուսիսկողմյան բուրգի մեջ գտնվել է խորանի արտաքին պատի երկնիստ քարերից մեկը: Իսկ խորանի հատվածում ժայռը փորված է խորանի կիսաշրջանին համապատասխան (նկ. 9): Պեղումներից հայտնաբերվեցին նաև պատուհանների պսակների և քիվերի հնագույն եկեղեցիներին հատուկ օղակաձև զարդաշարով հարդարված բազմաթիվ քարեր, ինչպես նաև քառանիստ կոթողի քանդակազարդ խոյակ (նկ. 10)[28]:

[28] Պեղումների արդյունքների մասին հրապարակմամբ հանդես է եկել Գ. Մ. Սարգսյանը: Նա կարծում է, որ Արուճի բազիլիկ եկեղեցին կառուցված է եղել հեթանոսական տաճարի տեղում, այնուհետև վերակառուցվել է երեք անգամ: Առաջին վերակառուցմամբ դարձել է քրիստոնեական տաճար (4-րդ դ.), երկրորդ վերա-

Այսպիսով, 2006 թ. պեղումները հաստատեցին, որ նախկինում պալատի մաս համարված բազիլիկ կառույցը իրականում բնակավայրի 4–5-րդ դդ. բազիլիկ եկեղեցին է, որը հավանաբար 7-րդ դ. երկրորդ կեսին, հենց Գրիգոր Մամիկոնյանի ժամանակ ծավալված շինարարության ընթացքում, վերակառուցման ենթարկվելով, կրճատվել է արևելյան կողմից և հավանորեն ծառայել է աշխարհական նպատակների համար, թերևս հենց պալատական համալիրի կազմում: Այն, որ այդ վերակառուցումը կատարվել է շինարարական մեծ հմտությամբ, հուշում է, որ այդպիսի ձեռնարկի հեղինակները հմուտ վարպետներ էին, որպիսիք կարող էին լինել հենց Կաթողիկե եկեղեցին ու պալատը կառուցողները: Միևնույն ժամանակ, եկեղեցու այդ կարգի ձևափոխման համար անհրաժեշտ էր բարձրագույն արտոնություն ունենալ, ինչպիսին կարող էր լինել իշխանի հրամանը[29]: Ինչևէ, այժմ կառույցն այցելուներին է ներկայանում վերակառուցման մի քանի շերտերը ներկայացնող տեսքով[30]:

Ինչո՞ւ ներկայացրեցի այս պատմությունը: Առաջին հերթին ցույց տալու համար, որ գիտական վարկածի առաջ քաշումից (1987) մինչև հարցի լուծումը (2006) անցել էր 19 տարի: Բայց դա երևի այնքան էլ վատ չէ, եթե նկատի ունենանք, որ նույն «Արուճ» գրքում պալատի վերաբերյալ

կառուցումը եղել է Գրիգոր Մամիկոնյանի կողմից մեծ տաճարի և պալատի կառուցումից հետո, երբ արդեն խարխլված բազիլիկը արևելյան կողմից կրճատվել է մույթերի երրորդ զույգի հատվածից և վերածվել պալատի սրահի (7-րդ դ. 60–70-ական թթ.), երրորդ վերակառուցմամբ 15–16-րդ դդ. համալրվել է նոր հաստ պատերով ու բուրգերով և դարձել ամրոց (Գ. Սարգսյան, Արուճի բազիլիկի հնագիտական հետազոտությունը, «Հայ արվեստ», 2007, թիվ 1, էջ 34–37):

29 Վ. Հարությունյանը բազիլիկ կառույցի՝ եկեղեցի լինելու մասին իմ տեսակետը մերժելիս, վկայակոչում է պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու հայտնած այն տեղեկությունը, ըստ որի Գրիգոր Մամիկոնյանն իր արքունիքը դրել է ձորի եզրին, որտեղ աղբյուր է բխում: Բազիլիկն իրոք, համալիրի կառույցների մեջ ամենից մոտն է ձորին (Վանքաձոր): Բայց եթե Դրասխանակերտցին այդ կառույցը համարել է պալատի մաս, ապա այդտեղ տարօրինակ ոչինչ չկա, քանի որ նրա ժամանակ՝ 10-րդ դ., շինությունն արդեն խորան չուներ, կրճատված էր արևելյան կողմից և կարող էր համարվել պալատական համալիրի մի մաս:

30 Տես նաև՝ Կ. Մաթևոսյան, Արուճի հնագոյն բազիլիկ եկեղեցին, «Հանդէս ամսօրեայ», 2010, էջ 198–211:

10. 2006 թ. պեղումներից գտնված խոյակ և այլ մանրամասներ:

արված մեկ այլ կարևոր դիտարկում անարձագանք է մնացել մինչև օրս:

Այստեղ նորից նշեմ, որ ներկա գրքի գրության նպատակն էլ՝ այդպիսի, ստվերում մնացած կամ դեռևս մասնագիտական պարբերականներում չհրատարակված հարցերի, տեսակետների ու ենթադրությունների ներկայացումն է, այն հույսով, որ դրանք օրերից մի օր լուծում կստանան կամ փորձաքննություն կանցնեն, ինչպես որ դա տեղի ունեցավ Արուճի բազիլիկի դեպքում:

Պալատի գահասրահի մուտքի տեղը 1950-ականների պեղումների ժամանակ չի հայտնաբերվել կամ որոշվել: Զարմանալիորեն ուշադրությունից դուրս է մնացել կենտրոնական սրահի արևելյան չորս սյուների կենտրոնում գտնվող տուֆից պատրաստված հսկա ուղղանկյուն քարը (2,30 x 1,65 x 0,40 մ): Դրա վերին հարթության վրա արված է դարձյալ ուղղանկյունաձև փոսորակ (1,40 x 0,85 մ): Այս խոշոր տափարակ քարը իշխանական գահավորակի պատվանդանն է (գծ. 1, 5) (այդպիսի պատվանդանի հիմք պահպանվել է նաև Դվինի պալատում): Նրա դիրքը հուշում է, որ գահասրահի մուտքը եղել է հանդիպակաց կողմից (գծ. 1, 6), Կաթողիկե եկեղեցու արևմտյան պատի եզրագծի շարունակությամբ կառուցված պալատի արևմտյան պատի վրա: Այս մասում, ցավոք, պե-



1. Կաթողիկե եկեղեցի
2. Մատուռ
3. Հուշակոթողի ստիլոբատ
4. Գրիգոր Մամիկոնյանի պալատը
5. Գահավորակի պատվանդանը
6. Գահասրահի ենթադրյալ մուտքը
7. Հուշակոթողի ստիլոբատ
8. Մատուռ
9. Բազիլիկ եկեղեցի (5-րդ դ.)
10. Բազիլիկի խորանի 7-րդ դարում կրճատված մասը

Գծ. 1. Արուճի եկեղեցական և պալատական համալիրը:

ղումները չեն շարունակվել, բայց մեծ է հավանականությունը, որ ընդամենը 7-8 մետր դեպի արևմուտք հողի շերտը մաքրելուց հետո կբացվի պալատի արևմտյան պատը և գահասրահի մուտքի հատվածը:

Արուճի հուշարձանախմբի՝ պեղումներից հետո կազմված հատակագիծը որոշ թերություններ ունի (նշված չի գահասրահի գահի պատվանդանը և այլն)[31]: Հետաքրքրական է, որ Կաթողիկեի գմբեթի կենտրոնը և գահասրահի իշխանական գահավորակի պատվանդանը գտնվում են նույն հորիզոնական գծի վրա (հին գծագրում որոշ շեղում կա): Հատակագիծը որոշ ճշգրտումներով ու լրացումներով հրատարակել եմ 2010 թ. (գծ. 1)[32]:

Ավելացնեմ, որ բազիլիկի մասին իմ տեսակետը հաշվի առնելով,

---

[31] Վ. Հարությունյան, 7-րդ. դարի աշխարհիկ ճարտարապետության մի նոր հուշարձան, էջ 56: Որոշ լրացումներ արվել են իմ «Արուճ» գրքի հրատարակությունից հետո, տես Հայկական ճարտարապետության պատմություն, հ. 6, էջ 70:

[32] Լրացված հատակագծում ճշգրտված է նաև բազիլիկի արևելյան հատվածը՝ խորանի վերակազմված մասով (գծ. 1, 10), ավելացված են Կաթողիկեի հարավային պատակից, հավանաբար 10-11-րդ դդ. կառուցված փոքր մատուռը, որի հիմնաքարերն են պահպանվել (գծ. 1, 2), Կաթողիկեի հարավարևելյան անկյան մոտ գտնվող հուշասյան ստիլոբատի բավական մեծ հիմքը (գծ. 1, 3) և այլն: Կ. Մաթևոսեան, Արուճի հնագոյն բազիլիկ եկեղեցին, էջ 210-211:

11. Պալատի գահասրահը արևելքից (մուտքը պետք է լինի արևմուտքից):

Արուճի համալիրի կառույցների եռաչափ վերականգնման փորձ է կատարել ճարտարապետ Արեգ Հասրաթյանը[33]:

ԻՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՆԵԼ ԱՐՈՒՃՈՒՄ

1. Հնագիտական տեսակետից հետաքրքիր և հնարավոր է, որ գտածոների (օրինակ՝ քանդակազարդ մանրամասների) հայտնաբերման առումով արդյունավետ լինի իշխանական պալատի գահասրահի մուտքի բացումը: Ինչպես վերևում նշվեց, պեղումների ժամանակ չեն կարողացել որոշել, թե որ կողմից է եղել մուտքը: Սակայն այժմ պարզ է, քանի որ գահի պատվանդանը արևելյան կողմում է, մուտքը պետք է եղած լինի արևմտյան կողմից, որտեղից ներս մտնելով պիտի մոտենային գահակալին (նկ. 11): Պարզ է նաև, որ Արուճի տաճարի և պալատի կառուցումն իրականացվել է ճարտարապետական նույն մտահղացմամբ, և արևմտյան կողմից դրանք նույն հավասարության վրա են (գծ. 1): Ցավոք 1950-ականների պեղումների ժամանակ գահասրահի արևմտյան կողմում սյուների առաջին զույգից դեպի արևմուտք բավական չափով չեն խորացել, որպեսզի հասնեին մուտքին: Քանի որ երկայնական ուղղությամբ սյուների հե-

[33] Ա. Հասրաթյան, Արուճի վաղքրիստոնեական համալիրը, Երևան, 2010:

12. Գահասրահի արևմտյան խարիսխը, որից արևելք պետք է լինի պալատի արևմտյան պատը:

ռավորությունն իրարից (կենտրոնից կենտրոն) 7,5 մ է[34], շենքի արևմտյան պատը մուտքով հանդերձ պետք է լինի սյուների արևմտյան զույգից հաշված առնվազն 8–9 մ հեռու (դեպի արևմուտք) (նկ. 12, 13): Բայց այստեղ այժմ կա մի դժվարություն: Բանն այն է, որ հնավայրի պարսպապատ եզրը անցնում է հենց այդ մասով, որից այն կողմ գյուղի բնակիչներից մեկի տնամերձ հողամասն է: Անհրաժեշտ է գյուղապետարանի և տնամերձի տիրոջ համաձայնությամբ, վերջինիս հողային փոխհատուցմամբ, հնավայրին կից տարածքը մեծացնել դեպի արևմուտք (առնվազն 10 մ), որից հետո հնարավոր կլինի իրականացնել այդ հատվածի պեղումը:

Պալատի և Կաթողիկե եկեղեցու շրջակայքում նույնպես կարելի է տեղային որոշ պեղումներ անել (մասնավորապես՝ գահասրահի ու բազիլիկի միջև եղած հատվածում) և հասնել «7–րդ դարի գետնին»: Կարծում եմ, որ նոր հայտնագործությունների պակաս չի լինի:

2. Արուճի 7–րդ դ. բերդը պետք է պատշաճ տեսքի բերվի, վերականգնվի: 1980–81 թթ. պեղված հարավային պատը ժամանակին չամրացվելով և անուշադ-

13. Պալատի արևմտյան հիմնապատի հատված, որի ուղղությամբ պետք է լինի գահասարի մուտքը:

[34] Տես Վ. Հարությունյան, 7–րդ. դարի աշխարհիկ ճարտարապետության մի նոր հուշարձան, էջ 60:

14,15. Բերդավանի հնագույն պարսպի կիսաքանդ հատվածները:

16.

17.

16, 17, 18. Բագրատունյաց շրջանի բերդի մուտքի քանդվելը 2000–2014 թթ.:

ության մատնվելով այժմ կիսաքանդ է դարձել (նկ. 14, 15)[35]: Առանձնակի հնագիտական հետազոտման կարիք ունի Աղբյուրի ձորի եզրին գտնվող հին բերդի այն հատվածը, որը վերակառուցվել է Բագրատունիների ժամանակ և պայմանականորեն կարելի է անվանել միջնաբերդ: Նրա կամարակապ մուտքը աստիճանաբար քանդվել ու փլվել է բառացիորեն մեր աչքի առաջ՝ վերջին 15 տարում: Այն անհրաժեշտ է վերականգնել հնարավորինս շուտ (նկ. 16, 17, 18):

3. Արուճի հին բնակավայրի կենտրոնը՝ պարսպապատ բնակելի թաղամասը (գծ. 2), որի մեծ մասն այժմ բարեբախտաբար գյուղացիների տներով կառուցապատված չէ, դեռևս չի պեղվել: Կարծում եմ, որ նրա ամբողջական հնագիտական ուսումնասիրությունից հետո հնա-

[35] Արուճի հին բերդի պեղումներն իրականացվել են ԵՊՀ հայագիտական կենտրոնի հնագիտական արշավախմբի կողմից՝ Բ. Սադոյանի ղեկավարությամբ (տես Բ. Սադոյան, Արուճի վաղ միջնադարյան հուշարձանները, Պատմաբանասիրական հանդես, 1985, թիվ 4, էջ 162–164): Արուճի բերդը հյուսիսից հարավ ձգված ուղղանկյուն հատակագծով պաշտպանական համակարգ է, որի արևմտյան (ձորեզրյա) և հարավային պատերն այժմ մաքրված են հողածածկույթից: Այստեղ, լրիվ կամ կիսով չափ, բացվել են 1,8 – 2 մ հաստությամբ պարսպի և քառակուսի հատակագծով վեց բուրգի (ներքուստ 4x4 մ) հիմնապատերը, որոնք շարված են սրբատաշ տուֆի շուրջ 1,20 մ երկարությամբ խոշոր քարերով:

ռավոր կլինի հստակ պատկերացում կազմել միջնադարյան աղբյուրներում «ավան», «գյուղաքաղաք» կամ «քաղաքագյուղ» կոչվող այս բնակավայրի մասին:



Գծ. 2 Արուճի պարսպապատ բերդավանի հատակագիծը (հեղ. Բ. Սադոյան):

4. Վերականգնման կարիք ունի Արուճի 19-րդ դ. եկեղեցին, որը խորհրդային շրջանում «սովխոզի պահեստ» լինելուց ազատվելով ու հուշարձանների գործակալությանը անցնելուց հետո, այժմ հայտնվել է կիսավեր վիճակում և ամբողջովին քանդվելու իրական վտանգի առջև է: Վերականգնումից հետո այդ շենքը կարող է վերածվել երկրագիտական թանգարանի:

Վերջում նշեմ, որ չնայած Արուճի հուշարձանախմբի ունեցած բացառիկ պատմամշակութային արժեքին, այն առայժմ պատշաճ հոգատարության և պահպանության չի արժանանում: Մինչդեռ Արուճի հնավայրը ոչ միայն գիտական առումով է ուշագրավ, այլև գրավիչ է զբոսաշրջության տեսակետից, ճանապարհային շահեկան դիրքի և տարբեր դարաշրջանների պատկանող բազմազան հուշարձանների առկայության շնորհիվ: Մեր երկրում ամեն տեղ չէ, որ այդքան փոքր տարածքում հնարավոր է տեսնել միջնադարյան Հայաստանի կյանքի տարբեր ոլորտներն արտացոլող ճարտարապետության հուշարձաններ՝ եկեղեցիներ (4-5-րդ, 7-րդ և 19-րդ դդ.), որոնցից Կաթողիկեն բացառիկ է նաև համեմատաբար լավ պահպանված որմնանկարներով, պալատական համալիր, որի զարդն է գահասրահը երկու հսկա խոյակներով, պաշտպանական համակարգեր՝ տարբեր դարաշրջանի պարիսպներով ու միջնաբերդով, առևտրատնտեսական կառույց՝ որպիսին է քարավանատունը, վերջապես վաղ միջնադարյան քառակող կոթողներ, քանդակազարդ խարիսխներ ու խոյակներ, 10-11-րդ դդ. բազմաթիվ խաչքարեր և այլն: Այս ամենն այժմ միայն մի բանի կարիք ունեն՝ պատշաճ պահպանության:

ՀԱՎՈՒՑ ԹԱՌ

2012 թ. լույս տեսավ իմ «Հավուց թառի վանքը» գիրքը[36]: Ինչից սկսվեց հետաքրքրությունս այդ վանքի պատմության նկատմամբ, թող զարմանալի չթվա՝ մեկ այլ վանքի՝ Կեչառիսի պատմությունից:

Նախապատմությունը հետևյալն է. Կեչառիսի վանքը, որտեղ վերականգնման մեծածավալ աշխատանքներ էին կատարվել դեռևս խորհրդային տարիներին, վերջնական նորոգման ենթարկվեց և բարեկարգվեց բարերար Վլադիմիր Հարությունյանի միջոցներով, որից հետո Գարեգին Բ Հայոց կաթողիկոսի ձեռամբ վերաօծվեց վանքի գլխավոր՝ Ս. Գրիգոր եկեղեցին 2000 թ.: 2003-ին լրանում էր Կեչառիսի հիմնադրման 1000-ամյակը, և այդ առիթով նույն բարերարի հովանավորությամբ կազմակերպվեցին հանդիսություններ, գիտաժողով, գրքի հրատարակություն, որոնք իրականացվեցին 2004 թ.: Գիտամշակութային միջոցառումների համակարգումն ինձ հանձնարարվեց: Միաժամանակ Մուրադ Հասրաթյանի և Վարդան Դևրիկյանի հետ մասնակցեցի «Կեչառիս – 1000» եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) գրքի կազմմանը, գրելով վանքի պատմության հատվածը[37]:

Պետք է նշեմ, որ առաջին հայացքից դժվար չթվացող այդ աշխատանքն իրականում լուրջ բարդություն ուներ, կապված Ս. Գրիգոր եկեղեցու շինարարական արձանագրության հետ, որը երկու թյուրիմացության է ծնունդ տվել, ընդ որում, մեկը կապված հենց կառուցման թվականի հետ՝ 1003, թե՞ 1033 թվական: Բուն նյութից մի փոքր շեղվելով ներկայացնեմ խնդիրը՝ վկայաբերելով վիմագիրը.

«ՆՁԲ (1033) թ. Հա(յոց). ի թագաւորութեան Գագկա և ի հայրապէտութեան տ(եառ)ն Սարգսի, ես Գրիգոր Մագիստռոս, որդի Հա-

---

[36] Կ. Մաթևոսյան, Հավուց թառի վանքը, Երևան, «Մուղնի» հրատ., 2012 (թվայնացվածը՝ www.armenianart.org կայքում):

[37] Մ. Հասրաթյան, Կ. Մաթևոսյան, Վ. Դևրիկյան, Կեչառիս – 1000, Ս. Էջմիածին, 2004:

սանա, շինէցի զէկէղէցիս՝ ինձ ի բարէխոսութ(իւ)ն և իմ պատրոնին և իմ որդեացն. Որք ընթէռնոյք զիս յաղաւթս յիշէցէք ի Ք(րիստո)ս աղաչեմ»[38] (նկ. 1):

1. Կեչառիսի Ս. Գրիգոր եկեղեցու շինարարական արձանագրությունը:

Այս արձանագրության հիման վրա Հայկական Սովետական հանրագիտարանից սկսած և մի շարք այլ հրատարակություններով վերջացրած, եկեղեցու կառուցման ժամանակը համարվել է 1033 թ., կառուցողը՝ Գրիգոր Մագիստրոս Պահլավունին: Հենց այս երկու տվյալն է սխալ, որի մասին նշեցի վերևում: Դեռևս արձանագրության առաջին հրատարակիչներ Ղևոնդ Ալիշանը, Գարեգին Հովսեփյանը, Ներսես Ակինյանը նկատել են, որ թվականի մեջ անճշտություն կա, և հաշվի առնելով տեքստում Գագիկ Ա Բագրատունի (989–1017)[39] թագավորի և 1019 թ. կաթողիկոսական աթոռից հրաժարված Սարգիս Ա Սևանցու անունների առկայությունը, առաջարկել են սկզբում նշված ՆՁԲ (1033) թվականը համարել գրչական սխալ և սրբագրել ՆԾԲ (1003)[40]: Միանգամայն համամիտ լինելով մեծանուն հեղինակների հետ, ես ենթադրել եմ, որ այդ շփոթությունը կարող էր տեղի ունեցած լինել արձանագրության տեքստի՝ գրագրին կամ փորագրող վարպետին թելադրման ժամանակ՝ Ձ (Ձա) = 80 և Ծ (Ծա) = 50 տառ-հնչյունների (միաժամանակ թվատառերի) շփոթության հետևանքով[41]:

---

[38] Գ. Յովսեփեան, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 159: Այս և հաջորդ մեջբերումներում ընդգծումներն իմն են – Կ. Մ.:

[39] Գագիկ Ա Բագրատունու մահվան թվականը հայագիտության մեջ ընդունված է 1020-ը: Կ. Յուզբաշյանը որոշ սկզբնաղբյուրների վկայակոչմամբ այն համարում է 1017-ը (К. Юзбашян, Армянские государства эпохи Багратидов и Византия IX–XI вв., Москва, 1988, с 156–157): Այս թվագրման օգտին են խոսում նաև այլ տվյալներ: Տե՛ս Կ. Մաթևոսյան, Անի-Շիրակի պատմության էջեր, Երևան, 2010, էջ 22–26 (թվայնացվածը՝ www.armenianart.org կայքում):

[40] Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 259, Գ. Յովսեփեան, նշվ. աշխ., էջ 159, Ն. Ակինեան, Ներսես Լամբրոնացի («Ազգաբանութիւն Պահլաւունեաց, Հասանեանց, Թոռնիկեանց և Հեթումեանց»), Վիեննա, 1956, էջ 374:

[41] Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, Եր-

Այժմ անդրադառնամ կառուցողին: Արձանագրության մեջ նա կոչվում է «որդի Հասանա», մինչդեռ հայտնի է, որ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու (ծն. մոտ 990 – մահ. 1058) հոր անունը Վասակ էր: Ուրեմն խոսքը մեկ այլ Գրիգորի մասին է, որը նույնպես մագիստրոսի պատվաստիճան ուներ և Գագիկ Ա թագավորի հպատակն էր: Այս հեղինակավոր իշխանին հանգամանորեն անդրադարձել է Ներսես Ակինյանը, սակայն նրա ուսումնասիրությունը, ցավոք, հայագետների շրջանում պատշաճ ուշադրության չի արժանացել: Ն. Ակինյանը վկայաբերում է նաև այս Գրիգորի դստեր՝ Տիկնացտիկնոջ (որը Վեստ Սարգսի կինն էր) 1042 թ. վիմագիրը Տեկորում[42]:

Հասանի որդի Գրիգոր Մագիստրոսը հիշատակվում է նաև մատենագրական աղբյուրներում, սակայն ի տարբերություն իր ապրած ժամանակի վիմագրերի՝ Ապիրատ անունով (հավանաբար երկանուն ուներ՝ Գրիգոր Ապիրատ, մի երևույթ, որը տարածված էր այդ շրջանի ազնվականության մեջ): Նրա մասին գրող հեղինակները՝ Մատթեոս Ուռհայեցին, Մխիթար Անեցին, Վարդան Արևելցին, Մխիթար Այրիվանեցին, ապրել են նրանից մոտ մեկուկես, երկուսուկես դար անց, երբ հայ

ևան, «Մուղնի» հրատ., Երևան, 2015, էջ 9 (թվայնացվածը՝ www.armenianart.org կայքում): Ի դեպ, այդ հնչյունական խնդիրը արևմտահայերեն-արևելահայերեն խոսվածքում մի զվարճալի բառախաղի է ծնունդ տվել. եթե արևմտահային խնդրեն ասել «բադի ձագը պատի ծակով անց կացավ», ապա նրա արտասանությամբ այն կհնչի՝ «բադի ձագը բադի ձագով անց գացավ»:

[42] «...ես Տիկ(ն)ացտիկին, դուստր Քրգորոյ Մագիստրոսին և ամուսին Սարգսի արևելից վէստիս, թողեալ եմ զՏեկորոյ զպաշդխոտս՝ շահանշահի արևշատության և իմ ծնողացս հոգոյն...» (Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 207): Ուսումնասիրողները, բացառությամբ Ն. Ակինյանի, այս արձանագրության մեջ հիշատակված Գրիգոր Մագիստրոսին նույնացրել են Գրիգոր Մագիստրոս Պահլավունու հետ (Լեո, Անի, Երևան, 1963, էջ 322-327, Հայ ժողովրդի պատմություն (ՀՍՍՀ ԳԱ հրատ.), հ. III, Երևան, 1976, էջ 148, К. Юзбашян, նշվ. աշխ., էջ 161 և այլն), մինչդեռ հայտնի է, որ Պահլավունի իշխանը մագիստրոսի պատվաստիճան ստացել է ավելի ուշ՝ Անիի թագավորության անկումից հետո՝ 1045-ին: Հատկանշական է նաև, որ Տիկնացտիկինը նշում է, թե բարեգործություն է կատարել շահնշահի (այսինքն Անիի թագավորի) արևշատության և իր ծնողների հոգու փրկության համար, այսինքն, նրա ծնողներն այդ ժամանակ արդեն մահացած էին:

իրականության մեջ Գրիգոր Մագիստրոս անունը նույնացել էր համանուն Պահլավունի իշխանի (Վասակի որդու) հետ, ուստի, թերևս շփոթությունից խուսափելու համար, հիշատակել են իշխանի երկրորդ անունը՝ Ապիրատ (նշում են նաև նրա մահվան թվականը՝ 1021): Իսկ այն, որ պատմիչների խոսքը վերոհիշյալ վիմագրերում նշված միևնույն մարդու՝ Հասանի որդի Գրիգորի մասին է, առաջին հերթին պարզվում է Մխիթար Անեցու (Վարդան Արևելցու մեջբերմամբ) և Մխիթար Այրիվանեցու խոսքերից, ըստ որոնց՝ Ապիրատն է կառուցել Կեչառիսը[43]:

Ներսես Ակինյանին այլ տվյալներ հայտնի չէին, որպեսզի իր տեսակետն ավելի հիմնավոր դարձներ: Բայց, բարեբախտաբար մեր ժամանակներում գտնվեցին նաև այլ աղբյուրներ: Մասնավորապես, հնագետ, վիմագրագետ Գագիկ Սարգսյանը հայտնաբերեց և 2002 թ. հրատարակեց Արզականի Ս. Ստեփանոս եկեղեցու կառուցող Գորգ (Գէորգ) քահանայի 1001 թ. արձանագրությունը, որտեղ Գագիկ Ա Բագրատունի թագավորի անունից հետո հիշատակվում է մագիստրոսի պատվաստիճան ունեցող Գրիգորը. «...Ի թագաւորութեան Գագկա աշխարհակալի, **Գրիգորի՝ Հայոց մագիստռոսի**...»[44]**:** Սա արդեն ոչ մի կասկած չէր թողնում, որ 1003 թ. Գրիգոր անունով ու մագիստրոսի պատվաստիճանով այդ նույն իշխանն է եղել Կեչառիսի գլխավոր եկեղեցու կառուցողը (ի դեպ Պահլավունի Գրիգորն այդ ժամանակ դեռ պատանեկան տարիքում էլ չէր, իսկ մագիստրոս դարձավ 1045-ին, ինչի մասին հստակ նշում է պատմիչ Արիստակես Լաստիվերցին)[45]**:**

Պատմական այս տվյալներն ունենալով՝ ես գրեցի Կեչառիսի հիմնադրման և պատմության մասին հատվածը «Կեչառիս – 1000» գրքում,

---

[43] Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն (գրաբար տեքստը ըստ Վենետիկի 1862 թ. տպագրության), աշխարհաբար թարգմանությունը Գ. Բ. Թոսունյանի, Երևան, 2001, էջ 102-103, Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 58:

[44] Գ. Սարգսյան, Գրիգոր-Ապիրատ Հասանյան. Հիմնադիր Կեչառիսի վանքի (վիմագրական նոր վկայություն), «Հին Հայաստանի մշակույթը» ժողովածու 12, Երևան, 2002, էջ 111:

[45] Արիստակիսի Լաստիվերտցւոյ Պատմութիւն, աշխատասիրությամբ Կ. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 62

նաև հանդես եկա հոդվածով[46]: Բայց դրանից հետո ինձ հաջողվեց գտնել մի նոր սկզբնաղբյուր, որը կարևոր տեղեկություններ էր պարունակում թե՛ այս թեմայի, թե՛ մի շարք այլ հարցերի, և մասնավորապես՝ Հավուց թառի վանքի վերաբերյալ:

ՆԱԹԱՆԱՅԵԼ ՀԱՎՈՒՑԹԱՌԵՑՈՒ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատմաբանների ու աղբյուրագետների համար միանգամայն հասկանալի է, թե մեր օրերում որքան դժվար է մի նոր պատմական սկզբնաղբյուր գտնելը, մանավանդ մատենագրության մեջ, որը գրեթե ամբողջովին ուսումնասիրված է: Այդ իմաստով, իրոք բարեբախտություն կարող եմ համարել, որ ինձ վիճակվեց Սամվել Անեցու ձեռագրերի ուսումնասիրության ժամանակ գտնել այդպիսի մի գործ:

Ձեռագիրը (ՄՄ 3681) Անեցու Ժամանակագրության մի ընդօրինակություն է, կատարված 1315 թ. Արճեշի գավառի Ուռընկարի վանքում, որը 1343 թ. Անիի մոտ գտնվող Մաղասբերդում ձեռք է բերել (ստացել է) Հավուց թառի վանքի առաջնորդ Նաթանայել եպիսկոպոսը: Նա այդտեղ էր գտնվում ինչ-որ հալածանքների պատճառով և ապաստանել էր իր բարեկամ Ամիրզայի մոտ (այդ մասին նշում է հիշատակարանում): Ինչպես երևում է, նա շուտով վերադարձել է իր վանք և Սամվել Անեցու Ժամանակագրության իր մատյանում մի շարք հավելումներ է կատարել Հավուց թառի պատմության մասին: Նաթանայելի հիմնական նպատակն է եղել Հայոց պատմության ժամանակագրական ընդհանուր շղթայում ավելացնել իր վանքի պատմության կարևոր դրվագները: Այդ համատեքստում նա ուշագրավ տեղեկություններ է հայտնում վանքի հիմնադրման, անվան, պատմության, կատարված շինարարական ձեռնարկների, այնտեղ պահվող սրբությունների, սեփականության, նվիրատվությունների մասին, միաժամանակ ուշագրավ տեղեկություններ ունի Գառնիի, Կոխթի (Գողթ) բնակավայրերի, նաև վերը նշված Գրիգոր Ապիրատի հոր՝ Հասանի ու նրա մյուս որդու վերաբերյալ:

Այս վերջին հարցի հետ կապված Նաթանայելի գրածն ընդամենը մի քանի բառ է, որոնք, սակայն, մի քանի կարևոր հարցեր են ճշտում:

---

[46] Կ. Մաթևոսյան, Հազարամյա Կեչառիսի հիմնադրման պատմությունից, «Էջմիածին», 2004, Ա, էջ 77-91:

Ժամանակագրության 1002 թվականի դիմաց գրված է. «**Գէորք իշխանաց իշխանն, որդի Հասանայ, եղբար Ապիրատին** վերըստին նորոգեց զնախադրական հռչակաւոր սուրբ ուխտն զՀաւուց թառ **և շինեց զփառաւոր զհրաշալի Կաթողիկէն Թ (9) խորանաւ**: Եւ արար գանձագին զմերձակա գեղն զԿոխթ ի Գագիկ շահանշահէ և Յովանիսէ և ետ Հաւուց թառոյ Սուրբ Կաթողիկէին հայրենիք և ետ ի հայրենե(ա)ց իր զԳետոց վանսն[47] և զՀովայսն վանքագեղ և ժողովեց ԳՃ (300) կրաւնաւոր»[48]:

Ինչպես տեսնում ենք, մանրամասն տեղեկություններ կան Հավուց թառի վանքի Կաթողիկե եկեղեցու և Գևորգ իշխանի առատ նվիրատվությունների մասին: Բայց նախ տեսնենք, թե վերը քննված հարցի տեսանկյունից ինչ են տալիս Նաթանայելի այս վկայության առաջին մի քանի բառերը՝ «Գէորք իշխանաց իշխանն, որդի Հասանայ, եղբար Ապիրատին»:

1. Գևորգ իշխանի մասին մինչև այժմ հայտնի էր միայն Մխիթար Այրիվանեցու մի տեղեկությունը. «Շինի և Հաւուց թառն ի Գէորգեայ իշխանէն Քեղւոյ»[49]: Հայտնի չէր, թե Քեղի (Գեղի, Կաքավաբերդ) բերդի իշխանն ում որդին էր և երբ է Հավուց թառում եկեղեցի կառուցել: Նաթանայելի շնորհիվ իմանում ենք եկեղեցու կառուցման թվականը՝ 1002, նրա անունը՝ Կաթողիկե, որպիսությունը (9 խորանով), վանքին իշխանի տված նվիրատվությունների մասին, նաև՝ որ վերջինս Հասանի որդին էր և Ապիրատի եղբայրը:
2. Գրիգոր Ապիրատի հոր մասին Ն. Ակինյանը գրում է. «Հասան. սա հայրն էր Ապիրատի. իր մասին աւելի բան չենք գիտեր»[50]: Նաթանայելի շնորհիվ իմանում ենք, որ նա հայրն էր նաև Քեղի բերդի Գևորգ իշխանի, հետևաբար, ենթադրելի է, որ նույնպես իշխան էր:

---

[47] Գետոց վանք անունն այլ աղբյուրներում նույնությամբ չի հանդիպում, բայց հավանաբար ձևափոխված հիշվում է Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ, 15-րդ դ. մի պարսկերեն կալվածագրում և Սիմեոն Երևանցու «Ջամբռում»: Այս վանքի տեղի վերաբերյալ նույնպես ենթադրություն կա արված իմ գրքում, որ կարող է հետագա ուսումնասիրողների համար նյութ դառնալ (Կ. Մաթևոսյան, Հավուց թառի վանքը, էջ 53-54):

[48] Սամուէլ Անեցի և շարունակողներ, Ժամանակագրութիւն, էջ 181:

[49] Մխիթար Այրիվանեցի, էջ 57:

[50] Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, էջ 373:

3. Գրիգոր Ապիրատի և Քեղի բերդի տեր Գևորգ իշխանի եղբայրներ լինելու հանգամանքի բացահայտման շնորհիվ պարզ է դառնում, որ գործ ունենք իշխանական տոհմի հետ: Պատմիչների հաղորդումներն այն մասին, որ Գրիգոր Ապիրատը տեր էր 12 000 հեծյալի[51], այժմ մեծ չափազանցություն չի թվում: Հասանի որդիների իշխանությունը տարածվում էր Վարաժնունիքից (Կեչառիս) մինչև Երևան, հասնում Հավուց թառի վանք ու Քեղի ամրոց, որը սահմանակից էր Դվինի ամիրայությանը: Այսպիսի տարածքի վրա իշխողները կարող էին պատկառելի զինուժ ունենալ:

Միաժամանակ, ակնհայտ է, որ իշխաններն իրենց եկեղեցաշինական ձեռնարկներով հետևել են Գագիկ Ա թագավորին ու Կատրամիդե թագուհուն, որոնք Քրիստոսի ծննդյան 1000-ամյակի առիթով[52] Անի մայրաքաղաքում բուռն եկեղեցաշինությամբ էին զբաղված՝ 1001 թ. և հաջորդող մի քանի տարում ավարտին հասցնելով Մայր տաճարի և մեծադիր Ս. Գրիգորի (Գագկաշեն) կառուցումը: Պատահական չէ, որ Գևորգ իշխանը Հավուց թառում եկեղեցի կառուցեց 1002 թ., իսկ Գրիգոր Ապիրատը Կեչառիսում՝ 1003 թ.: Անիի թագավորության մյուս իշխանները նույնպես շարունակեցին այդ միտումը՝ Սմբատ Մագիստրոսը եկեղեցի կառուցեց Բագնայրում (1010 թ.), Վահրամ Պահլավունին՝ Ամբերդում ու Մարմաշենում (1026 և 1029 թթ.), Գրիգոր Պահլավունին՝ Բջնիում (1031 թ.):

Նաթանայելի բազմազան տեղեկությունների հայտնաբերումից հետո ես հանդես եկա համապատասխան հոդվածով[53], իսկ ավելի ուշ՝ Հասանի որդի Գրիգոր (Ապիրատ) Մագիստրոսի և Վասակի որդի Գրիգոր Պահլավունի Մագիստրոսի հետագա շփոթությունները վերջնականապես բացառելու համար՝ առանձին գրքույկով[54]:

---

[51] Վարդան Արևելցի, էջ 102-103, Մխիթար Այրիվանեցի, էջ 21:

[52] Այդ մասին ուղղակիորեն նշում է դեպքերին ժամանակակից պատմիչ Ստեփանոս Տարոնացի Ասողիկը (Ստեփանոսի Տարոնեցւոյ Պատմութիւն, ՍՊբ, 1885, էջ 282):

[53] Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը և նրա տոհմը 11-րդ դարում, «Բանբեր Մատենադարանի», թիվ 18, Երևան, 2008, էջ 67-93:

[54] Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, Երևան, 2015: Այդ գրքում Գրիգոր (Ապիրատ) Մագիստրոսից ու Գրիգոր (Պահլավունի) Մագիստրոսից բացի ես հատուկ ներառել եմ նաև 13-րդ դարում ապրած

2. Հավուց թառի վանքը:

Այսքանով եզրափակենք Կեչառիսի պատմությունից դեպի Հավուց թառ ուսումնասիրմանը գալու նախապատմությունը: Քանի որ գիրքը հրատարակված է, հասանելի է համացանցում (տես հղումը ենթաբաժնի սկզբում), ես հարկ չեմ համարում նրա բովանդակությանն անդրադառնալու, այլ ստորև կանդրադառնամ այն խնդիրներին, որոնք առաջիկայում լուծում են պահանջում:

ՀԱՎՈՒՑ ԹԱՌԻ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԵՂԻ ՀԱՐՑԸ

Քանի որ Նաթանայելի հայտնած տեղեկությունից հայտնի էր դառնում Հավուց թառի Կաթողիկե եկեղեցու 9 խորան ունենալու մասին, հետաքրքիր էր պարզել, թե որն է այդ եկեղեցին ներկայիս վանական հա-

անեցի մի գործչի, Գրիգոր Ա եպիսկոպոսին, որն իրեն անվանել է նաև Գրիգոր Մագիստրոս (այդպես է կոչվում նաև մահից հետո՝ Անիի վիմագրերից մեկում), ցույց տալու համար, որ նույն անունով ու մականունով գործիչների հանդես գալն արտառոց երևույթ չէ: Սույն գրքում ևս վերոնշյալ թեմային համեմատաբար մեծ տեղ հատկացրեցի, որովհետև բանասիրության դոկտոր Սարգիս Մխիթարյանը ոչ մի կերպ չի համակերպվում 11-րդ դարում Գրիգոր Մագիստրոս անունով հիշատակվող երկու անձի գոյության փաստի հետ և հոդված-հոդվածի հետևից գրելով, փորձում է ժխտել ակնհայտը:

3. Ենթադրաբար Կաթողիկե եկեղեցու հարավային պատը:

մալիրում: Նշեմ, որ այդքան թվով խորան կարող էր լինել ուղղանկյուն հատակագծով, բայց չորս երկհարկ ավանդատներով կառույցում, որի յուրաքանչյուր ավանդատանը կլիներ պատարագի սեղանով խորան: Այդ դեպքում ավանդատների 8 խորանը և ավագ խորանը միասին կկազմեն 9 թիվը[55]: Մասնավորապես, հենց այդպիսին է Հովհաննավանքի գլխավոր՝ Կաթողիկե եկեղեցին, որի 1243 թ. արձանագրության մեջ նշվում է՝ «Սուրբ Կաթողիկէն Թ (9) խորանաւ...»[56]:

Սակայն պարզվեց, որ Հավուց թառի վանքի՝ ներկայիս կիսաքանդ եկեղեցիներով ու այլ կառույցներով պատված տարածքում այդպիսի

---

[55] Եկեղեցիների խորանների թվի հարցին, որոնք երբեմն նաև հենց եկեղեցի են կոչվել, ես անդրադարձել եմ Անիին նվիրված գրքում (Կ. Մաթևոսյան, Անի. Եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, էջ 177–187, 345–346):

[56] Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 95: Հավուց թառում ենթադրյալ եկեղեցու տեղը շատ ավելի փոքր է, ուստի այն կարող է նաև այլ կառուցվածք ունեցած լինել:

եկեղեցի չի պահպանվել (նկ. 2): Նկատեմ, որ Կաթողիկեի անունը, բացի Նաթանայելից, տալիս են նաև մի շարք այլ աղբյուրներ, այսինքն, այդպիսի եկեղեցի եղել է, բայց այժմ ավերված է: Այն, որ Կաթողիկեն կանգուն էր նաև Սիմեոն Ջուղայեցու վանահայրության ժամանակ՝ 17-րդ դարի 40-50-ական թվականներին, երևում է նրա՝ Հավուց թառին նվիրված դրվատից, որտեղ առաջինը հիշատակում է այդ եկեղեցին՝ «**Կաթողիկէս հանդիսարան, հաստակառոյց վիմարդեան**»[57]: Բարեբախտաբար, մի շարք օժանդակ տվյալներ հաշվի առնելով, այսօր կարելի է մեծ հավանականությամբ նշել, թե որ մասում է այն գտնվել: Այդ մասին դեռևս 1988-ին հիմնավոր ենթադրություն է արել հնագետ վիմագրագետ Գագիկ Սարգսյանը: Նա այժմյան կիսավեր ժամատնից հյուսիս-արևելք պահպանված ուղղանկյուն շինության հյուսիսային պատը համարում է հենց այդ եկեղեցու պատը, քանի որ նրա վրա առկա արձանագրության մեջ նշվում են մի նվիրատուի խոսքերը՝ «տուի արդիւնս ի Ս(ուր)ը Կաթող[իկէս]...»[58] (նկ. 3):



Գծ. 1 Հավուց թառի այժմյան հատակագիծը:

Վանքի այժմյան հատակագիծը (գծ. 1) անորոշ պատկերացում է տալիս այդ հատվածի մասին: Անգամ պարզ չէ, թե ինչ տեսք է ունեցել ժամատուն-գավիթը: Սակայն նրա պահպանված հատվածը թույլ է տալիս հատակագծորեն վերականգնելու նրա չափերը և ըստ այդմ ճշտելու Կաթողիկե եկեղեցու գրված դիրքը: Բնական է, որ ժամատունը պետք է կառուցվեր վանքի գլխավոր եկեղեցու՝ Կաթողիկեի դիմաց՝ նրա արևմտյան կողմում:

---

[57] Կ. Մաթևոսյան, Հավուց թառի վանքը, էջ 47, 97:

[58] Գ. Սարգսյան, Հավուց թառի հիմնադրման վկայագրի շուրջ, «Լրաբեր», հաս. գիտ., 1988, N 4 էջ 68:

4.

5.

6.

7.

8.

9.

10.

11.

4–11. Ենթադրաբար Կաթողիկե եկեղեցուն պատկանող քարեր և ճարտարապետական դետալներ:

Կարելի է ենթադրել, որ Կաթողիկեն հիմնովին ավերվել է 1679 թ. երկրաշարժի հետևանքով (հայտնի է, որ վանքը մեծապես տուժել է այդ աղետից), որից հետո որոշվել է այն չվերականգնել, այլ դրա և ժամատան հյուսիսային հատվածում կառուցել ավելի մեծ մի եկեղեցի (գծ. 1, 1): Հայտնի է, որ կաթողիկոս Աստվածատուր Համադանեցին (1715–1725) հիմնականում Կաթողիկեի և ժամատան քարերն օգտագործելով սկսել է այդ եկեղեցու շինարարությունը 1720–1721 թթ., բայց այն անավարտ է մնացել լեզգիների արշավանքի պատճառով և հետագայում չի շարունակվել: Սրա հետևանքով հնագույն եկեղեցու քարերը նոսրացել են, բայց այժմ էլ գետնի երեսին երևում են բազմաթիվ բեկորներ, ճարտարապետական դետալներ՝ սյան խարիսխներ, բազմանիստ մշակված մեծ սալաքարեր (նկ. 4–11): Պահպանվել է միայն Կաթողիկեի հարավային պատը, քանի որ այն պատակից է մեկ այլ կառույցի: Նոր և լրացված հատակագծով փորձել եմ նշել ժամատան ու Կաթողիկեի դիրքը (գծ. 2): Ըստ այդմ, կարելի է ասել, որ Գևորգ իշխանի կառուցած Կաթողիկե եկեղեցու հիմքերը գտնվում են ժամատան արևելյան կողմում: Սա նշանակում է, որ մաքրման աշխատանքների ու մասնակի պեղումների

միջոցով հնարավոր կլինի հողի տակից դուրս բերել 1002 թ. կառուցված Հավուց թառի 9 խորանով Կաթողիկե եկեղեցու հիմնապատերը, հավանորեն նաև հնագույն վիմագրեր:



Գծ. 2 Հավուց թառի սկզբնական հատակագծի վերականգնման փորձ:

Վանքին նվիրված գրքում անդրադարձել եմ նաև Գրիգոր Մագիստրոսի անվամբ հայտնի Հավուց թառի կորած արձանագրությանը[59]: Այստեղ մանրամասնելու չեմ ուզում անդրադառնալ, այլ միայն հիմնականում այն խնդրին, թե որտեղ պիտի այն եղած լիներ:

Ըստ հրատարակիչների այն հետևյալ սկիզբն է ունեցել՝ «Թուին ՆԿԲ (1013) ի թագաւորութեանն Գագկայ և ի հայրապետութեան տեառն Սարգսի, ես Գրիգոր Մագիստրոս...»: Հետագա տեքստում խոսվում է եկեղեցու կառուցման և վանքին նշանավոր Ամենափրկիչ խաչի նվիրատվության մասին: Հանգել եմ այն եզրակացության, որ դրա տեքստը կազմվել է ուշ շրջանում (թերևս 15-րդ դ.): Սակայն արձանագրության սկզբնամասը, հավանորեն, քաղվել է մի հնագույն արձանագրությունից, որտեղ նշված Գրիգոր Մագիստրոսը (1013 թ.) չէր կարող այլ մարդ լինել, քան Գևորգ իշխանի եղբայր Գրիգոր Ապիրատը[60]: Ուշագրավ է, որ Նաթանայել Հավուցթառեցին Սամվել Անեցու ժամանակագրության մեջ 1013 թ. ներքո մի տեղեկություն է մուծել, նշելով, որ Գագիկ Ա թագավորն այդ ժամանակ Ամենափրկիչ խաչը տվել է Գևորգ իշխանին[61]: Սա հավելյալ կռվան է ենթադրելու համար, որ այդ թվականին Հավուց թառում մի արձանագրություն է գրվել, որտեղ հիշատակվել է նաև Գևորգ իշխա-

---

59 Կ. Մաթևոսյան, Հավուց թառի վանքը, 24-30:

60 Կ. Մաթևոսյան, Հավուց թառի վանքը, էջ 23-30: Վիմագիրն ավելի վաղ քննած Գ. Սարգսյանը եկել է այն եզրակացության, որ արձանագրության հայտնաբերման և տեղադրության հանգամանքները հնարովի են, և այն կեղծ է (Գ. Սարգսյան, Հավուց թառի հիմնադրման վկայագրի շուրջ, էջ 68-71):

61 Սամուէլ Անեցի և շարունակողներ, էջ 182:

12, 13. Ժամատան քանդված պատի բեկորները:

նի եղբոր՝ Գրիգոր Մագիստրոսի անունը (թերևս նա էլ խաչի ընծայման առիթով իր հերթին նվիրատվություններ է կատարել): Սակայն հետագայում վանքի 15-րդ դ. վանահայրերը, որոնք պարոնտեր էին ու իրենց Պահլավունյաց տոհմից էին համարում, արձանագրությունը լրացրել են սեփական հայեցողությամբ:

Այժմ մեջբերեմ արձանագրությունն առաջինը հրատարակած Քուրդ Հովհաննեսի փոքրիկ վկայությունը, թե որտեղից է արտագրել արձանագրությունը. «Վերոյգրեալ արձանս գրեալ կայր ի վերայ Սուրբ Ամե-

նափրկչին **արքայաշէն դարպասին դուրս կոյս հարաւկողմն** ի վերայ մեծ լուսանցոյց պատուհանին, որ ի շարժմանէն խախտեալ կայր: ՌՃՀ (1721) թուին Աստուածատուր կաթողիկոսն կամեցաւ վերստին նորոգել, ի քակելն ես մեղաւոր ծառայ սուրբ տանս (այսինքն՝ Մայր Աթոռի – Կ. Մ.) Քուրդ Յոհաննէս իմ ձեռամբս վերառի զարձանս զայս և գրեցի աստ»[62]: Այսինքն, պատը, որի վրա եղել է արձանագրությունը, քանդվել է, և հնարավոր է, որ դրա քարերը նույնպես օգտագործել են նոր (անավարտ մնացած) եկեղեցու կառուցման համար:

Իմ գրքում ես չեմ անդրադարձել վիմագրի՝ այս վկայության մեջ եղած տեղանշմանը՝ «արքայաշէն դարպասին դուրս կոյս հարաւկողմն ի վերայ մեծ լուսանցոյց պատուհանին», որովհետև անհասկանալի էր մնում, թե ինչ «դարպասի» մասին է խոսքը: Այդ բառով, սովորաբար, մատենագրության և վիմագրության մեջ կոչվում են ապարանքները կամ պալատները: Սակայն բոլորովին վերջերս հանդիպեցի օրինակի, երբ դարպաս է կոչվում նաև ժամատունը կամ գավիթը[63]: Ըստ այդմ, եթե Հավուց թառում իրոք եղել է նշված արձանագրությունը, որը բավական մեծ տեքստ ունի և պիտի բազմաթիվ քարերի վրա տեղաբաշխված լիներ, ապա նրա մասերը կարող են գտնվել ժամատան հարավային փլված պատի քարակույտերի մեջ (նկ. 12, 13): Հուսանք, որ վանական համալիրի հետագա ուսումնասիրության ու պեղումների ժամանակ կգտնվեն արձանագրության որոշ հատվածներ: Վիմական գրչության նմուշ ունենալու դեպքում արդեն 1013 թ. արձանագրության առեղծվածն ավելի մոտ կլինի իր վերջնական բացահայտմանը:

---

[62] Յովհ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, Էջմիածին, 1842, էջ 293: Արձանագրության տեքստն իր «Ջամբռ» աշխատության մեջ է ներառել նաև կաթողիկոս Սիմեոն Երևանցին:

[63] Այս բանը երևում է Լուսինե Թումանյանի վերջերս, իմ խմբագրությամբ լույս տեսած աշխատության մի հատվածից: Հովհաննես վարդապետ Մոկացին Լիմ մենաստանում կառուցել է դարպաս, որի մասին նշում է վանքի պատմությունը գրած Հակոբ վրդ. Թոփուզյանը. «...շինեալ է և ընդառաջ նորա (եկեղեցու – Կ. Մ.) զդարպասն՝ տեղի ժամասացութեան և ժողովելոյ աղօթաւորացն» (Երուսաղեմ, ձեռ. 2086, էջ 31–32): Նաև նրա՝ Լիմում եղած տապանաքարին է նշված՝ «զբազում մեծամեծ եկեղեցիս նորոգեաց, նաև սուրբ անապատի դարպասն շինեաց»: Տե՛ս Լ. Թումանյան, Վանա լճի կղզիների վանքերի գրչության կենտրոնները, Երևան, 2019, էջ 193–194 (թվայնացվածը՝ www.armenianart.org կայքում):

ԻՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՆԵԼ ՀԱՎՈՒՑ ԹԱՌՈՒՄ

Հավուց թառի հնամյա և պատմական մեծ անցյալ ունեցած վանքը, ճանապարհներից հեռու գտնվելով, ամենից քիչ ուշադրության արժանացած հնավայրերից է[64]: Այնտեղ շատ անելիք կա, բայց վերը շարադրվածի հիման վրա ես միայն երկու կետ պետք է նշեմ:

1. Հավուց թառի վանքի առայժմ հայտնի հնագույն եկեղեցին 1002 թ. Գևորգ իշխանի կառուցած Կաթողիկե եկեղեցին է, որը գտնվել է ժամատան արևելյան կողմում: Այդ հատվածը այժմ ծածկված է նախկին շինության բազմաթիվ քարերով, ուշագրավ բազմանիստ բեկորներով (տես լուսանկարները), որոնց կոնստրուկտիվ նշանակությունը կարող են որոշել ճարտարապետ մասնագետները: Այս տարածքում մաքրման աշխատանքների ու մասնակի պեղումների միջոցով հնարավոր կլինի հողի տակից դուրս բերել պատմական աղբյուրներում վկայված ինը խորանով Կաթողիկե եկեղեցու հիմքերը (գծ. 2, 1): Գուցե պահպանված քարերը թույլ տան այն մասնակիորեն վերաշինել: Հավանաբար այդ ընթացքում կգտնվեն նաև վիմական արձանագրություններ:
2. Կաթողիկե եկեղեցու դիմաց գտնվող երբեմնի ժամատան կամ գավիթի քարերը խառնիխուռն թափված են նրա շուրջը, հատկապես արևմտյան և հարավային կողմում (գծ. 2, 2): Այստեղ նույնպես մաքրման աշխատանքի, շինաքարերի ու ճարտարապետական մանրամասների մասնագիտական ուսումնասիրության շնորհիվ հավանաբար հնարավոր կլինի կազմել վերականգնման նախագիծ և հետագայում, հնարավորության դեպքում, առնվազն մասնակիորեն վերականգնել շենքը: Այդ ընթացքում ժամատան հարավային պատի քարերի մեջ հնարավոր է, որ գտնվեն 1013 թ. Գրիգոր Մագիստրոսի անվամբ հայտնի արձանագրության հատվածները (որի մասին վկայված է 18-րդ դարում):

---

[64] Հավուց թառ վանական համալիրի «Բլրի» եկեղեցուն հարակից տարածքում և գերեզմանոցում 2015 թ. պեղումներ է իրականացրել Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արշավախումբը (ղեկ.՝ Արման Նալբանդյան): Տես Ա. Նալբանդյան, նորահայտ վիմագրեր Հավուց թառից, «Հուշարձան» տարեգիրք, թիվ 15, 2018, էջ 26-52:

ԱՆԻ

Միջնադարյան Հայաստանի հռչակավոր մայրաքաղաք Անիի պատմությունը, ճարտարապետությունը և հարակից ամեն բան թվում էր, թե ուսումնասիրված է, և այստեղ այլևս անելու շատ բան չկա: Բայց երբ սկսեցի «Անիի գրչության կենտրոնը» թեմայով զբաղվել, շատ հարցեր ու ենթահարցեր ծագեցին, և շատ բան բացահայտվեց: Պետք է նշեմ, որ Անիի ձեռագրական մշակույթի ուսումնասիրությունն ինձ համար սկսվել է «Հաղբատի Ավետարանի» նկարազարդումից՝ նկարիչ Մարգարեի արվեստից, որն աչքի է ընկնում աշխարհիկ տարրերով, և որն էլ հնարավորություն տվեց այդ նյութից բխող միանգամից երեք հոդված գրել: Ընդ որում, դրանցից մեկը վերաբերում էր միայն մեկ մանրանկարի՝ Մարգարե նկարչի «Մուտք Երուսաղեմ» բացառիկ աշխատանքին, որտեղ արվեստագետը որպես Քրիստոսին դիմավորող քաղաքացիներ, պատկերել է ձեռագրի պատվիրատուի ընտանիքի անդամներին՝ ծնողներին, քույրերին ու եղբայրներին, իսկ որպես քաղաքային մուտքի նախատիպ օգտագործել Անի-Հոռոմոս ճանապարհին գտնվող աշտարակավոր մուտքի կամարը (նկ. 1): Անիի քաղաքացիների հինգ դիմապատկեր է տեղ գտել նաև ձեռագրի խորաններում, ևս երկուսը՝ ընծայական մանրանկարում[65]:

Անիի ձեռագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ քաղաքի

---

[65] Կ. Մաթևոսյան, Նկարիչ Մարգարեի «Մուտք Երուսաղեմ» մանրանկարը, ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1982, N 9, էջ 52-63, նույնի՝ Հոռոմոս-Անի ճանապարհին գտնվող կամարը, «Պատմա-բանասիրական հանդես» 1982, N 1, էջ 143-149, նույնի՝ Անիի քաղաքացիների դիմանկարները «Հաղբատի Ավետարանի» խորաններում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1984, 3, էջ 162-168: Բազմավաստակ բանասեր, դոկտոր Ասատուր Մնացականյանը, որը կարդացել էր «Հաղբատի Ավետարանի» մասին իմ հոդվածները, մի առիթով հորս ասել էր՝ Մառն ու Օրբելին արդեն ուսումնասիրել են Անիի պատմությունն ու ճարտարապետությունը, Կարենի գործի կարևորությունը նրանում է, որ Անին լցնում է անեցիներով:

հոգևոր մշակույթի մասին խոսելիս չպետք է սահմանափակվել պարիսպների ընդգրկած տարածքով: Անիի մերձակա երեք խոշոր վանքերը՝ Հոռոմոս, Բագնայր, Արջոառիճ, անգամ ավելի հեռու գտնվողները՝ Խծկոնք, Միեն, Մարմաշեն, Հառիճ և այլն, անմիջական և սերտ կապ ունեին քաղաքի հետ եկեղեցական-վարչական և հոգևոր մշակութային առումով: Անիի ձեռագրական տվյալները նույնպես այդ մասին էին վկայում: «Հաղբատի Ավետարանը» 1211 թ. գրվել է անեցի Սահակ քահանայի պատվերով՝ Հաղբատում (այդ վանքում էր ուսանում), նկարազարդման համար բերվել է Անի՝ Բեխենց վանք, կազմվել է Հոռոմոսի վանքում, նվիրաբերվել է Արջոառիճի վանքին: «Բագնայրի Ավետարանը» 1232 թ. Զաքարյան իշխանների քեռորդի Խոռասի պատվերով գրվել ու ծաղկվել է Հոռոմոսում, հայտնի գրիչ Իգնատիոսի ձեռքով, որից հետո նվիրաբերվել է Բագնայրի վանքին: Նույն գրչի՝ «Խծկոնքի Ավետարանը» 1236 թ. գրվել է Հոռոմոսում, նվիրաբերվել Խծկոնքին: 1298 թ. Անիի Ներքին բերդում (Աղջկաբերդ) գրված Ավետարանը նվիրաբերվել է Արջոառիճի վանքին, ընդ որում, հիշատակարանում նշվում է, որ ձեռագիրն ստացող անեցի եղբայրները ուսանում էին այդ վանքի դպրոցում:

Անիի գրչության կենտրոնի ուսումնասիրությունը թույլ տվեց ի հայտ բերել նաև պատմական և մշակութային բազմաթիվ այլ իրողություններ, որոնք հետո, այս կամ այն կերպ, արծարծվեցին իմ «Անի. Եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը» գրքում (1997): Պատմիչների, վիմագրերի և հիշատակարանների տեղեկությունների, ինչպես նաև նախորդ ուսումնասիրողների նյութերի համադրմամբ հնարավոր եղավ առաջին անգամ կազմել Անիի եպիսկոպոսների գավազանագիրքը, անդրադառնալ քաղաքի եկեղեցիների թվի հարցին և կազմել դրանց հնարավորինս ամբողջական ցանկը, մեկտեղել Անիի այլադավան համայնքների մասին եղած նյութերը և այլն:

Պետք է ասեմ, որ երբ ես սկսեցի զբաղվել Անիի մշակույթով՝ 1980-ական թթ., փակ սահմաններով խորհրդային երկրում, մտքովս չէր անցնում, որ մի օր հնարավորություն կունենամ լինելու այդքան մոտ ու այդքան հեռու բուն քաղաքում: Բայց դա իրականություն դարձավ երկու անգամ՝ 2012 և 2013 թթ.: Ընդ որում, երկրորդ անգամ, «Անին կոն-

1.«Մուտք Երուսաղեմ», նկարիչ Մարգարե, 1211 թ., Անիի Բեխենց վանք (ՄՄ 6288, էջ 16բ):

2. Տապանաքար Ռոբեն քահանայի:

տեքստում»[66] միջազգային աշխատաժողովի մասնակիցների խմբի հետ հնարավորություն ունեցա լինելու նաև Հոռոմոսի, Բագնայրի, Արջոառիճի, Խծկոնքի վանքերում, Տեկորում, Միենում, Բագարանում, Շիրակավանում, Արգինայում, Տիգնիսում և Արևմտյան Շիրակի այլ վայրերում: Ցավալի էր համոզվել այն բանում, որ Շիրակի դաշտ կոչվածի միայն մի փոքր մասն է այժմ ՀՀ տարածքում, իսկ պատմաճարտարապետական և հնագիտական առումով՝ երբեմնի գավառի չափազանց փոքր մասը...

Անիում բավականին ժամանակ ունեցա տեսնելու այն ամենը, ինչի մասին իմ պատկերացումները նախկինում հիմնված էին գրքերի, նկարագրությունների, հատակագծերի ու լուսանկարների վրա: Իհարկե, քաղաքը տեսել էի նաև սահմանի այս կողմից, բայց տեղում լինելն անկասկած չափազանց կարևոր էր:

Անիի և նրա շրջակա վանքերի՝ Հոռոմոսի, Բագնայրի, Արջոառիճի մասին ես բազմաթիվ հրապարակումներ ունեմ և եթե այստեղ անգամ համառոտ գրեմ այդ մասին, տասնյակ էջեր կպահանջվեն: Բայց այս գրքի ուղեգծից չշեղվելու համար, միայն Անիի հոգևորականությանը վերաբերող մի փոքր լրացում կանեմ, և երկու հարցի կանդրադառնամ, որոնք կապ ունեն եկեղեցիների տեղորոշման հետ:

Անիին նվիրված գրքում ներկայացրել եմ Անիի Հոռոմոսի, Բագնայրի և Արջոառճի վանքերի հոգևորականության անվանացանկը՝ հակիրճ տեղեկություններով[67]: Այդ ցանկին այժմ կարող եմ երեք տվյալ ավելաց-

---

[66] Այս աշխատաժողովի մասին պատմող գրքույկը տես www.armenianart.org կայքում:

[67] Կ. Մաթևոսյան, Անի, էջ 134–147:

նել: 2004–ին Անիի Մայր տաճարի արևելյան կողմում թուրք հնագետների պեղումներով բացվել են մի քանի տապանաքարեր, բայց 2006–ին դրանք արդեն կոտրված էին[68]: Տապանաքարերից երկուսը արձանագրությամբ են և պատկանում են քահանաների: Առաջինը՝ «ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ Տ(Է)Ր ԱԲՐԱՀԱՄ ՔԱՀԱՆԱՅԻ»: Երկրորդի վիմագիրն է՝ «ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ Տ(Է) Ր ՌՈԲԷՆ ՔԱՀԱՆԱՅԻ» (նկ. 2)[69]: Այս վիմագրի արժեքը մեծ է հատկապես Ռոբեն (Ռուբեն) անվան հիշատակության շնորհիվ, քանի որ այլ աղբյուրներում՝ Անիում այդ անձնանունը չի պահպանվել: Հայտնի է, որ Կիլիկիայում հաստատված հայկական Ռուբինյան արքայատոհմի հիմնադիրը հենց այս անունն էր կրում, և որը Անիի վերջին գահակալ Գագիկ Բ–ի ազգականն էր կամ թիկնապահներից մեկը: Ուշագրավ է նաև անվան գրության հնավանդ ձևը՝ «Ռոբէն»:

2013 թ. գիտարշավի ժամանակ Հոռոմոսում, Ս. Գևորգ եկեղեցու արևմտյան պատի լուսամուտի շրջանակի ներսում, արտաքուստ փոքրիկ կամարակի վերևում ու երկու կողմում գտա մի վիմագիր ՝ «ԵՍ՝ ՅԱ(Ի)ՀԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԷԿԵՂԷՑՈՅՍ»[70]: Արձանագրության փորագրման տեղը բավականին բարձր է, ինչը, թերևս, հնարավոր էր իրականացնել եկեղեցու կառուցման ժամանակ, որը կատարվել է 11–րդ դ. սկզբին՝ մինչև եկեղեցին կառուցող Գագիկ Ա Բագրատունու մահը (1017 թ.): Նկատեմ նաև, որ այստեղ գործ ունենք ոչ պաշտոնական արձանագրության հետ, այսինքն՝ գրերը խիստ անկանոն են և առավել նման կառուցող վարպետի թողած հիշատակության: Սակայն չի բացառվում, որ նա կարող է լինել Հոռոմոսի առաջնորդ այն Հովհաննես վարդապետը, որի անունը նշված է 1038 թ. Հովհաննես Սմբատ թագավորի արձանագրության մեջ[71]:

Այսպիսով, Անիի հոգևորականության անվանացանկը կարելի է լրացնել 11–րդ դ. առաջին տասնամյակում (մինչև 1017 թ.) ապրած Հովհաննես վարդապետի անունով, որը եղել է Հոռոմոսի վանքի միաբան, և Անիի Մայր տաճարի՝ 11–12–րդ դդ. (դատելով տապանագրերի հնագրությունից) երկու քահանայի՝ Աբրահամի և Ռուբենի անուններով:

---

68 Ս. Կարապետյան, Անի 1050, Երևան, 2011, էջ 194, 196, 257:

69 Նույն տեղում:

70 Կ. Մաթևոսյան, Վիմագրական նշխարներ Արևմտյան Հայաստանից, «Էջմիածին», 2015, Դ, էջ 143:

71 Կ. Մաթևոսյան, Անի, էջ 140:

ԱՆԻԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԵՂՈՐՈՇՈՒՄԸ

Անիի եպիսկոպոսների գործունեության և եկեղեցիների ցուցակը կազմելու ընթացքում անդրադարձել եմ քաղաքի Ս. Ստեփանոս եկեղեցուն, որը նախորդ ուսումնասիրողների ուշադրությանն առանձնապես չի արժանացել և չի տեղորոշվել: Այս եկեղեցին հիշատակվում է միայն վիմագիր աղբյուրներում, որոնք են՝ Մարմաշենի 1225 թ., Անիի Ս. Առաքելոց եկեղեցու 1239 և 1288 թթ., ինչպես նաև Հոռոմոսի մի անթվական արձանագրությունները:

Առաջինում տեղեկացվում է Մարմաշենի եկեղեցու հիմնավոր նորոգման, նրան տրված բազում նվիրատվությունների մասին, որ կատարել են Անիի Գրիգոր Ա եպիսկոպոսը ու նրա եղբայր Ղարիբը: Նվիրատվությունների թվում նշվում է Անիի Ս. Ստեփանոս եկեղեցին իր համայնքով. «Եւ ի քաղաքիս զմեր պապէնի հայրենիք **էկեղեցին զՍուրբ Ստեփանոս բոլոր ամենայն ժողովրդեամբն**...»[72]:

Երկրորդում, Անիի Բարսեղ Գ եպիսկոպոսի (Ամիր Երկաթի որդու) 1239 թ. արձանագրության մեջ ասվում է, որ քաղաքի Ս. Ստեփանոս եկեղեցին իր համայնքով այնուհետև ևս պետք է պատկանի Մարմաշենին, ինչպես որ ժամանակին տնօրինել էր Գրիգոր Մագիստրոսը (նույն ինքը՝ Գրիգոր Ա եպիսկոպոսը)[73], որն իր Ղարիբ (Խարիփ) եղբոր հետ միասին թաղված է այնտեղ. «...ես Բարսեղ արքեպիսկոպոս, որդի Ամիր Երկաթայ առաջնորդ մայրաքաղաքիս Անոյ, հաստատեցաք ի մեր սեփական ժառանգութենէս **զՍուրբ Ստեփանոս՝ հայրենիք սուրբ ուխտին Մարմաշինոյ վանիցն,** սխրատեսիլ Սուրբ Կաթողիկէին, **զոր Մագիստրոսն Գրիգոր շնորհեալ և հաստատեալ էր,** ընդ որոյ հովանեաւ ինքն և եղբայր իւր Խարիփ կան հանգստարանի, որպէս և իւր գրեալքն բացայայտեն»[74]:

Երրորդ վիմագիրը ինքնին ուշագրավ լինելով, միաժամանակ թույլ է տալիս նաև կռահել Ս. Ստեփանոս եկեղեցու՝ 1225 թ. առաջ ունեցած

---

[72] И. Орбели, Избранные труды, Ереван, 1963, с. 443, Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 150:

[73] Այս մասին տե՛ս Կ. Մաթևոսյան, Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, էջ 84–102:

[74] Դիվան հայ վիմագրության, պր. I, Անի քաղաք (կազմեց՝ Հ. Օրբելի), Երևան, 1966, էջ 17:

կարգավիճակի մասին: 1288 թ. մեծահարուստ Շապադինը նշում է, որ 700 սպիտակ (արծաթ) վճարելով, Ս. Ստեփանոս եկեղեցին, համայնքով հանդերձ, վերադարձրել է Անիի եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոցի անմիջական ենթակայությանը. «Ես Շապադինս, որդի Յովանիսի **ետու ընձա առ Սուրբ Առաքեալքս՝ Սուրբ Ստեփանոս իւր ժողովրդովն, իւր կալերովն, զոր յառաջն շորթել էին...**»[75]: Այստեղից պարզվում է, որ մինչև Մարմաշենին հանձնվելը Ս. Ստեփանոսը գտնվել է Անիի Ս. Առաքելոցի ենթակայության ներքո: Հետաքրքրական է, որ եթե Բարսեղ Գ եպիսկոպոսը նզովքով է սպառնում բոլոր նրանց, ովքեր կփորձեն եկեղեցին «շորթել» Մարմաշենից, ապա Շապադինը գրում է, որ ավելի վաղ Ս. Ստեփանոսը «շորթել» են Ս. Առաքելոցից (և տվել Մարմաշենին), որով ասես հիմնավորում է իր արարքը: Ուշագրավ է նաև, որ նշված բոլոր արձանագրություններում շեշտվում է Ս. Ստեփանոս եկեղեցու համայնքը (ժողովուրդը), որը, պետք է կարծել, բավական բազմամարդ է եղել, ուստի եկեղեցին էլ՝ եկամտաբեր: Վերջին վիմագրում հիշատակվում են նաև եկեղեցապատկան կալերը: Այս փաստը ենթադրել է տալիս, որ եկեղեցու համայնքի անդամների մի մասը զբաղվել է գյուղատնտեսությամբ:

Անիի Ս. Ստեփանոսի տեղագրությունը ճշտելուն մեծապես օգնում է Հոռոմոսի մի անթվակիր արձանագրություն, ուր նշվում է այդ վանքի՝ Անիում ունեցած սեփականությունը: Թվարկումը սկսվում է Գեորգ ծեր երեցի հայրենի տներից, որոնք գտնվելիս են եղել քաղաքի Կարուց դռան (Կարսի դարպասի) մոտ՝ Ս. Ստեփանոս եկեղեցու դեմ հանդիման. «Հոռոմոսին վանացս հայրենիք, որ ի քաղաքին, այս են՝ Գեորգ ծեր երէց վանացս ետ **հայրենի տներն՝ մաւտ ի Կարուց դուռն, Սուրբ Ստեփանոս ընդդէմ...**»[76]**:**

Այսպիսով, հայտնի է դառնում, որ հիշյալ տներն Անիի Կարուց դռան մոտ էին և Ս. Ստեփանոս եկեղեցու դիմաց: Անիի հատակագծի վրա երևում է, որ Կարսի դարպասի մերձակա քաղաքամասում կա երկու եկեղեցի, մեկը՝ դռնից դեպի հարավ՝ մոտ 120 մ հեռավորությամբ գտնվող Ս. Գրիգոր (Խաչուտի) եկեղեցին է, իսկ մյուսը նրանից մի փոքր արևելք՝

---

[75] Նույն տեղում, էջ 29:

[76] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ, էջ 155:



Գծ. 1. Անիի հյուսիս-արևմտյան հատվածը, Ս. Ստեփանոս եկեղեցու ենթադրյալ տեղը:

Կարսի դռնից շուրջ 150 մ հեռավորությամբ ավերակը: Վերջինս Հ. Օրբելու կազմած «Անի քաղաքի համառոտ ուղեցույցում» նշված է 20 թվահամարով և կոչվում է «**մեծ տաճարի ավերակներ**»[77] (քարտեզը տե՛ս նաև Ն. Մառի «Անի» գրքում) (գծ. 1): Իմ կարծիքով, հենց սա է Անիի Ս. Ստեփանոս եկեղեցին, նախ որովհետև Կարսի դռան մոտերքում այլ եկեղեցու ավերակներ չկան, երկրորդ՝ Հ. Օրբելին եթե մյուս համանման կառույցները սովորաբար կոչում է «եկեղեցու ավերակներ», ապա այստեղ հարկ է համարել ընդգծել եկեղեցու մեծությունը՝ «մեծ տաճարի ավերակներ»: Ըստ էության, Ս. Ստեփանոս եկեղեցին գտնվել է Կարսի դռան և Գագկաշեն Ս. Գրիգոր եկեղեցիների միջև: Վերը բերված արձանագրություններից արդեն տեսանք, որ Ս. Ստեփանոսը նշանավոր էր հատկապես իր մեծ համայնքով, իսկ մեծ համայնքին մեծ եկեղեցի էր պատշաճում: Կառույցի տեղն այժմ պատված է հողաբլուրներով, և այս հատվածի պեղումներն անկասկած նոր մանրամասներ կավելացնեն Անիի այս ուշագրավ եկեղեցու՝ Ս. Ստեփանոսի պատմությանը, հավանաբար կգտնվեն նաև վիմագրեր:

ԱՆԻԻ ԲԵԽԵՆՑ ՎԱՆՔԸ ՈՐՈՆԵԼԻՍ

Անիի գրչության ու մանրանկարչության ուսումնասիրության համար բացառիկ նշանակություն ունեն Բեխենց վանքում Մարգարե նկարչի ձեռքով նկարազարդված «Հաղբատի Ավետարանը» (ՄՄ 6288), և 13-րդ դ. սկզբների մեկ այլ Ավետարան (ՄՄ 5554): Մինչև Բեխենց վանքի գրչության կենտրոնի վերաբերյալ տեղեկությունների ի հայտ գալը, այն գրեթե դուրս էր մնացել Անիի պատմությամբ զբաղվողների ուշադրու-

[77] И. Орбели, Краткий путеводитель по городищу Ани, С.-Петербург, 1911, с. I.

թյունից: Համենայն դեպս, ոչ Ն. Մառի և ոչ Հ. Օրբելու ուսումնասիրություններում այն չի հիշատակվում:

Համառոտակի ծանոթանանք այս վանքի մասին առկա տեղեկություններին: 1215 թ. Անիի նշանավոր մեծատուն Տիգրան Հոնենցն իր կառուցած Ս. Գրիգոր Լուսավորիչ վանքի ու եկեղեցու շինարարական արձանագրության մեջ նշում է այն կառուցելու («...շինեցի զվանքս Սրբոյն Գրիգորոյ») և կատարած բազմաթիվ նվիրատվությունների մասին, ապա ավելացնում, որ ինքը նորոգել ու ընծաներով հարստացրել է Բեխենց կոչվող վանքը, պատվիրելով, որ Ս. Գրիգոր վանքի գործերը հոգացողը նաև Բեխենց վանքի «որպիսությունը» հոգա. «Եւ **զվանքն Բեխենց կոչեցեալ, զոր ես շինեցի և նորոգեցի, ընծայաւք փարթամացուցի ամէնովն**, Սուրբ Գրիգորոյ վանացս հոգացողս՝ հոգայ զորպիսութիւն»[78]:

Երկրորդ անգամ վանքի անունը, նրա առաջնորդ Եղբայրիկի հիշատակության առիթով, նշվում է Մատենադարանի վերը նշված ձեռագրում (ՄՄ 5554), որն առաջին անգամ հրատարակել է Ա. Մաթևոսյանը: Ձեռագրի խորաններից մեկի միջներիզի վրա գրված է. **«Եղբայրիկ զհայր Բեխենց վանացն յիշեցէք [յաղաւթս]»,** իսկ գլխազարդի վարդյակի թևերին մեկական տառերով շրջանաձև գրված է. «ԵՂԲԱ[ՅՐԻԿ]»[79]**:** Ավելացնենք, որ վանահայր Եղբայրիկի պատկերը պահպանվել է 1211 թ. «Հաղբատի Ավետարանի» խորաններից մեկում:

Ընդամենը այս երկու սկզբնաղբյուրն ունենք, որտեղ վկայվում է «Բեխենց վանք» անունը: **Բեխենցը** հավանաբար տոհմանուն է՝ ստեղծված Անիում տարածում գտած այլ տոհմանունների սկզբունքով, ինչպես օրինակ՝ Աբուղամրենց, Խամբուշենց, Ծիլենց, Շեխենց, Հոնենց և այլն: Այս անվանը հանդիպում ենք նաև Անիի Ս. Փրկիչ եկեղեցու 1193 թ. արձանագրության մեջ, ուր հիշատակվում է «մեծ արտ Բեխենցն»[80]**:** Բոլորովին վերջերս Բեխենց անվան մի նոր հիշատակություն է հրատարակվել Շիրակի վիմագրերի հատորում[81]**:**

---

[78] Դիվան, պր. I, էջ 62–63:

[79] Ա. Մաթևոսյան, Նշմարներ Անի քաղաքի գրչության և մանրանկարչության, «Բանբեր Մատենադարանի», 14, Երևան, 1984, էջ 121:

[80] Դիվան, պր., I, էջ 136:

[81] Շիրակում, Սառնաղբյուրից ոչ հեռու գտնվող Հոգեվանքի Ս. Կարապետ եկեղեցու ներսում գտնվող մի քարի վրա եղած նվիրատվական վիմագրում, որտեղ

Հնարավոր է, որ այս տոհմի հիմնադիրն է եղել Բեխ անունով այն համարձակ մարդը, որին հիշատակում է Վարդան Արևելցին 1090 թ. Անիում տեղի ունեցած մի դեպքի առիթով[82]:

Կարելի է ենթադրել, որ 13-րդ դ. սկզբներին Անիում Բեխենց տոհմի սնանկանալու կամ մեկ այլ պատճառով, նրանց վանքը ձեռք է բերել Տիգրան Հոնենցը: Հետաքրքրական է, որ Ս. Գրիգոր վանքի 1215 թ. շինարարական վիմագրում Հոնենցը նշում է, որ այն կառուցելու համար նախկին հայրենատերերից գնել է («իմ հալալ գանձով գնեցի ի հերենէտիրաց») տեղում եղած Ս. Աստվածածին հին, քար ու մացառ տեղանքով մատուռը: Վանքերի հայրենատիրոջ (սեփականատիրոջ) փոփոխությունը գնման եղանակով այս ժամանակ անսովոր բան չէր: Հառիճի վանքի 1201 թ. շինարարական արձանագրության մեջ Զաքարե ամիրսպասալարը գրում է. «գանձագին արարի զհոչակաւոր սուրբ ուխտս Հառիճա ի յիւր բնական հայրենատիրացն»[83]:

Հնարավոր է, որ Տիգրան Հոնենցն էլ, Բեխենց տոհմից գնել է վանքը, գուցե նրա տեղում իր վանքը հիմնելու համար: Բայց թերևս տեղը այնքան էլ հարմար չի եղել, կամ էլ մտածել են, որ ավելի շատ Բեխենց

ցավոք, նվիրատուի անունը չի պահպանվել, բայց մնացել է տոհմանունը՝ «...ՅՈՒ ԲԵԽԵՆՑ ԵՏ(ՈՒ)... ՈՒ Ի ՀՈԳԵՎԱՆՔՍ...»: Այնուհետև նշվում է առաջնորդի անունը՝ Գէորգ և նվիրատվության դիմաց պատարագ ստացողներից մեկը՝ Գրիգոր: Դժվար է կռահել, թե ինչ բառ է եղել Բեխենց տոհմանունից առաջ, բայց տվյալ դեպքում կարևորը հենց այդ անվան առկայությունն է: Կարելի է ենթադրել, որ 12-րդ դ. վերջերի կամ 13-րդ դ. սկզբների արձանագրություն է (Դիվան, պր. X, էջ 27):

82 Վարդան Արևելցին, որն իր պատմության՝ Անիին վերաբերող տվյալները սովորաբար քաղել է Մխիթար Անեցու այժմ կորած պատմությունից, հավանաբար նույն աղբյուրից օգտվելով, 1090 թ. քաղաքում ծագած սովի առնչությամբ գրում է. «... եղև ի պատճառս մարախոյ և երաշտոյ սով սաստիկ և ի յԱնի քաղաք կարի իմն նեղութիւն. ուստի զմեռեալս թաղել ոչ կարէին և ոչ օրինաց հաղորդել. որ և այր մի ասեն քաջութիւն ցուցեալ և սէր առ Աստուած՝ թաղեաց անձինս վեց հազար, Բէխ անուն էր նորա» (Վարդան Արևելցի, էջ 113, 152): Հնարավոր է, որ հենց այս Բեխն է եղել Անիի Բեխենց տոհմի հիմնադիրը:

83 Դիվան, պր. X, էջ 45: Այս երևույթի մասին տես նաև՝ Ա. Մանուչարյան, Հայոց եկեղեցու պատմության վիմագրագիտական-պատմագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2019, էջ 123-137:

տոհմանունով հայտնի վանքի վերաշինությամբ դժվար թե նրա անունը մոռացվի ու փոխարինվի նորով (իր անվամբ): Ամեն դեպքում, նաև այդ վանքն է նորոգել, իսկ 1215-ին Ս. Գրիգոր Լուսավորչի վանքի կառուցումից հետո, Բեխենց վանքը, որոշ իմաստով, կցել է սրան: Բայց եթե նկատի ունենանք, որ Բեխենց վանքը նաև գրչության կենտրոն էր, որի ձեռագրերի նկարազարդումներում ակնառու են աշխարհական տարրերը, իսկ Տիգրան Հոնենցը (գործունեությունից ու թողած ժառանգությունից դատելով) գեղարվեստի նկատմամբ հակումներ ունեցող մարդ էր, ապա չի կարելի բացառել, որ ի սկզբանե նա Բեխենց վանքը ձեռք է բերել հենց մշակութային, հովանավորչական նկատառումներով:

Ինչպես երևում է, Բեխենց վանքը Անիում կատարված պեղումների շրջանում արդեն խիստ ավերակ վիճակում էր և առանց վիմագիր արձանագրությունների: Այդ է պատճառը, որ քաղաքի ավերակներին անդրադարձող մի շարք ուսումնասիրողներ պարզապես չեն հիշատակում այն: Բեխենց վանք անունը հանդիպում է միայն Թորոս Թորամանյանի մոտ: Ըստ նրա՝ Բեխենց վանքը գտնվում է Անիի արևելյան մասում, Տիգրան Հոնենցի կառուցած Գրիգոր Լուսավորչի և Կուսանաց վանքերից ոչ հեռու, ճանապարհամերձ բարձունքի վրա: Նա այս մասին խոսում է հպանցիկ, ձորի կամուրջով և Ծիլենց Սարգսի դռնով դեպի քաղաք մտնող ճանապարհը նկարագրելու ժամանակ[84]: Այդ նկարագրությամբ առաջնորդվելով՝ հիշյալ վայրը Արտաշես Մաթևոսյանը նույնացրել է Հ. Օրբելու «Անի քաղաքի համառոտ ուղեցույցում» զետեղված հատակագծի 90-րդ թվահամարի շինության հետ, որի մասին նշված է՝ «ավերակներ»[85]:

Անիին նվիրված իր գրքում Սամվել Կարապետյանը Բեխենց վանքը նույնացրել է գրականության մեջ Կուսանաց վանք անվանված՝ Ախուրյանի կիրճում գտնվող հայտնի հուշարձանախմբի հետ, համարելով, որ

---

[84] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության (աշխ. ժողովածու), Երևան, 1942, էջ 385, նույնի, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության (աշխատությունների երկրորդ ժողովածու), Երևան, 1948, էջ 50, 185:

[85] Ա. Մաթևոսյան, Նշմարներ Անի քաղաքի գրչության և մանրանկարչության, էջ 122-125, *И. Орбели, Краткий путеводитель* по городищу Ани, с. II.

այն Տիգրան Հոնենցն է կառուցել[86]: Սակայն այդ մասին փաստական տվյալներ չկան:

2012 թ. երբ առաջին անգամ եղա Անիում, իմ առաջին գործը եղավ Ախուրյանի առափնյա հատվածում փնտրել այն վայրը, որի մասին ակնարկել էր Թ. Թորամանյանը: Այդպիսի քիչ թե շատ աչքի ընկնող ավերակ չկարողացա գտնել (հատակագծի համար 90-ը): Սակայն նրանից արևմուտք, մի բլրակի վրա աչքի զարնեցին այլ ավերակներ, որոնց մեջ առանձնանում էին փոքր եկեղեցու մուտք հիշեցնող զույգ քարերը և սյուների առաջին զույգը (նկ 3): Այդ շինությունն արևելք-արևմուտք առանցքով է եղել, որը համապատասխանում է եկեղեցու դիրքին: Հայաստան վերադառնալուց հետո Հ. Օրբելու հատակագծում գտա այդ վայրը, որը նշված էր որպես «91a, ավերակներ» (գծ. 2)[87]:

Հաջորդ տարի Անի այցելության ժամանակ նորից եղա այս տեղում: Շուրջը թափված քարերի մեջ կարողացա գտնել ու լուսանկարել պա-



Գծ. 2. Անիի Ախուրյանի ափամերձ հատվածը և ենթադրյալ վանքի տեղը (91a):

տուհանների հատվածներ և ճարտարապետական բազմաթիվ այլ ուշագրավ մանրամասներ (նկ. 4 – 11): Պետք է ասել, որ ձորահայաց բլրակը, որի վրա կառույցն է՝ կից շինություններով, քաղաքից որոշակիորեն

86 Ս. Կարապետյան, նշվ. աշխ. էջ 197-198:

87 И. Орбели, Краткий путеводитель по городищу Ани, с. II.

3. Ենթադրաբար եկեղեցու մուտքի հատվածը:

4.

5.

6.

7.

8.

9.

10.

11.

4–11. Ճարտարապետական դետալներ:

առանձնացած դիրք ունի: Այնտեղից ուղիղ տեսարան է բացվում դեպի Ախուրյանի կամուրջը (նկ. 12): Իհարկե, հիմա դժվար է հաստատապես պնդել, թե դա վանքն է եղել և հատկապես՝ Բեխենց վանքը: Բայց պահպանված հատվածից ու բեկորներից ենթադրելի է, որ այդտեղ եկեղեցի է եղել: Նրա հյուսիսարևելյան կողմում, որտեղ այժմ միայն քարակույտեր են, հավանաբար վանքի խցերն էին: Լուսանկարներից նաև երևում է, որ տարածքը պարիսպ է ունեցել (նկ. 13): Ընդհանրապես, պարսպի առկայությունը կարևոր էր վանքերի համար, եթե անգամ դրանք պարսպապատ քաղաքի ներսում էին: Պատահական չէ, որ Տիգրան Հոնենցն իր վանքի կառուցման 1215 թ. արձանագրության մեջ կարևոր է համարում նաև նշել՝ «պարսպեցի շուրջանակի»[88]: Ախուրյան ձորահայաց այս բլրակի վրա (նկ. 14) փոքրիկ վանքի գոյության մասին ենթադրության օգտին կարող է լինել նաև ընդհանրապես վանքերի տեղի ընտրության

[88] Դիվան, պր, I, էջ 63:

12. Հուշարձանից դեպի կամուրջն ու միջնաբերդը բացվող տեսարանը:

հայկական միջնադարյան ավանդույթը, երբ նախընտրությունը տրվում էր ձորերի ու կիրճերի ափերի բարձրադիր կամ առանձնացված դիրք ունեցող հատվածներին: Հենց Անիում, այս ավերակներից դեպի արևելք են գտնվում Տիգրան Հոնենցի կառուցած Ս. Գրիգոր Լուսավորչի վանքն ու այսպես կոչված Կուսանաց անապատը:

Անիի հնագիտական ժառանգությունն այնքան հսկայական է, որ այնտեղ դեռ հարյուր տարի կարող են պեղումներ ու բացահայտումներ արվել (ցանկալի է, որ պեղումներն արվեն միջազգային խմբերով): Հուսանք, որ մի օր հերթը կհասնի նաև քաղաքի այս հատվածին, որից հետո պարզ կդառնա սույն փոքրիկ համալիրի ինչ լինելը, գուցե նաև նրա անունը:

1211 թ. Բեխենց վանքում Սահակ Անեցու համար «Հաղբատի Ավետարանը» նկարազարդելիս Մարգարեն խորաններից մեկում պատկերել է մի երիտասարդի, որը ուսին հենած կեռագլուխ փայտից մի մեծ ձուկ

13. Պարսպի հիմնամասի մնացորդները:

14. Ախուրյանի ձորահայաց բլրակը կառույցների ավերակներով:

ունի կախած, և նկարին կից գրել է՝ «Շերանիկ, քանի գաս, ձուկն բեր» (նկ. 15): Արվեստաբանական գրականության մեջ այս Շերանիկին երբեմն կոչում են ձկնորս, իրականում նա զինվորական էր, և ինչպես երևում է, Մարգարեի ու Սահակի բարեկամը, որին այսպիսի մտերմիկ ուղերձ է թողել նկարիչը: Կարելի է չկասկածել, որ նա այդ ձուկը բերել էր մոտակա Ախուրյան գետից: Հուսանք, որ պատմությունն անհայտության մեջ չի թողնի վանահայր Եղբայրիկի և տաղանդավոր Մարգարեի երբեմնի վանքը, որի չմոռացված այցելուն էր հյուրասեր Շերանիկը:

15. Շերանիկ, նկարիչ Մարգարե, 1211 թ., Անիի Բեխենց վանք (ՄՄ 6288, էջ 8բ):

ԱՂԹԱՄԱՐ

Աղթամարի Ս. Խաչ եկեղեցում Թուրքիայի կառավարության միջոցներով վերանորոգման աշխատանքներ արվեցին, և 2007 թ. տեղի ունեցավ բացումը, որն ինչ-որ տեղ վերածվեց քարոզչական միջոցառման: Իր տարածքի հազարավոր հայկական հուշարձանների ոչնչացման դիմաց փորձ էր արվում ցույց տալ, թե այդ պետությունն իբր հանդուրժող ու հոգատար է նաև քրիստոնեական ու հայկական մշակույթի նկատմամբ: Այդ ժամանակ ես մի մտահղացում ունեի՝ Հայաստանում կազմակերպել «Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային գիտաժողով և ցուցահանդես, ցույց տալով այս կենտրոնի հսկայական նշանակությունը հայոց միջնադարյան պատմության ու մշակույթի համար, որը չի սահմանափակվում միայն Ս. Խաչ եկեղեցով: Ցավոք, դա հնարավոր չեղավ կյանքի կոչել, բայց մի քանի տարի անց նախաձեռնեցի այդ նույն անունով գրքի հրատարակությունը, որին մասնակից դարձրեցի նաև Մատենադարանի իմ երիտասարդ գործընկերներին՝ Լուսինե Թումանյանին («Աղթամարի ձեռագրական ժառանգությունը» ենթավերնագիրը և Աղթամարում գրված ձեռագրերի ցանկը) և Արփինե Ասրյանին («Սուրբ Խաչի պատկերաքանդակները» ենթավերնագիրը): Գրքի մյուս, իմ հեղինակած բաժիններն են՝ Վանա լիճը և Աղթամար կղզին, Գագիկ Արծրունի թագավորն Աղթամարում, Սուրբ Խաչ եկեղեցին և կղզու մյուս կառույցները, Աղթամարի կաթողիկոսությունը, Հայոց վերջին թագավորական օծումն Աղթամարում, «Արմենիկ» քաղաքը, Նոր շրջան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ:

Ավելորդ չեմ համարում այստեղ մեջբերել գրքի սկզբում զետեղված «Երկու խոսքը»:

«Վանա լճի Աղթամար կղզում 915-921 թթ. Գագիկ Արծրունի թագավորի կառուցած Սուրբ Խաչ եկեղեցին իր բացառիկ պատկերաքանդակների շնորհիվ դասվում է հայ և համաշխարհային արվեստի գլուխգործոցների շարքին: Աղթամարն ինչպես եկեղեցու կառուցման ժամանակ,

այնպես էլ դրանից հետո, ընդհուպ Առաջին աշխարհամարտի եղերական տարիները, եղել է Հայոց ամենանշանավոր հոգևոր և մշակութային կենտրոններից մեկը: Միջնադարում այն Վասպուրականի Արծրունյաց թագավորության մայրաքաղաքն էր (10–11–րդ դդ.)՝ կառուցապատված հստակ նախագծով, պաշտպանական համակարգերով, զարդարված թագավորական շքեղ պալատով և այլն: 12–րդ դարից կղզին դարձավ Աղթամարի կաթողիկոսության կենտրոնը, որի գործունեությունը հատկապես 14–16–րդ դարերում պատմական մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Կղզում այդ շրջանում եվրոպացի այցելուների վկայությամբ շուրջ 600 տուն զուտ հայ բնակչությամբ քաղաք կար, որը նրանք կոչում են «Արմենիկ»: Աղթամարում այս շրջանում ևս կառուցվել են եկեղեցիներ ու այլ շինություններ, իսկ կաթողիկոսներից ոմանք, որոնք Արծրունյաց տոհմի ժառանգներ էին, փորձում էին իրենց գործունեությամբ հավատարիմ լինել նախնյաց ավանդներին, վառ պահել պետականության գաղափարը:

Աղթամարը եղել է հայ մշակույթի, գրչության, մանրանկարչական արվեստի և ձեռագրապահպանման խոշոր կենտրոն, որի հարյուրավոր նմուշներ հասել են մինչև մեր օրերը: Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում այժմ պահվում է Աղթամարում գրված ու նկարազարդված շուրջ ինը տասնյակ ձեռագիր մատյան, Սուրբ Էջմիածնի Գանձատանը ցուցադրվում է Աղթամարի մեռոնի արծաթյա զարդարուն կաթսան, Հայաստանի մյուս և արտասահմանյան թանգարաններում նույնպես կան աղթամարյան եկեղեցածիսական առարկաներ ու նյութեր:

Չնայած իր հարուստ պատմական անցյալին ու մշակութային հսկայական ժառանգությանը՝ Աղթամար անունն այսօր, սովորաբար, զուգորդվում է միայն Ս. Խաչ եկեղեցու հետ: Պատմական հանգամանքների բերումով այժմ Թուրքիայի տարածքում գտնվող Աղթամարը դարձել է այդ երկրի զբոսաշրջության գրավիչ կետերից մեկը, որի շնորհիվ համապատասխան գերատեսչության միջոցով 2003–2007 թթ. իրականացվել է եկեղեցու նորոգումը: Անկասկած Ս. Խաչի նորոգումը նաև համաշխարհային քաղաքակրթական ժառանգության նկատմամբ հարգանքի արտահայտություն է և գնահատելի քայլ: Սակայն պետք է ցավով արձանագրել, որ Սուրբ Խաչի հարյուրավոր քույր եկեղեցիները (նրան տա-

ռեկից, ավելի հին կամ նոր), Վանա լճի շրջակա գավառներում տասնամյակներ ի վեր ոչնչացման են ենթարկվել...

Հայ ժողովրդի համար Աղթամարը սոսկ ճարտարապետական հրաշալիք չէ, այլև պատմություն, բազմաշերտ մշակութային ժառանգության աղբյուր, նաև՝ ավանդական սրբավայր: Սույն ժողովածուի նպատակն է ընդհանուր գծերով ներկայացնել Աղթամարի պատմության կարևոր դրվագները, Սուրբ Խաչը և աղթամարյան պատմամշակութային թանկագին ժառանգությունը»[89]:

Ստորև կանդրադառնամ միայն այն թեմաներին, որոնց մասին չեմ գրել հիշյալ գրքում: Դրա համար մասամբ նյութ է տվել նաև 2012 թ. այցելությունն Աղթամար:

Ա. ԽԱՉԻ ՊԱՏԿԵՐԱՔԱՆԴԱԿՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՃԱՌԻ ՄԱՍԻՆ

Աղթամարի եկեղեցին իր արտաքին և ներքին հարուստ հարդարանքի շնորհիվ ոչ միայն բացառիկ է հայ միջնադարյան մշակույթի պատմության մեջ, այլև առավել ուսումնասիրվածներից է (նկ. 1): Սակայն, որքան ինձ հայտնի է, քննության առանձին հարց չի դարձել, թե ինչո՞ւ է Աղթամարի տաճարը արտաքինից ամբողջովին քանդակազարդվել: Որոշ այլազգի հետազոտողներ պատկերաքանդակները համարել են օտար ազդեցությունների արգասիք[90], որն, իհարկե, անընդունելի է: Բայց իրողությունն այն է, որ ո՛չ Աղթամարից առաջ, ո՛չ էլ հետո որևէ հայկական եկեղեցի այդ ձևով չի հարդարվել: Նշանակում է, ուրիշ ոչ մի դեպքում չի եղել այնպիսի մի պատճառ, որպիսին եղել է Աղթամարում: Պարզ է, որ դա առաջին հերթին տեղի է ունեցել պատվիրատուի ցանկությամբ, բայց ի՞նչ պայմաններում կարող էր ծնվել այդ գաղափարը, որի իրականացումը նաև զգալի նյութական միջոցներ էր պահանջում:

Թովմա Արծրունու շարունակող Անանունը, որն իր պատմությունը

---

[89] Կ. Մաթևոսյան, Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը (հեղինակակիցներ՝ Լ. Թումանյան, Ա. Ասրյան), Ս. Էջմիածին, 2013 (թվայնացվածը՝ www.armenianart.org կայքում):

[90] Այս մասին տե՛ս Ստ. Մնացականյան, Աղթամար, Երևան, 1983, էջ 16–17, Կ. Մաթևոսյան, Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը (Ա. Ասրյանի հոդված), էջ 73:

1.Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին (այս և քանդակների լուսանկարները Հրայր Բազէի):

գրել է Գագիկ Արծրունու պատվերով, մանրամասն պատմում է, թե ինչպես են կառուցվել Աղթամարի շինությունները, գրում է, որ թագավորն ինքը՝ «վարպետի լարը ձեռքին»[91], մասնակցում էր նախագծմանը, նշում է պալատի ճարտարապետական կառուցվածքից, նկարագրում որմնանկարները, ապա հանգամանորեն խոսում է եկեղեցու մասին, թվարկում քանդակների թեմաները: Բայց այդ նկարագրության մեջ մի շատ կարևոր վկայություն կա եկեղեցու քարերի՝ Աղձնիքի Կոտոմ բերդից բերելու մասին: Ընդ որում՝ պատմիչը որոշակիացնում է, որ դրանք պատկանում էին մի հեթանոսական շինության (այս մասին ավելի մանրամասն՝ քիչ հետո):

Ժամանակին նախ՝ Լիդիա Դուրնովոն (1885–1963), ապա՝ Ասատուր Մնացականյանը (1912–1983) առաջ են քաշել մի ենթադրություն,

[91] Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1978, էջ 297:

2. Կենդանիների գոտին, որի քանդակների մեծ ելուստը երևում է նաև ստվերներից:

ըստ որի՝ տաճարի քանդակներից այն կենդանապատկերները, որոնք առանձին գոտի են կազմում (կենդանիների կամ կենդանաքանդակների գոտի) և պատերից բավական շատ են դուրս ցցված (նկ. 2), հենց Կոտոմից են բերվել և սկզբնապես այնտեղի տաճարին են պատկանել[92]: Այս տեսակետն այնքան էլ տարածում չի գտել: Բայց պետք է ասել, որ այդ քանդակները ոճով, ձևով ու մշակմամբ ակներևորեն տարբերվում են տաճարի մյուս պատկերաքանդակներից, որի մասին նշում են բոլոր ուսումնասիրողները: Դրանք նաև ավելի մաշված ու վնասված են, մի քանիսի հիմնամասի չափերն էլ տարբերվում են՝ ավելի փոքր են տաճարի մյուս քարերից, որի համար բարակ կցաքարեր ունեն (նկ. 3): Հատկանշական է նաև, որ, ի տարբերություն եկեղեցու՝ հարթաքանդակային եղանակով արված քանդակների, այս գոտում առկա են բարձրաքան-

[92] Տես Л. Дурново, Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, 1979, с. 73–74, Աս. Մնացականյան, *Հեթանոսական ժամանակների քանդակներ Աղթամարի Սուրբ Խաչ վանքի* որմնաշարվածքում, «Լրաբեր» 1983, թիվ 2, էջ 83–93:

3. Կենդանաքանդակներ, որոնք պատի մեջ ագուցված են բարակ կցաքարերով:

դակային լուծումով նմուշներ, այսինքն դրանք մի փոքր մասով են միայն հպված պատին: Ինչևէ, վերոհիշյալ ուսումնասիրողների հետ համամիտ լինելով, կարող ենք ենթադրել, որ Կոտոմից բերված այդ, թերևս տոտեմական, պահպանիչ նշանակությամբ քանդակներով քարերը, թագավորի ցանկությամբ նույնությամբ տեղադրվել են եկեղեցու պատերի մեջ:

Բայց ի վերջո, տաճարի բոլոր քարերն էլ Կոտոմից էին բերված, այսինքն հեթանոսական տաճարին են պատկանել: Հարց է առաջանում՝ արդյո՞ք չպետք է դրանց սրբագործման անհրաժեշտությունն առաջանար, և գուցե հենց ամբողջական սրբագործման մի եղանակ է ընտրվել քրիստոնեական թեմաներով եկեղեցու պատերի համատարած քանդակազարդումը: Եթե արքայի ցանկությունն էր, որ Կոտոմի քանդակները դրվեն տաճարի պատերին, և նրա շրջապատի հոգևորականները չէին կարող դրան ընդդիմանալ, ապա կարող էին առաջարկել պատերի ողջ մակերեսի քանդակազարդումը՝ որոշակի ծրագրով, Աստվածաշնչի թեմաների, Արծրունյաց տոհմի ու Գագիկի փառաբանման լայն պատկերա-

շարով, որից արքան չէր կարող հրաժարվել: Այս ծրագրի իրականացմամբ Կոտոմի քանդակներն էլ հնարավորին չափ կձուլվեին ընդհանուր քանդակազարդ համապատկերին, ինչը և տեսնում ենք այժմ: Ահավասիկ ծավալուն քանդակազարդման համար մի պատճառ, որը չի եղել ոչ Աղթամարից առաջ, ոչ էլ նրանից հետո կառուցված որևէ հայկական եկեղեցու պարագայում:

Սակայն սա նախնական դիտարկում է, տեսնենք, թե որքանով այն կարող է հիմնավորվել եղած փաստական տվյալներով ու տարբեր կռվաններով: Մի նկատառում ևս. Աղթամարի ուսումնասիրության ժամանակ մինչև այժմ, հիմնականում ելակետ են ընդունվել բուն տաճարը՝ ճարտարապետությամբ ու պատկերաքանդակներով: Մնացած բոլոր հարցերը, այդ թվում կենդանիների գոտու առանձնահատկության հանգամանքը, քննվել են այդ համատեքստում: Բայց եթե ելակետ դարձնենք պատմաժամանակագրական մոտեցումը, ապա կստանանք կատարված աշխատանքների հաջորդականության հետևյալ պատկերը.

1. Գագիկ թագավորը որոշում է կայացնում Աղթամարում հաստատել իր նստավայրը, կառուցել ամրացված քաղաք, նավահանգիստ, նաև պալատ ու եկեղեցի (այդ հսկայական ծախսատար ծրագիրն իրականացվել է անվտանգության նկատառումներով, կանխատեսվող արաբական արշավանքի դեպքում հուսալի ապաստան ունենալու համար):
2. Աղթամարի քաղաքի նախագծումը կատարվում է թագավորի անմիջական մասնակցությամբ, իսկ ճարտարապետ Մանվելի գլխավորությամբ իրականանում է պալատի կառուցումն ու որմնանկարազարդումը:
3. Գագիկ թագավորը գրավում է Կոտոմ բերդը: Թագավորական եկեղեցու շինարարության համար սրբատաշ քարեր ունենալու նպատակով քանդվում է տեղի հնագույն տաճարը, և քարերը (քանդակներով հանդերձ) տեղափոխում են Աղթամար:
4. Կատարվում է տաճարի նախագծումը՝ ճարտարապետ Մանվելի ձեռքով:
5. Տաճարի ողջ քանդակային, պատկերագրական համակարգը մշակվում է բանիմաց կրոնավորի խորհուրդներով, որոշվում են կենդանիների քանդակները պատերի մեջ դնելու տեղերը և հիմնավորումը:

6. Ճարտարապետ Մանվելի ղեկավարությամբ պատրաստվում են նոր քանդակները և կատարվում է եկեղեցու շինարարությունը:
7. Կառուցման ավարտից հետո իրականացվում է եկեղեցու ներքին հարդարանքը (որմնանկարազարդում, թագավորական օթյակ և այլն):

Այժմ մեր առաջադրած հարցի տեսանկյունից ավելի հանգամանորեն ծանոթանանք առավել կարևոր տվյալներին ու հանգամանքներին: Առաջին հերթին խոսենք Գագիկ Արծրունու մասին, քանի որ կատարվածը հենց նրա նախաձեռնությունն էր, ուստի նրա կերպարի բացահայտումը կարող է մասամբ նպաստել նաև այլ հարցերի մեկնաբանությանը: Բարեբախտաբար, այս գահակալի մասին տեղեկությունների պակաս չկա:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ

Շինարարական, մշակութային ամեն մի ձեռնարկի մեջ հնուց ի վեր շատ կարևոր է պատվիրատուի հանգամանքը: Առավել ևս, եթե կան անսովոր երևույթներ, ակնառու նորություններ և այլն, այդ դեպքում պետք է փորձել ճանաչել ոչ միայն արվեստագետին, այլև պատվիրատուին:

Գագիկ Արծրունու մասին մենք բավականին շատ բան գիտենք, ավելի շատ, քան միջնադարյան որևէ այլ հայ թագավորի մասին, շնորհիվ Թովմա Արծրունի պատմիչի շարունակողի, որի անունը չի պահպանվել, պատմագրության մեջ կոչվում է Անանուն, և որի պատվիրատուն հենց Արծրունի թագավորն էր: Բարեբախտաբար, նա դիտողականությամբ օժտված մարդ էր և զանազան տեղեկություններով, հատկապես շինարարական ձեռնարկներին վերաբերող բավական հարուստ տվյալներով մի գործ է գրել, որի՝ Աղթամարին նվիրված գլուխը եզրափակում է Գագիկ Արծրունուն ուղղված հետևյալ խոսքերով. «Բայց մենք, ըստ պատշաճի, որքան մեր կարողությունն է, կատարեցինք քո գեղեցիկ ցանկությունը, ո՛վ քաջազգի, նախնական, արգասավոր ու մեծ տան զավակ»[93]: Անա-

[93] Թովմա Արծրունի և Անանուն, էջ 299: Գրաբարը՝ «Բայց մեր զդիպողսն և զպատշաճաւորսն որքան է կարողութիւն՝ ի լրումն ընծայեցաք գեղեցիկ քոյոցդ ախորժակաց, ո՛վ քաջազգի և տան մեծի արգասաւոր և նախնական մեծ» (Թովմա Արծրունի և Անանուն, Մատենագիրք Հայոց, ԺԱ. հատոր, Ժ. դար, պատմագրություն, Անթիլիաս, 2010, էջ 290), այսուհետև՝ Մատենագիրք Հայոց:

նունը Գագիկին դիմում է նաև պատմության մեկ այլ հատվածում: Բայց շատ կարևոր է, որ Գագիկ Արծրունու մասին ունենք նաև նրան փառաբանելու պարտականությունից ազատ այլ պատմիչների վկայություններ:

Գագիկի կենսագրությունն արկածային պատմություն է հիշեցնում. նա իր հոր՝ Վասպուրականի գահերեց իշխան Դերենիկի միջնեկ որդին էր: Վերջինիս դավադրաբար սպանեցին, երբ նրա երեք տղաները՝ Աշոտը, Գագիկը և Գուրգենը, մանկահասակ էին: Խնամակալ դարձած Ապումրվան իշխանը, որն ի դեպ Դերենիկի սպանության կազմակերպիչներից մեկն էր, տղաներին արգելափակված էր պահում տարբեր բերդերում: Երբ Գագիկը 15 տարեկան էր, իր որոշ բարեկամների օգնությամբ փախչում է իր կալանավայր բերդից և Վանի հրապարակում անակնկալ հարձակվելով սպանում Ապումրվանին ու գլխատում: Ապումրվանի մատից հանելով իշխանության կնիքով մատանին՝ Գագիկն այն տանում է ավագ եղբորը, որն էլ դառնում է Վասպուրականի գահերեց իշխան: Երկրամասում իշխանության եկած դեռևս վաղ տարիքում գտնվող եղբայրները ստիպված էին թե՛ ներքին, թե՛ արտաքին բազում դժվարությունների դիմագրավել: Դրանցից առավել վտանգավորը Ատրպատականի Ավշին (Ափշին) ամիրայի ոտնձգություններն էին, որը նեղ կացության էր մատնել Հայոց Սմբատ Ա Բագրատունի (890–914) թագավորին, որն Արծրունի եղբայրների մորեղբայրն էր: Ավշինը նրանցից պատանդներ է պահանջում, և Աշոտը որպես պատանդ ուղարկում է Գագիկին: Ինչպես Անանուն պատմիչն է գրում, 7 ամիս պատանդության մեջ լինելուց հետո, նրան հետ են բերում և ուղարկում Գուրգենին: Նա որոշ ժամանակ անց փախչում է պատանդությունից, վերադառնում Վասպուրական, որին հաջորդում է Ավշինի պատժիչ արշավանքը, և երկիրը ասպատակության է ենթարկվում:

Հետագա տարիները նույնպես անխռով չեղան, Մանազկերտի կայսիկների դեմ մի կռվից հետո Աշոտը հիվանդացավ ու մահացավ 29 տարեկանում, իշխանությունն անցավ Գագիկին (904 թ.), որն այդ ժամանակ 24 կամ 25 տարեկան էր: Ընդամենը չորս տարի անց նա դարձավ թագավոր: Դա տեղի ունեցավ ռազմաքաղաքական դեպքերի ավելի լայն համատեքստում: Բայց մինչ այդ նշենք, որ գահերեց իշխան դառնալուց հետո նա կրտսեր եղբոր հնարավոր հավակնությունները չեզոքացնելու

համար իշխանության մի մեծ հատված տվեց նրան, ինչպես Անանունն է գրում՝ «երկրի բարեշինության համար բաժանեցին գավառներն ու բերդերը երկուսի միջև»[94]: Նրանք կարողանում են գրավել մի քանի կից գավառներ, հնազանդեցնում իշխանության ներսում եղած ըմբոստներին:

Այդ շրջանում Ատրպատականի ամիրա Յուսուֆը որոշում է օգտվել Հայաստանի ներքին հակասություններից: Վասպուրականի Արծրունի և Սյունյաց իշխանների միջև վեճ էր ծագել Նախիջևան (Նախճավան) քաղաքի համար, որը աշխարհագրականորեն և հնուց Վասպուրականի մաս էր կազմում: Սկզբում Սմբատ Բագրատունին վեճը լուծում է հոգուտ Արծրունիների, սակայն հետո, որոշումը փոխելով, քաղաքը հանձնում է Սյունյաց իշխաններին: Դրանից չափազանց դժգոհ մնացած Գագիկին (մինչ այդ նա Սմբատի հետ հակասություն էր ունեցել նաև Ամյուկ բերդի առնչությամբ, որն ինքը խլել էր արաբ ութմանիկների ցեղից), Յուսուֆը, իրեն միանալու պայմանով, խոստանում է ոչ միայն վերադարձնել Նախիջևանը, այլև խալիֆից նրա համար արքայական թագ բերել, ինչը և կատարում է 908 թ.: Դեպքերին ժամանակակից կաթողիկոս պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին նշում է, որ Յուսուֆը «հնարագետ չարությամբ... թշնամություն է գցում Սմբատ արքայի և նրա քրոջորդի Գագիկ մեծ իշխանի միջև՝ վերջինիս թագադրելով նրան հակառակ»[95]: Ինչպես այս վկայությունը, այնպես էլ այլ տվյալներ հավաստում են, որ Գագիկը չի թագադրվել որպես Վասպուրականի թագավոր, այլ՝ Հայոց թագավոր: Հատկանշական է, որ նրա կինը՝ Մլքեն, նույն 908 թ. մի շքեղազարդ Ավետարան Վարագավանքին նվիրելով, հիշատակարանում իրեն կոչում է «Հայոց թագուհի»[96]:

Հաջորդ տարի Յուսուֆի և Գագիկ Արծրունու միացյալ զորքերը հարձակվում են Սմբատ թագավորի վրա, որի բանակը Նիգ գավառում

---

[94] Թովմա Արծրունի և Անանուն, էջ 283:

[95] Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցի, Պատմություն Հայոց, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Գ. Թոսունյանի, Երևան, 1996, էջ 10–11: Աշխարհաբար թարգմանության մեջ այս հատվածում գրված է «քեռորդի», որը անփոփոխ վերցված է գրաբարից (անդ, էջ 10), և որը տվյալ դեպքում նշանակում է «քեռ», այն է՝ «քրոջ» որդի:

[96] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե–ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 49:

պարտության է մատնվում, իշխաններից շատերը լքում են նրան: Դեպքերի դրամատիկ ընթացքը շարունակվում է հաջորդ տարիներին: Հայոց միջնաշխարհը մատնվում է ավերի ու կողոպուտի:

Թշնամիներից հալածված Սմբատը Կապույտ բերդում տևական ժամանակ պաշարված մնալուց հետո երկրի ավերածությունը կանխելու համար անձնատուր է լինում: Բոլորի համար պարզ էր, որ Յուսուֆը նրան չի խնայելու, քանի որ մինչ այդ սպանել էր տվել ճակատամարտում գերի ընկած արքայորդի Մուշեղին: Գագիկը հասկանալով, որ Սմբատի դեմ իր պայքարը վեր է ածվել հայրենի երկրի նկատմամբ դավաճանության, միաժամանակ, թերևս զգալով, որ հաջորդ զոհը կարող է ինքը դառնալ, հարմար պահ ընտրելով, փախչում է Յուսուֆից և քաշվում Վասպուրական[97]: Հովհաննես Դրասխանակերտցին գրում է, որ երբ Գագիկը այդ աղետները տեսավ, նրան «ամոթը պատեց ընդունայն վաստակի համար», ապա շարունակում է՝ «և հանկարծակի ձի նստելով՝ փախչում է իր աշխարհը» [98]: Իսկ Ստեփանոս Տարոնացի Ասողիկը գրում է, որ Գագիկը հեռացել է Սմբատի դաժան մահապատժից հետո, որը տեղի ունեցավ 914 թ. Դվինում (նրան կախաղան են հանում, ապա գլխատում են և մարմինը խաչում քաղաքի դարպասներից մեկի վրա): Դրանից հետո սկսվում են հավատափոխության պահանջը մերժած այլ իշխանների մահապատիժներ: Պատմիչը գրում է. «Զայս ամենայն տեսեալ Գագկայ Արծրունւոյ, որ էր առաջնորդ Յուսուփի՝ ի գիշերի միում փախուցեալ անկանի յաշխարհն Կորդուաց և զաշխարհն Վասպուրական, գաղթէ յԱսորեստան, մինչև անցանել չար ամպրոպին»[99]:

Այս դեպքին ավելի մանրամասն անդրադարձանք, քանի որ հենց այս իրադարձություններով էր պայմանավորված Աղթամարի ընտրությունը, որպես թագավորական նոր նստավայր[100]: Սմբատի ողբերգական

---

[97] Վ. Վարդանյան, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը 908-1021 թթ., Երևան, 1969, էջ 86-88:

[98] Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցի, էջ 239:

[99] Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, աշխատասիրութեամբ Ստ. Մալխասեանցի, ՍՊբ, 1885, էջ 168-169:

[100] Հատկանշական է, որ Գագիկը մինչ այդ որպես նստավայր ամրացրել էր ծովահայաց Ոստան քաղաքը, այստեղ պալատ կառուցել, պարսպել «զորավոր վեմերով»: Հայտնի է նաև, որ ամրացրել էր Վանի բերդը:

4. Աղթամար կղզին հյուսիսից:

ճակատագիրը նկատի ունենալով՝ Գագիկը հասկանում էր, որ ցամաքի վրա գտնվող թեկուզ ամենահզոր բերդը չի կարող երկար ժամանակ պաշարմանը դիմակայել ու անմատչելի լինել: Համենայն դեպս, մի բան պարզ էր, որ կղզին հնարավոր չէ պաշարել (նկ. 4): Անանուն պատմիչն ուղղակիորեն նշում է, որ Գագիկը նկատի է ունեցել Աղթամարի առավելությունը պաշտպանական տեսանկյունից, գրելով, որ թագավորը «**խորագիտությամբ դիտեց և գտավ, որ այն կարող է լինել աշխարհի ապաստանը թշնամիներից** և հրոսակախմբերից, ձեռնարկեց այնտեղ հիմք դնել ահեղ ու զարմանալի որևէ բանի»[101]: Ապա մանրամասնորեն նշում է նաև պաշտպանական կառույցների մասին, գրում, որ պարիսպները «ահեղակերպ» էին, «լայնանիստ բուրգերով ու բարձր աշտարակներով»[102]: Ստեղծվում է նաև արհեստական ամբարտակով ու պարսպով ամրացված նավամատույց[103]:

---

[101] Թովմա Արծրունի և Անանուն, էջ 296:

[102] Նույն տեղում, էջ 264:

[103] Անանուն պատմիչը հայտնում է, որ թագավորական հրամանով կղզու հարավային մասում, ծանր և դժվար փոխադրելի ժայռաբեկորներով լիճը լցնելով, ստեղծել են մոտ հինգ կանգուն (2.6 մ) բարձրությամբ ամբարտակ: Դրա վրա

Այսպիսով, Յուսուֆից գաղտնի հեռացած Գագիկը եռանդով նախապատրաստվում էր արաբների պատժիչ արշավանքին կամ մեծ պատերազմի, և հենց դրա համար Աղթամարում շինարարություն նախաձեռնեց: Սակայն իրադարձություններն այնպես ընթացան, որ Յուսուֆը խրվեց ներարաբական հակամարտության մեջ ու որոշ ժամանակ անց սպանվեց, այդպես էլ Վասպուրական չմտնելով:

Գագիկի հետագա գործունեության մասին նշենք շատ ավելի համառոտ: Ատրպատականի ամիրաների հետ բախումից խուսափելուց հետո Գագիկի դիրքերը կրկին ամրապնդվում են: Նա խալիֆից երկրորդ անգամ թագ է ստանում 919 թ.: Երկրում այլ ապահով հանգրվան չգտնելով՝ 927 թ. Գագիկի մոտ՝ Աղթամար է գալիս Հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին (մահ. 929 թ.), որին հաջորդած մի քանի կաթողիկոսներ նույնպես այդտեղ են աթոռակալում: Հետաքրքրական է, սակայն, որ Գագիկը մտադիր չի եղել իր նստավայրը «կիսել» կաթողիկոսների հետ, և Աղթամար կղզու դիմաց՝ Արտոս լեռան ստորոտի Իլի բնակավայրում, Ս. Աստվածածին եկեղեցին ու կաթողիկոսարան կառուցելով, 939 թ. Եղիշե կաթողիկոսին տեղափոխում է այնտեղ [104]:

937 թ. Գագիկ Արծրունու զորքը Երասխի ափին ջախջախում է Ատրպատականից Այրարատ ներխուժած բանակը և պաշարում Դվինը: Գագիկ Արծրունին կամենում էր հրկիզել քաղաքը, բայց տեղի մեծամեծերի (ծերերի) խնդրանքով, փրկավճարի ու պատանդների դիմաց, հրաժարվում է այդ մտադրությունից[105]: Ինչպես նկատում է Ա. Եղիազարյանը, հավանաբար այս դեպքի համար վրեժ լուծելու նպատակով Ատրպատականի ամիրա Լաշքարին 938 թ. զորքով ներխուժում է Վասպուրական,

---

է բարձրացել պարիսպը՝ լայնանիստ ութ կոնտրֆորսերով և բազմաթիվ աշտարակներով: Մեծ պարիսպն ունեցել է հինգ ասպարեզ երկարություն (554 մ): Հաստահեղույս պատերին կից կառուցվել են նաև շտեմարաններ, զինանոցներ և այլ օժանդակ շենքեր: Իսկ բուն ամբարտակի կառուցումով լճի մի հատվածն արհեստականորեն առանձնացվել է իբրև պաշտպանված փոքրիկ ծովածոց նավահանգիստ (լճի մակարդակի բարձրացման պատճառով այն այժմ ջրի տակ է անցել), (Թովմա Արծրունի և Անանուն, էջ 297):

[104] Տես Կ. Մաթևոսեան, Իլու «Քառասուն խորան Ս. Աստուածածին» եկեղեցու կառուցման մասին, «Հանդէս ամսօրեայ», 2011, էջ 409–418:

[105] Թովմա Արծրունի և Անանուն, էջ 304:

բայց ջախջախվում է ու սպանվում[106]:

Հայտնի է, որ Գագիկ Արծրունին Բյուզանդիայի կողմից ճանաչվում էր որպես «իշխանաց իշխան», այսինքն՝ Հայաստանում գերակա իշխանավոր: Պահպանվել է Գագիկ Արծրունու նամակը ուղղված բյուզանդական Ռոմանոս Ա (920–944) կայսրին, որով նա խնդրում էր հայերին վերցնել իր հովանու ներքո: Նամակի նպատակն էր վերացնել երկու երկրների և ժողովուրդների միջև եղած դավանական անջրպետը («զցանկն քակել և զմիջնորմն յատակել»)՝ վերականգնելով առաջին երեք տիեզերական ժողովների ժամանակաշրջանի եկեղեցաքաղաքական բնականոն հարաբերությունները[107]:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Գագիկ Արծրունին բուռն կենսագրությամբ մի մարդ էր, որն իր հոր ավագ որդին չլինելով հանդերձ, կարողացավ հասնել նրան, ինչին որ ձգտեց՝ իշխանություն Վասպուրականում, թագ ու թագավորություն, տևական ժամանակ արաբների ու բյուզանդացիների կողմից ճանաչվեց որպես Հայաստանի գերակա իշխող, ունեցավ ռազմական ու դիվանագիտական հաջողություններ և, իհարկե, կատարեց շինարարական մեծագործություններ, որոնց պսակը դարձավ Աղթամարը: Երբ 943 թ. Գագիկ Արծրունին կնքեց իր մահկանացուն, երկու որդիներին ժառանգեց փոքր, բայց ուժեղ մի թագավորություն:

Եթե Անանունի և մյուս հեղինակների հայտնած տեղեկությունները հաշվի առնելով, փորձենք կազմել Գագիկի հոգեբանական, մարդկային կերպարի նկարագիրը, ապա նա ուժեղ կամքի տեր անհատ էր, ճկուն մտածողությամբ, բարդ իրավիճակներում իր շահին համապատասխան կողմնորոշվող, ինքնավստահ և պատվախնդիր: Ինչպես երևում է, նա նաև կրոնական իմաստով բարդույթներ չուներ, կարող էր գործակցել մահմեդական ամիրայի հետ՝ ընդդեմ Բագրատունի Հայոց թագավորի, հետո զենքն ուղղել մահմեդականների դեմ: Կարող էր բյուզանդական օգնության դիմաց հանդես գալ դավանական զիջումների առաջարկով և այլն:

Նման կենսագրություն ունեցող մարդը պետք է որ հավատար իր հաջողություններին, որոշ իմաստով ճակատագրապաշտ լիներ[108] և երկ-

---

[106] Ա. Եղիազարյան, **Հայոց Աբաս թագավորի գահակալության առաջին շրջանը**, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», 2016 № 1, էջ 36:

[107] Մատենագիրք Հայոց, հ. Ժ, Ժ դար, Անթիլիաս, 2009, էջ 793–797:

[108] Անանուն պատմիչը, որի պատվիրատուն, հետևաբար նաև առաջին ընթերցողը

նային կամ գերբնական զորությունների օժանդակությանն ապավիներ: Գալով մեզ հետաքրքրող խնդրին, կարող ենք ասել, որ եթե այս նկարագրի տեր զորեղ թագավորը որոշեր Կոտոմի հեթանոսական տաճարի քանդակազարդ քարերը, որոնք, պետք է կարծել, դարեր ի վեր ընկալվել են որպես պահպանիչ խորհրդանիշներ, բերել և դնել իր կառուցած եկեղեցու որմերի մեջ, ոչ ոք չէր կարող այդ ցանկությանն ընդդիմանալ:

ԿՈՏՈՄ ԲԵՐԴԻ ԵՎ ՏԱՃԱՐԻ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Աղթամարի կառույցների մասին Անանուն պատմիչի հայտնած տեղեկություններին անվերապահ հավատ ընծայող ուսումնասիրողները չգիտես ինչու Կոտոմի մասին տեղեկությանը պատշաճ ուշադրություն չեն հատկացրել: Նրա շարադրանքից դատելով՝ այն ժամանակ, երբ Աղթամարում ընթացքի մեջ էին քաղաքի ու պալատի շինարարական աշխատանքները, Գագիկ թագավորը արշավում է տարբեր ուղղություններով: Դա հավանաբար արվում էր Աղթամարի ծավալուն ու ծախսատար շինարարության համար միջոցներ ներգրավելու նպատակով: Թագավորը արշավում է նաև Աղձնիք ու արաբական մի ցեղից գրավում Կոտոմը: Տեսնենք, թե ինչ է գրել պատմիչը. «Հոյակապ, հռչակավոր և բարձրանշան Աղթամար քաղաքի շինության ժամանակ մեր Փրկիչը՝ Հիսուսը, զորացրեց Իր օծյալ Գագիկի բազուկը՝ նեղելու Իսմայելի գազանաբարո ցեղը, որին Գագիկն իր ձեռքով կապեց կաշկանդեց, հաստատ նպատակադրումով և պատերազմելու զորավոր արիությամբ: Ասես սանձերով նրանց կզակը ճմլեց, թոշնեցրեց, սկսած Մարաստանից, Պարսկաստանից և ամբողջ Ատրպատականից մինչև Խուժաստան: ...Պատերազմի ելավ նաև Ասորեստանի դեմ և գրավեց բազում գավառներ ամրոցներով հանդերձ: Ասորեստանի մատույցներում տեսավ **Աղձնիքի իշխանական տան մի ամրոց՝ Կոտոմ**[109] **անունով գյուղում, որին տիրել էր Ջուրա-**

Գագիկն էր, վերջինիս հոր սպանության մասին գրելուց հետո, մոր ողբը նկարագրելիս նշում է, որ նա ասում էր, թե իր վիշտը չի փարատվի, մինչև որ իր որդիներից մեկը չառնի հոր արյան վրեժը: Պատմիչը շարունակում է, որ ականատեսներն իրեն պատմել են, թե այդ խոսքերն ասելիս «Տիկինը ձեռքը գցել էր իր հրաշագեղ մանկան՝ Գագիկի ուսին» (Թովմա Արծրունի և Անանուն, էջ 272):

[109] Գյուղ Տուրուբերան նահանգի Երևարք գավառում, Վանա լճի հարավարևմտյան ափամերձ շրջանում:

րիկ[110] **կոչված ցեղը**: Սրան իսպառ ջնջեց, կորցրեց, **հիմքից տապալեց ամրոցի շինությունը, նրա քարերը, բարձեց և ծովի վրայով, բերեց տվեց սուրբ եկեղեցու շինության համար, և կռատան ձև ունեցող պղծալից շենքի փոխարեն կանգնեցրեց փառաց տաճարը: Այստեղ կատարվեց մարգարեի ասածը՝ «Եթե պատվականը անարժանից զատի, իմ բերանի պես կդառնա»** (Երեմ. ԺԵ, 19), ուր միշտ հանգչում է Սուրբ Հոգին, մարդկանց ընծայելով անստվեր լույսը»[111]:

Կարևոր հատվածը գրաբարով՝ **«զշինուածս ամրոցին ի հիմանց տապալեալ՝ զքարինս նորա բարձեալ բերէ ի վերայ մկանաց ծովուն, ընծայելով ի նիւթ շինութեան սրբոյ եկեղեցւոյն, կանգնելով փոխանակ բագնաձև պղծալից յարկացն՝ զտաճար փառաց: Աստանօր կատարի ասացեալն ի մարգարէէն՝ «որ հանէ զպատուականն յանարժանէն՝ իբրև զբերան իմ եղիցի»**, ուր միշտ հանգչի Հոգին Սուրբ, վերագրելով զմարդիկ յանստուեր լոյսն»[112]:

Պատմիչի խոսքին գրեթե ավելացնելու բան չկա: Զուտ նկարագրական, տեղեկատվական արժեքից բացի, պատմության այս հատվածը կարևոր է նաև նրանով, որ խոսքի վերջում Անանունն աստվածաշնչյան մեջբերմամբ հիմնավորում է հեթանոսական կառույցի քարերը՝ «անարժանը», սուրբ եկեղեցու կառուցմանը ընծայվելով՝ «պատվականի» վերածվելու անհրաժեշտությունը[113]: Սա քրիստոնյա, հոգևորական հեղինակի բնական արձագանքն է, տեսական մոտեցում, որը, սակայն, դեռ պետք է գործնականի վերածվեր Աղթամարում:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ, ՆՐԱ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ԿՐՈՆԱՎՈՐԸ ԵՎ ՊԱՏԿԵՐԱՔԱՆԴԱԿՆԵՐԸ

Անմիջապես վերը նշված հատվածից հետո Անանունը նկարագրում է հաջորդ գործողությունները և գրում. **«Եվ քանզի ճարտարապետն էր Մանվելը, իմաստությամբ լի և իր գործում զորավոր մի մարդ, որին հիշատակեցինք վերևում, հրաշակերտեց եկեղեցին զարմանալի ար-**

---

[110] Հայաստան գաղթած արաբական ցեղերից, որոնք հաստատվել էին Աղձնիք նահանգում:

[111] Թովմա Արծրունի և Անանուն, էջ 300:

[112] Մատենագիրք Հայոց, էջ 290:

[113] Աս. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 87:

5. Առաջին և որթագալարի գոտու միջև գտնվող կենդանաքանդակների գոտու հատված:

վեստով: Կրոնավորը, որին հիշեցինք նախապես, օգնեց նկարելու քարերի վրա ճշգրիտ նմանությամբ, սկսած Աբրահամից և Դավթից մինչև մեր Տեր Հիսուս Քրիստոսը: Հորինեց նաև մարգարեների ու առաքյալների դասերը, զարմանալի տեսքով, ըստ յուրաքանչյուրի դիրքի: Եկեղեցու շինվածքի շարքերում ստեղծագործեց, շարակարգեց երեների խումբը և թռչունների երամները, ինչպես նաև գազանների, խոզերի ու առյուծների, ցուլերի ու արջերի խմբերը, քանդակազարդված միմյանց դեմդիմաց, հիշեցնելով ապրելու համար նրանց կռիվը, ինչը հույժ ըղձալի է իմաստուններին: Եկեղեցու իրանը գոտևորեց գովեստի արժանի շրջանակով, որը զարդարեց նուրբ կտրվածքներով, վրան նկարեց խաղողի որթեր, այգեգործների, գազանների ու սողունների հետ միասին: Նրանց կերպարանքը այլևայլ զանազանությամբ, ամեն մի մասում նմանվում է իր տեսակին»[114]:

Կարևոր հատվածը գրաբարով՝ **«Եւ քանզի ճարտարապետ արուեստին էր Մանուէլն, զոր ի վեր անդր ցուցաք, այր լի իմաստութեամբ և զօրաւոր ի գործս իւր՝ հրաշակերտէ զեկեղեցին զարմա-**

[114] Թովմա Արծրունի և Անանուն, էջ 300:

նագործ արուեստիւ. և զոր վերագոյնն ցուցաք կրօնաւորն ձեռն տայ նկարագրել զքարինսն ճշգրտագործ նմանահանութեամբ, սկսեալ յԱբրահամայ և ի Դաւթէ և մինչև ցտէր մեր Յիսուս Քրիստոս, զդասս մարգարէից և առաքելոց յօրինեալ ըստ իւրաքանչիւր հանդիսի զարմանագործ տեսլեամբ»[115]:

Անանուն պատմիչը թեև այստեղ նշում է, որ Մանվելին օգնած կրոնավորին «նախապես» հիշել է, սակայն նախընթաց տեքստում նրա անունը չկա: Բանն այն է, որ Անանունի երկը սկզբից պակասող հատված ունի, սկսվում է Գագիկի կրտսեր եղբոր՝ Գուրգենի ծնունդով: Պետք է կարծել, որ այս գործն ունեցել է նախաբան, որտեղ ենթադրաբար եղել են նաև հենց իր՝ Անանունի, ինչպես նաև այս Կրոնավորի անունները (այսուհետև մենք Անանունի հիշատակման սկզբունքով Կրոնավորին նույնպես նշելու ենք մեծատառով՝ նկատի ունենալով Աղթամարի պատկերաքանդակների ստեղծման գործում նրա մասնակցության կարևորությունը): Ըստ այդմ, կարելի է կարծել, որ նա Գագիկին մոտ կանգնած մի մարդ էր, որպես հոգևոր, եկեղեցական հարցերի գիտակ և խորհրդատու: Սակայն անկախ ամեն ինչից, **փաստն այն է, որ եկեղեցին կերտող ճարտարապետ Մանվելը՝ քանդակների, դրանց թեմաների և պատկերման ձևի որոշման ու անգամ գծագրման հարցերում հանձին Կրոնավորի ունեցել է բանիմաց գործակից:**

Արդեն հարյուր տարուց ավելի է, որ Աղթամարի պատկերաքանդակները տարբեր ուսումնասիրողների ուշադրությանն են արժանանում, տարբեր կերպ մեկնաբանվում: Սակայն թերևս բոլորի համար պարզ է, որ այդ քանդակները կատարվել են որոշակի ծրագրով ու սկզբունքներով: Մի բան ևս ակնհայտ է, որ տաճարը շուրջանակի երիզող 5 գոտիների մեջ, այսպես կոչված կենդանիների գոտին, որը գտնվում է առաջին կամ հիմնական՝ լայն, և վերին՝ որթագալարի գոտիների միջև, տարբերվում է թե՛ ձևով ու մշակման կոպտությամբ, թե՛ ավելի վատ պահպանվածությամբ, նաև այլ չափանիշներով (նկ. 5): Հայ միջնադարյան քանդակագործության ճանաչված մասնագետ, ճարտարապետ Ստեփան Մնացականյանը, որն Աղթամարին նվիրված իր գրքում ամփոփել է նախորդ ուսումնասիրողների տեսակետները, այդ մասին գրում է. «...կենդանա-

[115] Մատենագիրք Հայոց, էջ 291:

6. Գագիկ Արծրունի թագավորը եկեղեցու մանրակերտը մատուցում է Քրիստոսին:

քանդակների գոտին... իր ձևով եզակի երևույթ է ներկայացնում ամբողջ հայ քանդակագործության պատմության մեջ առհասարակ և այդ տեսակետից էլ արժանի է առանձնակի ուշադրության: Եվ, իսկապես, եթե V–VII դդ. հուշարձանների վրա հանդիպող պատկերաքանդակները որոշ առումով կարող են դիտվել որպես նախատիպեր Աղթամարի թե՛ հիմնական և թե՛ որթագալարի պատկերաքանդակների ձևերի համար, ապա նման ուժեղ ելուստ ունեցող քանդակաշարեր չենք տեսնում վաղ շրջանի հուշարձաններում: Այս պայմաններում բնավ էլ չպետք է զարմանալ, որ ուսումնասիրողները բազմաթիվ իրարամերժ կարծիքներ են հայտնել նման պատկերաքանդակների ծագման ու նշանակության մասին, և Աղթամարի ոչ մի զարդաձև այնքան վեճեր չի առաջացրել, ինչպես մեզ հետաքրքրող այս գոտին»[116]: Ավելի վաղ կենդանաքանդակների մասին Լ. Դուրնովոն դիպուկ կերպով նկատել է, որ դրանք խորթ են Աղթամարի պատկերաքանդակների ընդհանուր պլաստիկական բնույթին[117]:

---

116 Ստ. Մնացականյան, Աղթամար, էջ107:

117 Л. Дурново, Очерки изобразительного искусства средневековой Армении, с. 73.

7. Գագիկ թագավորը որդիների հետ՝ որթագալարի գոտում, ներքևում՝ Ադամը:

Սակայն այստեղ մենք գոտու պատկերաքանդակների արվեստագիտական կամ խորհրդաբանական վերլուծություն չեն կատարելու, որն այդ ոլորտի մասնագետների գործն է լինելու նաև ապագայում, այլ պետք է փորձենք պարզել, թե մեր պաշտպանած կանխավարկածի, այն է՝ այդ քանդակների՝ Կոտոմից բերված լինելու վերաբերյալ, ինչ հավելյալ փաստարկներ կան:

Դժվար է հիմա ստույգ ասել, թե Գագիկ թագավորն ինչ խնդիր է դրել Մանվել ճարտարապետի և Կրոնավորի առաջ, և կամ՝ եկեղեցու շուրջանակի քանդակազարդումը արդյոք հենց նրա՞ հանձնարարությունն էր, թե այս երկուսի առաջարկությունը: Բայց երկու դեպքում էլ վարպետները պետք է լուծեին Կոտոմի հին քանդակների տեղաբաշխման հարցը, միաժամանակ կազմելով նաև այն ծրագիրը, որով քանդակազարդվելու էր ողջ կառույց:

Իմ դիտարկմամբ, Աղթամարի քանդակային հարդարանքի մտահղացումը պայմանականորեն երկու հարթության վրա է կառուցված՝ աստվածաշնչային պատմության (կամ թեմայի) և հայկական պատմու-



8. Կենդանաքանդակներ:

թյան: Աստվածաշնչային պատմությունը սկսվում է Ադամից (Ադամ և Եվա), հինկտակարանային թեմաներով հասնում մինչև նոր Ադամ՝ այսինքն Հիսուս Քրիստոս: Հայկական պատմությունն արտահայտվում է սուրբ Գրիգոր Լուսավորչի մեծադիր պատկերաքանդակով (արևելյան ճակատ, կից գրված է անունը)[118] և Արծրունյաց տոհմի փառաբանմամբ՝ քրիստոնեության համար նահատակված իշխաններից (նրանց հեծելաքանդակները՝ համապատասխան վիմագրերով)[119] մինչև Գագիկ Արծրունի: Վերջինս պատկերված է արևմտյան պատին՝ շքեղ հագուստով, զարդարուն թագով ու լուսապսակով, և եկեղեցու մանրակերտը մեկնում է Քրիստոսին (նկ. 6): Կարծում եմ, որ հենց այս կետում տեղի է ունենում աստվածաշնչային և հայկական պատմության (կամ թեմայի) միաձուլումը, որը շարունակվում է արդեն որթագալարի գոտում՝ երկնային դրախտում: Այլ կերպ ասած՝ պատմությունը սկսվում է հին դրախտից կամ Եդեմից (Ադամի դրախտից), հասնում մինչև Նոր Կտակարանի սահմանագիծը (չորս ավետարանիչների քանդակապատկերները եկեղեցու չորս ճակատներին), որտեղ Քրիստոսին իր կառուցած եկեղեցին է մատուցում Գագիկ թագավորը (եկեղեցու արևմտյան պատին), և ավարտվում է երկնային դրախտում (դրախտի այգում), որտեղ կրկին հայտնվում է Գագիկ թագավորն՝ այս անգամ իր երկու որդիների հետ (եկեղեցու արևելյան պատին), Ադամի քանդակից վեր (նկ. 7): Պատահական չէ, որ Գագիկի ու Քրիստոսի քանդակները նկարագրելուց հետո, Անանունը գրում է, թե թագավորն այդ շքեղ տաճարը կառուցեց և ընծայեց Քրիստոսին՝ «յուսացեալ առ հանդերձեալ հատուցմունսն», այսինքն՝ հանդերձյալ կյանքում փոխհատուցում ստանալու հույսով:

Կարծում եմ, որ Աղթամարում պատկերաքանդակների միջոցով հենց այս հիմնական՝ փրկագործական գաղափարն է արտահայտվել: Բայց այստեղ, միաժամանակ, մի շարք այլ ենթաշերտեր կան: Այդ ենթաշերտերից թերևս ամենակարևորը հենց կենդանաքանդակների գոտին է, որի մեջ մասնագետները հաշվել են 42 պատկեր (կենդանիներ

---

[118] «Տ(է)Ր ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ»:

[119] Առաջինի մոտ՝ «Տ(է)Ր ՍՈՒՐԲ ՀԱՄԱՋԱՍՊ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԻՇԽԱՆ», երկրորդի մոտ՝ «Տ(է)Ր ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ ԵՂԲԱՅՐ ՀԱՄԱՋԱՍՊԱ ՄԱՐՏԻՐՈՍՔ ԵՒ ՎԿԱՅՔ Ք(ՐԻՍՏՈՍ)Ի»:

9. Ադամն անվանակոչում է կենդանիներին (ըստ կից վիմագրի)։

կամ դրանց գլուխները), նաև կա մարդու մեկ գլխաքանդակ։ Ինչպես վերը նշվեց, այս գոտին գտնվում է առաջին՝ հիմնական, և վերին՝ որթագալարի գոտիների միջև։ Ի դեպ, Ստ. Մնացականյանն այն կոչում է «պահպանիչ խորհրդանիշների գոտի»[120]։ Դրա մանրակրկիտ նկարագրությունը կատարել է Հովսեփ Օրբելին[121], որն, ի տարբերություն պատկերաքանդակների մասին գրած մի շարք ուսումնասիրողների, ոչ միայն

[120] Ստ. Մնացականյան, Աղթամար, էջ 107։

[121] Հ. Օրբելին նշում է, որ քանդակները ներկված են եղել, իսկ աչքերի բիբերը ագուցված բազմագույն խճերով, որոշ մասերում եղել են խեցիներ։ Դրանցից 9-ը հարթաքանդակի մշակում ունեն, 14-ը կլոր քանդակի եղանակով արված գլխաքանդակներ են, 5-ը պրոտոմներ (գլուխն ու առջևի ոտքերը), 13-ը գոռելիեֆներ, որոնք միայն մի փոքր ելուստով են հպված պատին։ Քանդակները տաճարի ճակատներին անհավասար են բաշխված. արևմտյան ճակատում՝ 2, արևելյանում՝ 8, հարավայինում՝ 15, հյուսիսայինում՝ 17։ Նրանք չունեն ետնախորք կամ երիզ։ Հիմնականում վայրի կենդանիներ են՝ հովազ, խոյ, ձի, արծիվ, արջ, կապիկ, առյուծ, քարայծ, եղնիկ, սիրամարգ, ձկներ և այլն։ Նույն կենդանու պատկերաքանդակները միմյանց շատ մոտ չեն գտնվում։ Տես И. Орбели, Избранные труды, т. I, Москва, 1968, стр. 190–191, Ստ. Մնացականյան, Աղթամար, էջ 108–109։

եղել է տեղում (Առաջին աշխարհամարտի ժամանակ), այլև կենդանաքանդակները տեսել է համեմատաբար անվնաս վիճակում, քանի որ հետագայում դրանք հրազենային կրակոցների թիրախ են դարձել (նկ. 8):

Այսպիսով, Մանվել ճարտարապետն ու եկեղեցու քանդակազարդման գաղափարական և պատկերագրական կողմն ապահովող Կրոնավորը կենդանաքանդակները տեղավորել են համապատասխան շարքում, եկեղեցու չորս կողմում: Սակայն ինչպե՞ս իմաստային կապ ստեղծել այդ քանդակների ու մնացած ողջ քանդակազարդման միջև: Դրա համար գտնվել է չափազանց հնարամիտ մի լուծում. եկեղեցու արևմտյան ճակատի կենտրոնական մասում, որթագալարի գոտու՝ Գագիկի պատկերով հատվածի տակ, երկու կենդանաքանդակների միջև տեղադրվել է շրջանագծի մեջ առնված Ադամի քանդակը (անունը գրված է գլխի երկու կողմերում), որի ձախ կողմի վիմագիրն ազդարարում է՝ «ԵՒ ԿՈՉԵԱՑ ԱԴԱՄ ԱՆՈՒԱՆՍ ԱՄԵՆԱՅՆ ԱՆԱՍՆՈՑ ԵՒ ԳԱԶԱՆԱՅՑ»[122]: Սա Աստվածաշնչի Ծննդոց գրքի համապատասխան հատվածի համառոտումն է՝ «Եւ կոչեաց Ադամ անուանս ամենայն անասնոց և ամենայն թռչնոց երկնի, ամենայն գազանաց վայրի» (Ծնն. Բ, 20)[123]: Ահավասիկ, այս եղանակով գոտու քանդակները համարվել են Ադամի անվանակոչած կենդանիները: Հետաքրքիր է, որ քանդակում Ադամը աջ ցուցամատի խոսուն շարժումով կարծես հաստատում է վիմագրում ասվածը (նկ. 9): Փաստորեն, Ադամի պատկերի ու նշված վիմագրի միջոցով կատարվել է կենդանաքանդակների գոտու «քրիստոնեական խմբագումը»:

Իհարկե, այս տեսությունը կարող է անհամոզիչ դառնալ, եթե հիշենք, որ գոտու քանդակներից մեկը մարդու գլուխ է (նկ. 10): Դժվար է ասել, թե Կոտոմի քանդակների մեջ այն ում է ներկայացրել: Բայց գոտու 40-ից ավելի կենդանաքանդակների շարքում ժամանակակից-

---

[122] Արձանագրությունը հնագրական առումով միանգամայն համահունչ է 10-րդ դարին, ուստի անհիմն է Ստ. Մնացականյանի կարծիքը, թե գրությունը հետագայի է (Ստ. Մնացականյան, Աղթամար, էջ 112): Դիտելի է նաև, որ Ադամի պատկերը գտնվում է ոչ թե նրա մոտ եղած երկու կենդանաքանդակների մեջտեղում, այլ մի փոքր աջ, քանի որ նրա ձախ կողմի հատվածը հատկացվել է վիմագրին: Շատ էական է նաև, որ Ադամի պատկերն ու հիշյալ վիմագիրը միևնույն քարի վրա են, այսինքն, քանդակն ու գրությունը նախատեսված են եղել սկզբնապես:

[123] Տե՛ս Աս. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 92:

ները դժվար թե առանձնապես կենտրոնացած լինեն այս մեկի վրա: Ի դեպ, այս գոտու քանդակներից մի քանիսը, որոնք կենդանիներին ներկայացնում են կողքից և մեծ չափեր ունեն, հավանաբար Մանվելի ժամանակ են արվել, և դրանք յուրովի լրացնում են շարքի դատարկ մնացող տեղերը (տե՛ս նկ. 5): Ինչևէ, իրողությունն այն է, որ եկեղեցու քանդակային հարդարանքում մի շարք չափանիշներով տարբերվող և առանձնացող կենդանաքանդակների գոտին իմաստաբանական ընդհանուր համակարգի մեջ է ներառվել՝ որպես Ադամի անվանակոչած կենդանիների շարք, որն, ի դեպ, նույնպես կապվում է դրախտի հետ:

10. Մարդու քանդակ՝ կենդանաքանդակների գոտում:

Աղթամարում գտնում ենք ևս մի հուշում այն մասին, թե ինչու պիտի Կոտոմի քանդակները նախընտրելի լինեին Գագիկ Արծրունու համար: Անանուն պատմիչը եկեղեցու կառուցման նկարագրության մեջ խոսում է նրա ներսում՝ հարավային կողմում, հատուկ թագավորական օթյակի պատրաստման մասին[124]: Հետաքրքրական է, որ թագավորական (կայսերական) օթյակ գոյություն ունի նաև Կոստանդնուպոլսի Այա Սոֆիայի տաճարում, դարձյալ խորանի հարավային կողմում: Աղթամարի օթյակը, որը, բնականաբար պատրաստվել է Գագիկի ճաշակով, ունեցել է կենդանիների գլուխների քանդակներով բազրիք, որի կամարաշարի ստորին մասում ներկայացված են եղել երկու ցուլ, երկու քարայծ, արջ և փիղ (նկ. 11): Կենդանիների ներկայացման դիմային այս ձևը եկեղեցու արտաքին հարդարանքում հատուկ է միայն կենդանիների գոտու քանդակներին: Ըստ էության, թեմատիկ առումով ևս բազրիքի քանդակները

[124] «Դարձյալ խորանի հարավային կողմից, եկեղեցու դռան հետևում, հորինեց գահի տեղ, որը բարձրից դեպի ներքև է իջնում կամարաձև աստիճաններով, որպեսզի դառնա թագավորի աղոթքի տեղը, հեռու մարդկանցից, որով նա կլինի իր մտքերի հետ և անզբաղապես կխոսի Աստծո հետ» (Թովմա Արծրունի և Անանուն, էջ 301):

11. Թագավորական օթյակի քանդակազարդ բազրիքը եկեղեցու ներսում:

կարծես կենդանաքանդակների շարքի շարունակությունը լինեն: Ցավոք 1000 տարի իր տեղում մնացած այս բացառիկ արժեքավոր զարդարուն բազրիքը ցեղասպանությունից հետո իսպառ ոչնչացվել է (պահպանվել են միայն լուսանկարները):

Ամփոփելով կարող ենք ասել, որ մի կողմից Անանուն պատմիչի հաղորդած տեղեկությունները, մյուս կողմից Աղթամարի եկեղեցու քանդակների իմաստային ընդհանուր համատեքստի քննությունն ու կենդանաքանդակների շարքի առանձնահատկությունները թույլ են տալիս հիմնավոր համարել նախկինում Լ. Դուրնովոյի և Աս. Մնացականյանի առաջ քաշած տեսակետն այն մասին, որ հիշյալ շարքի քանդակները, եկեղեցու շինարարության համար օգտագործված մյուս քարերի հետ, բերվել են Կոտոմ բերդից, որտեղ դրանք պատկանել են հեթանոսական մի հնագույն տաճարի: Կարծում ենք, որ մեր կատարած վերլուծությունն ու բերած որոշ փաստարկներն ավելի հիմնավոր են դարձնում այս տեսակետը: Միաժամանակ չենք բացառում, որ Աղթամարի եկեղեցու կառուցման ժամանակ հենց Կոտոմի քանդակների առկայությունն է ծնունդ տվել այն գաղափարին, որ թագավորական եկեղեցին պետք է արտաքինից ամբողջովին քանդակազարդվի:

ԱՂԹԱՄԱՐԻ ՊԱԼԱՏԻ ՏԵՂԻ ՄԱՍԻՆ

Ինչ գիտենք մենք Աղթամարի պալատի մասին: Նախ այն, որ պալատը չի պահպանվել, դեռ միջնադարում քանդվել ու վերացել է, քարերը հավանաբար օգտագործել են այլ կառույցների համար (եկեղեցու հարավային և հարավարևելյան կողմում կաթողիկոսարանի ու այլ կառույցների բավական մեծ համալիր կար), և այժմ անգամ ստույգ տեղը հայտնի չէ: Սակայն պահպանվել է կառույցի նկարագրությունը Անանուն պատմիչի մոտ, որի հիման վրա տարբեր ուսումնասիրողներ քննել, ոմանք էլ փորձել են վերականգնել նրա ճարտարապետական տեսքը:

Բնականաբար, ես այդ զուտ ճարտարապետական հարցին չեմ անդրադառնալու, սակայն ուզում եմ իմ դիտարկումը ներկայացնել պալատի հնարավոր տեղի վերաբերյալ: 2012 թ. օգոստոսին Աղթամարում եղած ժամանակ եկեղեցու ներսն ու դուրսը հնարավորինս դիտելուց և հիանալուց հետո, փորձեցի ծանոթանալ նաև նրա մոտակա շինություններին, որոնք այն ժամանակ դեռ չէին վերականգնվել (դրանից հետո, լուսանկարներից դատելով, այնտեղ, կարելի է ասել, հների տեղում գրեթե նոր կիսապատեր են կառուցել)**:** Այդ մասում առանձնապես գրավիչ մի բան չգտա: Սակայն շինությունների այդ խմբի արևելյան մասում՝ եկեղեցուց հարավ-արևելք, մի հետաքրքրական հարթակ տեսա, որի որոշ հատվածներից դատելով, այդտեղ ժամանակին մոտավորապես քառակուսի հատակագծով շինություն կարող էր լինել:

Առաջին հերթին այդ հատվածն ուշադրություն է գրավում նրանով, որ այն զուրկ է խոտածածկույթից, որպիսին առկա է նրա շուրջը (նկ. 12): Երկրորդ՝ այդ հատվածը հարթեցված է, քանի որ նրանից արևելք, նույն հարթության շարունակության վրա, երևում են հողից դուրս ցցված ժայռերի ծայրերը (նկ. 13, 14), իսկ այստեղ եղած նմանատիպ քարերը մշակման են ենթարկվել և հավասարեցվել գետնի մակերեսին (նկ. 15): Երրորդ՝ հատվածի հարավային (նկ. 16) և հյուսիսային կողմերում պահպանվել են պատերի հետքեր, որոնք կարող էին պատկանել այդտեղ եղած երբեմնի կառույցին կամ (հատկապես հյուսիսայինը) նրա մոտ կառուցված պարսպապատին (նկ. 17):

Պետք է ասել, որ այս տեղը բարձրադիր է եկեղեցու նկատմամբ, և այնտեղից ընդարձակ համայնապատկեր է բացվում գրեթե բոլոր ուղ-

12.

13.

ղություններով: Համենայն դեպս, այնտեղ գտնված ժամանակ ես փառավոր տպավորություն եմ ունեցել:

Ընդհանրապես, Աղթամարում պալատի գտնվելու տեղի համար մի ուղենիշ էլ Ս. Խաչ եկեղեցին է, որի թագավորական օթյակի մուտքը հա-

14.

12–15. Հիմնամշակված տարածք, որի վրա հնարավոր է եղած լինի Աղթամարի պալատը:

16. Հարթակի հարավային կողմում քարաշարքի հետքեր:

17. Հարթակի հյուսիսային կողմում պարսպի մնացորդներ:

ռավային կողմում է: Բնականաբար, թագավորն այդ կողմից պիտի գար տաճար:

Երևան վերադառնալուց հետո ես կրկին ձեռքս առա Անանունի պատմությունը՝ տեսնելու համար, թե պալատին վերաբերող նրա տեղեկություններն ինչ կարող են ավելացնել տեղորոշման հարցին: Ցավոք, այդքան մանրամասն նկարագրելով բուն պալատը, անգամ թվարկելով որմնանկարների տեսարանները, պատմիչը տեղանշմանը գրեթե չի անդրադարձել: Եվ դա հասկանալի է, քանի որ նա չէր կարող անգամ երևակայել, որ այդ փառավոր կառույցը երբևէ կարող է անհետանալ գետնի երեսից:

Անանուն պատմիչի ընդարձակ նկարագրությունից մեր քննած հարցի տեսանկյունից կանոր է հետևյալը. «Թագավորը հրամայեց... շինելու քառանկյունի պալատ, որի լայնության և երկարության չափը քառասուն կանգուն[125] էր նույնչափ էր և բարձրությունը... Իսկ փառաց պալատի դիր-

[125] Այստեղ նշված կանգունի այժմյան չափային համարժեքի շուրջ ուսումնասիրողները համակարծիք չեն, որպես պատերի չափ առաջարկվում են 10-ից մինչև 20,7 մ (տես Ստ. Մնացականյան, Աղթամար, էջ 27):

18. Պալատի ենթադրյալ տեղը:

քը քաղաքի մեջ երևում էր որպես մի մեծ բլուր, գավառի բոլոր կողմերից: Այն իր բարձրությամբ ավելի ցածր չէր, քան կղզու ժայռոտ ծայրը»[126]:

Այսպիսով, խորանարդաձև ու գմբեթավոր պալատական կառույցը պետք է բարձրադիր տեղում լիներ և երևար գավառի տարբեր կողմերից: Իմ նշած տեղը համապատասխանում է այս տվյալներին: Այն եկեղեցու համեմատ բարձր դիրքում է, միաժամանակ, կղզու արևելյան հրվանդանի սկզբնամասում գտնվելով, տեսանելիության ավելի մեծ շրջագիծ ունի:

Փորձեցի այդ տեղը գտնել նաև հին ու նոր այլ լուսանկարներում և համացանցում եղած՝ բարձրից արված մի լուսանկարում տեսա, որ ակնառու կերպով երևում է այդ տեղը (նկ. 18): Լուսանկարն արված է մինչև

[126] Թովմա Արծրունի և Անանուն, էջ 297–299: Գրաբարը՝ «իսկ և նիստ փառաց տաճարին յամենայն կողմանց գաւառին ի մէջ քաղաքին երևի իբրև զմեծ մի բլուր. ոչինչ նուազեալ բարձրութեամբ քան զքարանձաւ ծայր կղզոյն» (Մատենագիրք Հայոց, էջ 289):

եկեղեցու նորոգումն ու շրջակայքի, այսպես ասած, բարեկարգումը, որի հետևանքով, այժմ հիշյալ տեղով երկու ճեմուղի է անցնում:

Այս հատվածը, որպես պալատի տեղ, շահեկան է նաև պաշտպանական տեսանկյունից, քանի որ, ինչպես նշեցի, այն հրվանդանի սկզբնամասում է: Հայաստանի միջնադարյան որոշ բերդեր, որոնք ձորերի կազմած հրվանդանների վրա են, ինչպես օրինակ՝ Ամբերդ, Մաղասբերդ և այլն, հարթավայրի կողմից պաշտպանվում են բերդ-դղյակներով:

Ինչևէ, սրանք դիտարկումներ են, որոնք կարող են օգտակար լինել այլ հետազոտողների համար, որոնք ավելի խորությամբ կուսումնասիրեն խնդիրը: Պարզ է նաև, որ առաջադրված ենթադրությունը կարող է հաստատվել կամ հերքվել տեղանքի մանրակրկիտ հնագիտական հետազոտությունից հետ:

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Վայոց ձորի պատմությունն ու մշակույթն իմ ուսումնասիրություններ-ի մի կարևոր մասն են կազմում, որի արտահայտությունն են դարձել մի շարք հոդվածներ, ինչպես նաև բազմաշնորհ Մոմիկին ու Նորավանքին նվիրված գրքերը[127]: Վերջինն ամփոփում է Նորավանքի բոլոր վիմագ-րերը, որոնք նախկինում հրատարակված էին երեք առանձին խմբերով (հիմնականը՝ Սեդրակ Բարխուդարյանի հրատարակությունն էր): Մի-աժամանակ, առաջին անգամ համապատասխան մեկնաբանություններ-ով ներկայացվեցին նաև Նորավանքում գրված հիշատակարանները (կարծում եմ, որ նաև այլ վանքերի դեպքում կիրառելի գաղափար է մեկ գրքում նույն վայրի վիմագրերի ու հիշատակարանների հրատարակու-թյունը): Գրքի ուսումնասիրության հատվածում պարզաբանվեցին վան-քի պատմության կամ դրան առնչվող, նախկինում անորոշ համարված մի շարք հարցեր, որոնցից են Ս. Կարապետ և Ս. Ստեփանոս եկեղե-ցիների անունների շփոթը, այն հարցը, թե ինչու է Սմբատ Օրբելյանը կոչվել «արքա», ինչ վարպետական հնարք է բանեցրել Մոմիկը Նորա-վանքի գավթի քանդակներում, նաև՝ որ Սիրանեսը ոչ միայն Ս. Գրիգոր

---

127 Կ. Մաթևոսյան, Մոմիկ (ՀՀ մշակույթի նախարարություն), (հայերեն, անգլերեն), Երևան, 2010, նույնի՝ Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները, Երևան, «Մուղնի» հրատ., 2017 (թվայնացվածը՝ www.armenianart.org կայքում): Վայոց ձորի մշակութային ժառանգությանն առնչվել եմ 1999 թվականից, երբ տեղի ունեցավ Նորավանքի վերաօծումը, և որի առիթով Եղեգնաձորում կազմակերպված «Նո-րավանք – 99» գիտաժողովի համակարգողն էի, նաև հրատարակության պատ-րաստեցի գիտաժողովի նյութերը (Սիւնյաց թեմի հայագիտական տարեգիրք «Նորավանք» , գիտական խմբագիր Կ. Մաթևոսեան, Մոնրէալ-Երևան, 2001): Մեկ այլ ժողովածու-պատկերագիրք եմ կազմել Նորավանքի վերաօծման 10-ամյակին առիթով՝ «Նորավանք-2009» (հայերեն, անգլերեն), խմբագիր՝ Կ. Մաթևոսյան, Երևան, 2009:

եկեղեցու ճարտարապետն է, այլև գավթի, որ Ս. Աստվածածին եկեղեցու պատի, մինչ այժմ զինանշան համարված «ճանկող արծվի» քանդակն իրականում փրկագործական խորհրդանիշ է, որպիսիք կան նաև այլ իշխանական տոհմերի եկեղեցիների պատերին, տապանաքարերի վրա և այլն[128]:

Ստորև կանդրադառնամ Վայոց ձորի պատմության այլ հարցերի, մասնավորապես այդ գավառում ծաղկած միջնադարյան ուսումնագիտական կենտրոններին:

Հայ մշակույթի պատմության մեջ բացառիկ երևույթ է եղել Գլաձորի համալսարանը, որի պատմությունը և ձեռագրական ժառանգությունը բավարար չափով ուսումնասիրված են: Սակայն առկա են նաև չպարզաբանված կամ գիտական հետաքրքրություն ներկայացնող հարակից հարցեր: Զարմանալի կերպով մինչև այժմ առկախ է Աղբերց վանք-Գլաձորի և Թանատի (կամ Թանահատի) վանքերի նույնացման խնդիրը: Ժամանակին Արտաշես Մաթևոսյանը սկզբնաղբյուրների վրա հիմնված մի հոդվածով համոզիչ կերպով ցույց է տվել, որ դրանք տարբեր վանքեր են եղել[129]: Քանի որ նույնացման տեսակետը շարունակում է շրջանառվել[130], համառոտ կանդրադառնամ նաև այդ հարցին:

---

[128] Չնայած Մոմիկին ես անդրադարձել եմ մի շարք աշխատություններում, բայց այստեղ մի էական դիտարկում ավելացնեմ: Կարծում եմ, որ Նորավանքի գավթի արևմտյան ճակատի և մուտքի վերակառուցման՝ դռան և պատուհանի վրա, կամարների մեջ քանդակների տեղադրման գաղափարն առաջացել է Բուրթելաշեն եկեղեցու կառուցման ժամանակ, քանի որ նրա արևմտյան ճակատային մասում՝ մուտքի և պատուհանի վերևում, նույնպես քանդակներ են տեղադրվել: Այսինքն, Մոմիկը վերափոխել է վանական համալիրի ճարտարապետական կերպարը՝ գավթի ու Բուրթելաշենի ճակատային հարդարանքը միանման ու ներդաշնակ դարձնելով: Կարծում եմ, հենց դրա համար է նա գավթի քանդակում 1321 թվականի գաղտնագրված հուշումը թողել, ցույց տալով, որ ինքն է քանդակների հեղինակը (այս մասին տես Կ. Մաթևոսյան, Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները, էջ 51–62)

[129] Ա. Մաթևոսյան, Նոր վկայություններ Գլաձորի Համալսարանի մասին (հիմնադրման 700 ամյակի առթիվ), Պատմա-բանասիրական հանդես, 4, Երևան, 1984, էջ 20–31, տես նաև նույնի՝ Հայոց միջնադարյան Համալսարանը, «Լրաբեր» հաս. գիտ., 1, Երևան, 1984, էջ 62–71, Ս. Արևշատյան, Ա. Մաթևոսյան, Գլաձորի համալսարանը միջնադարյան Հայաստանի լուսավորության կենտրոն, Երևան, 1984:

[130] Օրինակ, Հայոց պատմություն ակադեմիական նոր հրատարակության մեջ կարե-

Այս հատվածի հիմնական նյութն է Գլաձորի համալսարանի և նրա գործունեության շրջանում նույն Վայոց ձոր գավառում գործած Վերին Նորավանքի դպրոցի առնչությունների հարցը և Հերմոնի դերի բարձրացման հանգամանքը: Սակայն, մինչ այդ տեսնենք, թե պատմական ինչպիսի խորքի վրա է ծավալվել վերոնշյալ վանքերի ու հաստատությունների գործունեությունը:

Հայոց վանքերի և մշակույթի պատմության մի ուշագրավ շրջափուլ կապվում է Վայոց ձոր գավառի հետ, ընդգրկելով 13-րդ դ. վերջը և 14-րդ դ. առաջին կեսը, երբ մոնղոլական բռնակալության ներքո գտնվող ողջ երկրում անկայուն վիճակ էր, և եկեղեցաշինական քիչ աշխատանքներ էին կատարվում, իսկ այս համեմատաբար փոքր գավառում դրանք անանախադեպ զարգացում են ապրել: Միաժամանակ այստեղ ծնունդ են առել համահայկական նշանակություն ունեցող ուսումնական կենտրոններ՝ ինչպես **Գլաձորի** համալսարանը, նրան հաջորդած **Հերմոնի** վանքի համալսարանը և **Վերին Նորավանքի** բարձր տիպի դպրոցը:

Ո՞րն էր այս երևույթի պատճառը: Առաջին հերթին՝ Օրբելյան և Խաղբակյան (Պռոշյան) իշխանական տների գործունեությունը հիշյալ շրջանում: Հայտնի է, որ նրանք կարողացան մոնղոլ նվաճողների հետ համաձայնության գալ և նրանց գերակայությունն ընդունելով՝ հարկ վճարելով ու զինվորական ծառայություն մատուցելով, ոչ միայն պահպանել, այլև ավելի ամրապնդել իրենց իշխանությունը: Հիշյալ իրադարձությունները ժամանակակից պատմիչ Ստեփանոս Օրբելյանը պատկերավոր ոճով ներկայացրել է. երբ ամեն կողմում պատերազմներ ու ավերածություններ էին, Վայոց ձորը նմանվել էր խաղաղության կղզյակի, փրկության տապանի, ինչպիսին մի ժամանակ եղել է Նոյյան տապանը[131]:

լի է կարդալ՝ «Թանատե (Թանահատակի) վանքում 1282 թ. եկեղեցիներից դեպի հարավ կառուցվել է հռչակավոր Գլաձորի համալսարանը» : Հայոց պատմություն, հ. II, գիրք երկրորդ, Երևան, 2014, 491:

[131] Օրբելյան իշխանների կառավարման ու նրանց տիրույթների մասին պատմիչը գրում է. «Եւ այսպէս նրանք ապրում էին հաշտ ու նահանգը կառավարում էին շքեղաշուք արժանապատվությամբ՝ աշխարհակալների և մեծամեծների կողմից պատվի ու փառքի արժանանալով: Երկիրը պահում էին խաղաղ, վանքերը՝ շեն: Եվ քանի որ այս ժամանակներում աշխարհն ավերված ու ապականված էր, վանքերը՝ խափանված պաշտամունքային արարողություններից, մարդիկ ամեն տեղից դիմում էին դէպի Էլիկումի տերությունը՝ այստեղ տեղավորվելով ու հան-

Հայտնի է, որ Սմբատ Օրբելյանը Սյունյաց իշխանության համար հատուկ «ինջուական» (արքունական) կարգավիճակ ստանալու նպատակով երկու անգամ՝ 1251 և 1256 թթ., եղել է մոնղոլական աշխարհակալության մայրաքաղաք Կարակորումում՝ Մանգու խանի (1251–1259) մոտ: Այս քայլի շնորհիվ Օրբելյաններն ազատվեցին Վրաց թագավորությունից և իրենց նախկին գերակա Զաքարյաններից (Իվանե Զաքարյանի որդի Ավագի տնից) ունեցած կախվածությունից[132]: Ռազմական ու դիվանագիտական հաջողություններով եղբորը ոչնչով չզիջեց նրան հաջորդած Տարսայիճը, որն ավելի ընդարձակեց իշխանության սահմանները: Վերջինիս տասնամյա իշխանությամբ հաջորդեց որդին՝ Էլիկումը (մահ. 1300), իսկ նրանից հետո երկարատև ու ծաղկուն կառավարման շրջան ունեցավ նրա որդին՝ Բուրթել մեծը (1300–1348) (նկ. 1): Ահա այս ժամանակաշրջանն է, որ Սյունիքի պատմության մեջ արձանագրվեց նաև որպես մշակութային խոշոր վերելքի շրջան:

Մոնղոլների հետ հարաբերություններում նույնպիսի շրջահայեցություն են ցուցաբերել նաև Խաղբակյանները, որոնց հռչակավոր ներկայացուցիչներից էր Վասակի որդի իշխան Պռոշը (1223 – 1284): Հարկ է նշել, որ Վայոց ձորում այս երկու իշխանական տներին պատկանող բնակավայրերն ու վանքերը այսօրվա ընկալմամբ սահման չեն ունեցել, այսինքն խառը դասավորությամբ էին: Գավառի ամեն մի բնակավայր՝ բերդ, գյուղ կամ վանք, ունեցել է իր բնական հողատարածքների սահմանը, որով հանդերձ պատկանել է այս կամ այն տոհմին:

Այս երկու տոհմերի մրցակցությունն արտահայտվել է եկեղեցական-վարչական ասպարեզում, երբ Խաղբակյան Պռոշ իշխանի նախաձեռնությամբ փորձ արվեց Օրբելյանների ազդեցության ոլորտում գտնվող Տաթևի ու Նո-

---

գիստ գտնելով, ինչպես որ Աղվանքի կաթողիկոս Տեր Ստեփանոսն էլ եկավ, բնակվեց նույն Էլիկումի եղբայր Տեր Ստեփանոսի մոտ: Այսպես էլ ուրիշ շատ եպիսկոպոսներ, վարդապետներ ու ազնվական մարդիկ եկան: Եվ կարելի էր տեսնել այս տունը Աստծո շնորհիվ Նոյյան տապանի նման, աշխարհակործան ալիքների մեջ, որը Տեր Աստված, սուրբ Աստվածածնի ու բոլոր սրբերի բարեխոսությամբ թող անսասան պահի մինչև աշխարհի վերջը» (Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա.Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 342):

[132] Հայոց պատմություն, ՀՀ ԳԱԱ հրատ., հ. II, գիրք երկրորդ, Երևան, 2014, էջ 294–295:

1. Բուրթել (աջից) և Բուղտա Օրբելյան իշխանները, Ավետարան, 1306 թ., Եղեգիս (ՄՄ 10525, էջ 142ա):

ռավանքի եպիսկոպոսական աթոռներից բացի ստեղծել մեկ այլ աթոռ Երնջակում: Սակայն Նորավանքի ու Տաթևի եպիսկոպոսների և Տարսայիձ Օրբելյանի գործուն միջամտությամբ 1268-ին այդ ձեռնարկը խափանվեց: Դրանից հետո առանձնապես սուր հակադրումներ չեն եղել: Այնուամենայնիվ, Օրբելյան և Խաղբակյան իշխանների մրցակցության մեկ այլ դրվագ կարելի է նշմարել կրթամշակութային դաշտում, որը երևում է հատկապես Գլաձորի համալսարանի պատմությունից:

ԳԼԱՁՈՐԻՑ ՀԵՐՄՈՆ ԵՎ ՎԵՐԻՆ ՆՈՐԱՎԱՆՔ

Գլաձորի համալսարանը հայ միջնադարի ամենահետաքրքիր երևույթներից մեկն է: Այն ստեղծվել է, եթե ավելի ուշ շրջանում առաջացած անվանումն օգտագործենք, Արևմտյան Հայաստանից եկած հոգևորականների միջոցով: Ներսես Մշեցին, որի դպրոցը 1271 թ. (նրա ուսուցիչ Վարդան Արևելցու մահից հետո) գործում էր Մշո Առաքելոց վանքում, տեսնելով, որ շրջակա մահմեդական ցեղերի ճնշումներն անհնար են դարձնում դպրոցի կանոնավոր գործունեությունը, ուսուցիչների ու աշակերտների հետ շուրջ 1281 թ. թողնում է վանքը, անցնում Քաջբերունիք գավառ՝ Մեծոփավանք: Այնտեղ ևս ապահովություն չգտնելով՝ 1282 թ. նա գալիս է Վայոց ձոր և կեցության ու գործունեության վայրի համար դիմում Խաղբակյան իշխան Պռոշին: Վերջինս նրան է հատկացնում գավառի փոքր վանքերից մեկը, որը հիշատակարաններում անվանվում է Աղբերց վանք, և որի գլխավոր եկեղեցին կոչվել է Ս. Ստեփանոս Նախավկա: Վանքը հետագայում ավելի հայտնի է դառնում Գլաձոր անունով:

Միանգամից ասեմ, որ այս վանքի ստույգ տեղը ցայժմ հայտնի չէ, սակայն Վարդան Արևելցու Աշխարհացույցի մեջ արված հետագայի մի լրացումից կարելի է ենթադրել, որ այն գտնվել է Եղեգյաց ձոր գավառում[133]: Վայոց ձոր գալուց երկու տարի անց Ներսես Մշեցին այստեղ կն-

[133] «Վայոց ձոր Եղեգեաց ձորն է, ուր կայ կենսաբեր Սուրբ Նշանն, և Գայլոյձոր, որ աթոռն է և վարժարան սուրբ վարդապետացն մերոց...» (Վարդան Վարդապետ, Աշխարհացոյց, քննական հրատարակութիւն Հ. Պերպերեանի, Փարիզ, 1960, էջ 15): Լրացման հեղինակն ուզել է ասել, որ Վայոց ձոր գավառը հենց Եղեգյաց ձորն է: Ինչպես նկատել է Ա. Մաթևոսյանը, 1271 թ.-ից առաջ գրված Արևելցու երկում այս հավելումն արվել է Գլաձորի գործունեության ժամանակ, քանի որ այնտեղ ներկա ժամանակով նշվում է՝ «որ աթոռն է և վարժարան սուրբ վարդա-

2. Եսայի Նչեցին և Ներսես Մշեցին, նկարիչ Թորոս Տարոնացի, Ավետարան, 1323 թ., Գլաձոր (ՄՄ 6289, էջ 141ա):

քում է մահկանացուն, և նրան փոխարինում է իր աշակերտներից Եսայի Նչեցին (ծնունդով Սասունի Նիչ գյուղից), որն էլ համալսարանի ռաբունապետությունը վարում է մինչև կյանքի վերջը՝ 1338 թ. (նկ. 2)**:** Դրանից հետո նոր ռաբունապետ Տիրատուր Կիլիկեցին համալսարանը տեղափոխում է Օրբելյանների հովանավորությամբ գործող, նույն գավառում գտնվող Հերմոնի վանքը (համալսարանն այստեղ է մնում մինչև 1356 թ.՝ Տիրատուր Կիլիկեցու մահը)**:**

Հայտնի է, որ Ներսես Մշեցու ժամանակ՝ այսինքն 1282–1284 թթ., Գլաձորում է ուսանել Ստեփանոս Օրբելյանը: Նորավանքում 1297–ին ավարտած իր «Պատմություն նահանգին Սիսական» կոթողային աշխատության մեջ նա այդ մասին գրում է շատ համառոտ՝ «վարժեցայ ի կրթարանի աստուածաղէն տառից... առի հրաման յաստուածազեաց և յաշխարհալոյս ռաբունապետէն Ներսիսէ. և տհաս խակութեամբ նստայ յաթոռ վարդապետական»[134]: Թե ինչու Ստեփանոս Օրբելյանն իր հան-

---

պետացն մերոց» (Ա. Մաթևոսյան, Նոր վկայություններ Գլաձորի համալսարանի մասին, էջ 27): Բայց այս հատվածը կարելի է նաև հասկանալ, որ Եղեգյաց ձորն ու «Գայլոյ ձորը» տարբեր են (Լ. Թումանյանի կարծիքն է):

[134] Ստեփանոս Օրբելէան, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1910, էջ 478:

գամանալից պատմության մեջ որևէ տեղ չի նշում Աղբերց վանք կամ Գլաձոր անունները, մնում է անհասկանալի:

Պետք է նշել, որ Սյունյաց եպիսկոպոսության պատմության մեջ շրջադարձային էր Ստեփանոս Օրբելյանի աթոռակալության շրջանը, քանի որ նա միավորեց Նորավանքի և Տաթևի աթոռներն իր մետրոպոլիտական իշխանության ներքո[135]: Ստեփանոսն իշխան Տարսայիճի և նրա առաջին կին Արուզ խաթունի չորս զավակներից երկրորդն էր: 1285-ին մեկնել է Կիլիկիա, 1286-ին Կոնստանդին Բ Կատուկեցի (1286-1289) կաթողիկոսից եպիսկոպոսական ձեռնադրություն ստացել և հաստատվել որպես Սյունյաց աթոռի մետրոպոլիտ մինչև կյանքի վերջը (1303 թ.)՝ մեծ ծառայություն բերելով այդ աթոռին:

Հարկ է նշել, որ Գլաձորի համալսարանը հովանավորել են նաև Օրբելյանները: Աղբերց վանքի և Գլաձորի համալսարանի վարչական տեղակայման մասին բնութագրական է գրիչ Հունանի 1334 թ. Հիշատակարանը. «...**ի յիշխանութեան և տէրութեան համօրէն գաւառացս** մեծ իշխանիս Բուրթելի, և որդոց նորին՝ Պէշգենի և Իւանէի, իսկ **ի տեղւոյս տէրութեան**՝ թոռանց մեծին Պռոշայ՝ Ամիր Հասանայ և Ջումայի»[136]: Այսինքն, նահանգի ընդհանրական տերերն Օրբելյաններն էին, բայց բուն վանքը Խաղբակյաններին պատկանող տարածքում էր[137]:

Գլաձորում են ուսանել Ստեփանոս Օրբելյանին հաջորդած Սյունյաց մետրոպոլիտները՝ Հովհաննես Օրբելը (աթոռակալել է մինչև 1324 թ.)[138] և Ստեփանոս Տարսայիճը (աթոռակալել է մինչև 1331 թ.), որոնք նաև

---

[135] Այս մասին տե՛ս Աբրահամ վրդ. Մկրտչյան, Էջեր Սյունյաց Աթոռի պատմությունից, Ս. Էջմիածին, 1995:

[136] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, կազմողներ՝ Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Ղազարոսյան, մասն Բ, Երևան, 2020, էջ 179:

[137] Հիշատակարանի այս հատվածը սխալ է հասկացվել և ներկայացվել Հայոց պատմության բազմահատորյակում (Հայոց պատմություն, էջ 564):

[138] Հովհաննես Օրբելը Սմբատ և Տարսայիճ Օրբելյանների Իվանե եղբոր որդի Լիպարիտի որդին էր (այսինքն՝ Ստեփանոս Օրբելյանի հորեղբոր թոռը), բայց նաև կապ ուներ Պռոշյանների հետ, քանի որ նրա մայրը՝ Նանան, և այդ ժամանակ Պռոշյանների տոհմապետ Էաչիի (1299-1317) մայր Թաճերը, քույրեր էին (տե՛ս ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 859):

մեծապես նպաստել են համալսարանի գործունեությանը: Սակայն հետաքրքրական է, որ 13-րդ դ. վերջերից (1290-ական թթ.) Օրբելյանները բարձր տիպի հոգևոր դպրոց են հիմնել նաև իրենց պատկանող վանքերից մեկում՝ **Վերին Նորավանքում:** Հատկանշական է, որ այս նախաձեռնության համար նրանք ներգրավել են Գլաձորի ուսուցիչներից Դավիթին, որը Ներսես Մշեցու հետ Մշո Առաքելոց վանքից Վայոց ձոր եկած վարդապետներից էր: 1302 թ. նա հիշատակվում է Վերին Նորավանքում՝ որպես վանահայր և րաբունապետ, որն այդ ժամանակ աջակցություն է ստանում վանք այցելած մետրոպոլիտ Հովհաննես Օրբելից[139]**:** Սակայն Ստեփանոս Օրբելյանի պատմությունից հայտնի է դառնում, որ Դավթի գլխավորած դպրոցը գործում էր դեռևս 1295 թ.: Վերջինս մահացել է 1329 թ. առաջ և թաղվել Վերին Նորավանքում, որից հետո նրան փոխարինել է Գլաձորի սան Կյուրիոնը, որը հիշվում է մինչև 1240-ական թթ.:

Գլաձորի ուսուցչապետ Եսայու և Վերին Նորավանքի րաբունապետ Դավթի ունեցած կարգավիճակի մասին պատկերացում է տալիս Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի կազմած ՝ Հայոց կաթողիկոսին ուղղված նամակը**:** Ինչպես հայտնի է, Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսի (1293-1307) ուղարկած նամակին ի պատասխան, 1295 թ. Ստեփանոս Օրբելյանը մի պատասխան գրություն է կազմում՝ ընդդիմանալով նրա որդեգրած լատինամետ քաղաքականությանը: Այդ նամակը ստորագրել են Բջնիի աթոռակալ Տեր Հովհաննեսը, Հաղբատի, Հավուց թառի, Գողթնի եպիսկոպոսները, իշխաններ Էլիկում և Լիպարիտ Օրբելյանները, Պապաք և Էաչի Խաղբակյանները: Այն ստորագրել են նաև ժամանակի նշանավոր րաբունապետները՝ Եսայի Նչեցին, որը գրում է. «Ես Եսայի՝ կրտսեր բանասիրաց և յետին վարժապետ, իմով աշակերտօքս համախոհ եմ և միաբան եմ այսմ գրոյ և վերոգրեալ արանցս...», և Դավիթը. «Ես Դաւիթ՝ նուաստոգի քարոզի բանի և վարդապետ Հայաստանս եկեղեցւոյ, համախոհ և միաբան եմ այսմ ուղղադաւան թղթոյս, որ ունի ճշմարտիւ զսուրբ հարցն աւանդութիւնն...»[140]**:**

Այսպիսով, նամակից ակներև է, որ 1295 թ. **Եսայի Նչեցին** և **Դավիթ**

---

[139] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, կազմողներ՝ Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Ղազարոսյան, մասն Ա, Երևան, 2018, էջ 23:

[140] Ստեփաննոս Օրբելէան, Պատմութիւն, էջ 462:

վարդապետը տարբեր ուսումնական հաստատություններ են ղեկավարել: Մեզ համար արդեն պարզ է, որ դրանք էին **Գլաձորի համալսարանը** և **Վերին Նորավանքի** դպրոցը[141]: Ուշագրավ է նաև, որ Դավիթը հիշատակվում է որպես Հայաստանի եկեղեցու վարդապետ:

Կիլիկիայում աթոռակալող կաթողիկոսների և Սյունյաց մետրոպոլիտի դավանաբանական ու ծիսական հարցերում այս հակասությունը շարունակվել է նաև հետագայում: Հայտնի է Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսին փոխարինած Կոստանդին Կեսարացու (1307–1322) մոտավորապես նույնաբովանդակ նամակի պատասխանը, որը կազմվել է 1314 թ., Հովհաննես Օրբել և Ստեփանոս Տարսայիճ եպիսկոպոսների, ինչպես նաև վերոնշյալ ռաբունապետների կողմից[142]: Գրության վերջում եղած ստորագրությունների հատվածում կարդում ենք. «...եպիսկոպոսքս Սիւնեաց՝ Տէր Յովհաննէս և Տէր Ստեփանոս և վարդապետքս՝ Դաւիթ և Եսայի, այլ ամենայն վարդապետօքս և վանօրէօքս»[143]: Ուշադրության է արժանի, որ 1314 թ. նամակում Դավթի անունը հիշատակված է Սյունյաց երկու եպիսկոպոսներից անմիջապես հետո և Եսայի Նչեցու անունից առաջ: Սրա պատճառներից մեկը կարող է այն լինել, որ այդ շրջանում Խաղբակյանների դիրքերն Օրբելյանների համեմատությամբ թուլացել էին, ուստի նրանց տարածքում գործող դպրոցի ռաբունապետին առաջնություն է տրվել:

Քանի որ այս շրջանի իրադարձությունների վերաբերյալ ոչ մի պատմիչի վկայություն չունենք, մեր գլխավոր սկզբնաղբյուրը ձեռագրերի հիշատակարաններն են: Թեպետ դրանք բազմազան և կարևոր տեղեկություններ են պարունակում, սակայն պատմական դեպքերի կանոնավոր շարադրանք չեն, ուստի այս կամ այն իրադարձության կամ տարբեր գործիչների հարաբերությունների մասին ստիպված ենք միայն ենթադրություններ անել՝ հիմնվելով հիշատակարաններում եղած ակնարկների

---

[141] Այս մասին տե՛ս Կ. Մաթևոսեան, Դրուագներ Նորավանքի եպիսկոպոսական աթոռի պատմութիւնից (Արատես և Վերին Նորավանք), Նորավանք, հոդվածների ժողովածու, Մոնրեալ-Երևան, 2001, էջ 66:

[142] Գ. Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 280:

[143] Յ. Տաշեան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1895, էջ 180:

վրա: Օրինակ, Գլաձորի և Վերին Նորավանքի առնչությունների մասին կարելի է կարծիք կազմել գլաձորյան երկու հիշատակարանից: Դրանցից երևում է, որ Դավիթը երբեմն այցելել է Գլաձոր, և հավանաբար հենց այդ ժամանակ այստեղ գրված ու ավարտված մատյանների հիշատակարաններում նշվել է առանձնակի մեծարանքով: Այսպես՝ 1309 թ. հիշատակարանում արձանագրված է. «ի վարժապետութեան մեծիս Եսայեայ և եռամեծին Դաւթայ»[144]: Ինչպես տեսնում ենք, գլաձորյան ձեռագրերի ավանդույթի համաձայն առաջինը նշված է Եսայի «մեծ» ռաբունապետի անունը, բայց այնուհետև Դավիթը հորջորջվում է որպես «եռամեծ»: Իսկ 1321 թ. հիշատակարանում կարդում ենք. «ի հայրապետութեան սուրբ և բազմերջանիկ հռետորաց Հայոց՝ երկուց ամոլաց ճշմարիտ հաւատոյ մերոց՝ Դաւթի և Եսայեա»[145]: Այստեղ էլ, հավանաբար հենց Եսայի Նչեցու ցուցումով, Դավթի անունն ավելի առաջ է գրվել: Հիշատակման այս նրբերանգները խոսում են այն մասին, որ Գլաձորում Օրբելյանների դպրոցի ղեկավարն առանձնակի վերաբերմունքի էր արժանանում, որն էլ կարելի է բացատրել նրանից կամ ընդհանրապես Օրբելյաններից աջակցություն ստանալու ակնկալությամբ:

Այն հանգամանքը, որ Օրբելյանները սատարել են Գլաձորի համալսարանին, խոստովանում է նաև Եսայի Նչեցին 1323 թ. իր ստացած ձեռագրի (ՄՄ 6289) արժեքավոր հիշատակարանում: Մեզ հետաքրքրող հատվածի սկզբում նա նախ խոսում է գրչության վայրի՝ Գլաձորի մասին, հետևյալ խոսքերով. «Բայց տեղի գրութեան սորա եղև ի գաւառիս Սիւնեաց, ի նեղ և յանձուկ աւթեվանիս»: Սա անթաքույց ակնարկ

[144] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մասն Ա, էջ 156:

[145] Նույն տեղում, էջ 412: Գ. Հովսեփյանը, Դավթի մասին ավելի քիչ տեղեկություններ ունենալով, նրան համարել է Նչեցու օգնականը՝ ուսումնական գործընթացի կազմակերպման գործում (Յովսէփեան Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 265): Այս թյուրիմացությունը կրկնել են նաև այլ հեղինակներ, մասնավորապես Լ. Խաչերյանը Դավթի մասին նշում է, թե նա Գլաձորի համալսարանում եղել է «Եսայի Նչեցուց հետո երկրորդ դեմքը» (Լ. Խաչերյան, Գլաձորի համալսարանը, Երևան, 1973, էջ 150): Սակայն օգնականը կամ երկրորդ դեմքը՝ ղեկավարից ավելի շատ չէր կարող մեծարվել: Բացի այդ, Դավթի անունը գլաձորյան հիշատակարաններում նշվում է ընդամենը երկու անգամ, մինչդեռ Եսայի Նչեցունը՝ վաթսուն անգամից ավելի:

է համալսարանի տեղի փոքրության մասին: Այնուհետև Եսայի Նչեցին նշում է Օրբելյան գահերեց իշխան Բուրթելին ու նրա ընտանիքի անդամներին՝ փառաբանելով նրանց եկեղեցանպաստ գործունեությունը: Դրանից հետո հիշատակագիրը ներկայացնում է իր և համալսարանի սաների նկատմամբ Օրբելյանների հովանավորչական վերաբերմունքը, շեշտելով, որ նրանք իրենց ընդունել են ոչ որպես օտար, այլ իբրև հարազատներ[146]: Շարունակելով, Նչեցին մեծարում է Օրբելյան տոհմի հոգևորական դարձած երկու պայազատներին՝ Սյունյաց մետրոպոլիտ Հովհաննես Օրբելին և նրա հաջորդ համարվող Ստեփանոս Տարսայիճին, որոնք ուսանել էին Գլաձորում, և որի համար նրանց կոչում է իր սիրելի որդիներ: Այս հիշատակարանից պարզ է դառնում, որ այդ ժամանակ Գլաձորի համալսարանի գլխավոր հովանավորներն արդեն Օրբելյաններն էին: Ի վերջո, ինչպես վերը նշեցինք, 1338 թ. Եսայի Նչեցու մահից հետո համալսարանը Խաղբակյանների տիրույթում գտնվող Գլաձորից տեղափոխվում է Օրբելյանների տարածք՝ նրանց հովանավորած Հերմոնի վանք:

Քանի որ ժամանակակիցների կողմից «երկրորդ Աթենք» մեծարական անունն ստացած Գլաձորի համալսարանի վերաբերյալ մեծածավալ գրականություն կա, և առկա նյութերը հիմնականում ուսումնասիրված են, ես այստեղ միայն շատ համառոտ մի քանի արձանագրում կանեմ: Գլաձորի վարդապետական ծրագիրն ընդգրկում էր աշխարհիկ և հոգևոր կրթությանը վերաբերող առարկաների մի ամբողջ համակարգ: Ուսանողները պարտավոր էին ուսումնառության 7–8 տարիների ընթացքում, աստվածաբանություն սովորելուց բացի, տիրապետել «արտաքին», այսինքն՝ աշխարհիկ գիտություններին և արվեստներին[147]:

Ուսումնառության շրջանն ավարտելուց հետո Գլաձորի համալսա-

---

[146] «Եւ մեք մեր աշակերտաւք բազում և անթիւ գութս բարեաց գտաք ի սոցանէ, որ զաւտարութիւնս մեր ժողովեցին, և ընկալան զմեզ ոչ իբրև զաւտար, այլ իբրև յինքեանց հարազատ ծնեալ մանկունս, գթով և սիրով զմեր ստահակութիւնս ընկալան» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մասն Ա, էջ 458):

[147] Դրանք կոչվում էին «ազատ արվեստներ» կամ գիտություններ և յոթն էին: Առաջին երեքը՝ քերականությունը, ճարտասանությունը և տրամաբանությունը, կազմում էին եռյակ, մյուս չորսը՝ թվաբանությունը, երաժշտության տեսությունը, երկրաչափությունը և աստղաբաշխությունը՝ քառյակ գիտություններ:

բանի շրջանավարտին շնորհվում էր վարդապետական աստիճան, որը բաբունապետության կողմից ղեկավարվող ու անցկացվող արարողություն է եղել և կրել է պաշտոնական բնույթ: Շրջանավարտը քննություն է հանձնել իր անցած դասընթացից: Քննությունից զատ նրան հանձնարարվել է որևէ երկ՝ ավարտաճառ շարադրելու և պաշտպանելու համար: Պաշտպանությանը ներկա են եղել բաբունապետը, ուսուցիչներ, արդեն պաշտպանած շրջանավարտներ, հրավիրված հոգևոր և աշխարհիկ իշխանության ներկայացուցիչներ և այլք: Գլաձորում կար և՛ քահանայական, և՛ վարդապետական լսարան, այստեղից էլ՝ **համալսարան** անվանումը: Հայտնի է, որ Գլաձորի համալսարանի 360 աշակերտների Եսայի Նչեցին է վարդապետական աստիճան շնորհել (նկ. 3): Գլաձորի համալսարանի գործունեությունը սկզբից մինչև վերջ առնչվում է գրչությանը, տեղում զանազան մատյանների ստեղծմանը, որոնք բավական մեծ թիվ են կազմում: Մեզ հասած մատյանների թիվը գերազանցում է հինգ տասնյակը:

Հայագիտության չլուծված խնդիրներից մեկն այն է, որ այդքան մեծ հռչակ վայելած Գլաձորի համալսարանի կամ Աղբերց վանքի գտնվելու ստույգ վայրն առայժմ անհայտ է: Ենթադրվել է, որ այն գտնվել է Վայոց ձորի Թանատի (տեղի վիմագրերում վանքը միայն այդ անունով է կոչվում) կամ Թանահատի վանքում, սակայն այդ տեսակետը համոզիչ հիմնավորում չունի: Այդ հարցին նվիրված Իգիթ Ղարիբյանի գիրքը, որը լույս է տեսել վանքի տարածքում կատարված պեղումներից հետո, արդեն իսկ բավարար է Թանատի և Գլաձորի նույնացումը հերքելու համար[148]: Կարիք չկա անգամ վկայակոչելու Գլաձորի բազմաթիվ հիշատա-

[148] Ի. Ղարիբյանը պեղումներից գտնված մի տապանաքար համարել է փաստ Թանատի ու Գլաձորի նույնացման համար: «Այս է հանգիստ Դավիթ քահանայի, որ տարաժամ ի Քրիստոս փոխեցաւ, յաղաւթս յիշեցէք, թվ ՉՀԱ (1322)»: Նա գրում է, քանի որ տապանաքարը եկեղեցու արևելյան անկյունում է, քարը լավ մշակված, ինքն այս Դավթին նույնացնում է «Գլաձորի համալսարանի ուսուցչապետ Դավիթ Սասնեցու հետ» (Ի. Ղարիբյան, Գլաձոր, Երևան, 1983, էջ 49–52, 160–161): Սակայն դրանք կռվան չեն կարող լինել, քանի որ վիմագրի բովանդակությունը վկայում է ընդամենը վաղաժամ (տարաժամ) կյանքից հեռացած մի Դավիթ քահանայի մասին: Մինչդեռ բաբունապետ Դավիթը քահանա չէր, այլ վարդապետ, միաժամանակ առնվազն Ներսես Մշեցու (մահ. 1284) հասակակիցն էր, 1295 թ. ստորագրել էր Գրիգոր Անավարզեցուն ուղարկած նամակի տակ, ուստի 1322 թ., ծերունազարդ մարդ պիտի լիներ, և նրա մահը չէր կարող համարվել վաղաժամ:

3. Եսայի Նչեցին Գլաձորի համալսարանի ուսուցիչների ու սաների հետ, նկարիչ Թորոս սարկավագ (Երուսաղեմ, ձեռ. 365):

կարանները, որտեղ երբեք չի նշվում Թանատ կամ Թանահատ անունը: Ի. Ղարիբյանի գրքում բերված Թանատի 194 մեծ ու փոքր վիմագրերում ոչ միայն չեն հանդիպում Աղբերց վանք կամ Գլաձոր տեղանունները, այլև չկա Գլաձորի երկարամյա վանահայր և ռաբունապետ Եսայի Նչեցու հիշատակությունը: Աղբերց վանք Գլաձորը աղբյուրներում բազմիցս կոչվում է «մենաստան», Թանատը՝ ոչ մի անգամ:

Թանատի վանքի գլխավոր եկեղեցին Խաղբակյան Պռոշ իշխանը կառուցել է 1273–1279 թթ.: Այն բազմաթիվ նվիրատվություններ է ստացել, որոնց մասին են վկայում վիմագրերը: Վանքի մեծ համբավը պայմանավորված էր նշանավոր եպիսկոպոս Ստեփանոս Սյունեցու (մահ. 735 թ.)՝ այստեղ հուղարկավորված լինելու հանգամանքով, և այդ պատճառով գլխավոր եկեղեցին նրա անունով կոչվում է Ս. Ստեփանոս կամ Ս. Հայրապետ[149]: Իսկ Աղբերց վանք–Գլաձորի եկեղեցին կոչվել է համաքրիստոնեական սրբի անունով՝ Ս. Ատեփանոս Նախավկա, ինչը վկայված է բազմաթիվ հիշատակարաններում: Գլաձորի գործունեությունը դադարում է 1338 թ.՝ Եսայի Նչեցու մահվամբ (համալսարանը փոխադրվում է Հերմոն), մինչդեռ Թանատում կյանքը շարունակվել է, և այնտեղ առկա են 1353, 1455, 1491, 1554, 1605 թվականների վիմագրեր:

Ցավոք Գլաձորի համալսարանի տեղի որոնումներն առայժմ ցանկալի արդյունքի չեն հանգեցրել: Մի բան պարզ է, որ այն եղել է բավականին առանձնացած մի վայրում, որի մասին հեռատեսորեն նկատում է դեռ Ղ. Ալիշանը[150]: Ամենաթարմ ուսումնասիրությունն այս ուղղությամբ պատկանում է Վայոց ձորի հուշարձանների նվիրյալ հետազոտող Տիգրան Մկրտչյանի գրչին, որտեղ նա առաջ է քաշում Հերմոնի վանքին մոտ գտնվող Քարեվանի և Աղբերց վանքի նույնացման տեսակետը որպես

---

[149] 1273 թ. շինարարական արձանագրության մեջ նշվում է՝ «Շնաեցաւ ս(ուր)բ եկեղեցիս՝ բնակարան փառացն Ա(ստուծո)յ և յարկ սրբոյն Ստեփանոսի...», այսինքն՝ հարկ (կացարան) Սուրբ Ստեփանոսի համար, իսկ 1307 թ. վիմագրում այն կոչվում է Ս. Հայրապետ (Դիվան հայ վիմագրության, պր. III, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 74, 76):

[150] Ղ. Ալիշանը Գլաձորի տեղի մասին. «ի բանից առաջնոցն և ի լռութենէ յետնոց՝ երևի ի զանխուլ ուրեք ջրաբուղխ վայրի լինել և ի բարձու, և ի հարկէ ցուրտ ի ձմերանի» (Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1983, էջ 135): «Զանխուլ» նշանակում է՝ անհայտ, անլուր, առանձնացած:



4. Հովհաննես Օրբելի՝ Վերին Նորավանքին գյուղեր հատկացնելու մասին 1302 թ. գրությունը (Նոր Ջուղա, ձեռ. 525):

գիտական վարկած[151]: Այդ բանը կարող է հաստատվել կամ հերքվել տեղում իրականացվելիք պեղումներից հետո:

Ինչ է մեզ հայտնի **Վերին Նորավանքի** և նրա դպրոցի մասին: Ինչպես վերը նշեցինք, 1302 թ. Սյունյաց մետրոպոլիտ Հովհաննես Օրբելը այցելում է Վերին Նորավանք և վանահայր Դավթի ու միաբանության գործունեությունը խրախուսելու համար չորս գյուղ է նվիրում վանքին (գյուղերից երկուսի անունը նշվում է նաև գլխավոր եկեղեցու՝ Ս. Սիոնի մի վիմագրում): Մետրոպոլիտի այցի մասին գրված է Վերին Նորավանքում ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանում, որի ստացողը հենց վանահայրն էր (նկ. 4):

Ինչպես տեսանք, մինչ այդ՝ 1295 թ., Դավիթն ստորագրել է Գրիգոր Անավարզեցուն ուղարկած նամակի տակ: Ավելի ուշ Դավիթը հիշատակվում է Վերին Նորավանքի բազմաթիվ ձեռագրերի հիշատակարաններում որպես «ռաբունապետ», «սուրբ ռաբունապետ» և «երջանիկ ռաբունապետ»: Բնականաբար, այս դպրոցը նույնպես ունեցել է վարդապետական ուսմամբ շրջանավարտներ, բայց կարծում ենք, քանի որ չի ունեցել զույգ լսարան (քահանայական և վարդապետական), ինչպես Գլաձորը, այդ պատճառով չի հիշատակվում որպես «համալսարան»: Սակայն հետաքրքիր է, որ հիշատակարաններից մեկում (1360 թ.) Գլաձորի համալսարանի նման Վերին Նորավանքը նույնպես անվանվել է «երկրորդ Աթենք». «Տէր Սարգիս, սնեալ և վարժեալ յարևելս ի մայրն իմաստից և յերկրորդ յԱթէն ի Վայու ձորն, ի հռչակաւոր և

[151] Տ. Մկրտչյան, Գլաձորի համալսարանի տեղորոշման նոր վարկած, Երևան, 2016 (թվայնացվածը՝ www.armenianart.org կայքում):

յաստուածաբնակ վանսն ի Սուրբ Սիոն, Վերին Նորավանս, յառաջ-նորդութեանն մեծին ռաբունոյն Կիւրիոնին»[152]:

Վերին Նորավանքից մեզ են հասել բազմաթիվ ձեռագիր մատյաններ, որոնք ընդգրկում են 1302–1495 թթ. և վկայում են այս կենտրոնի երկարակեցության մասին (ի տարբերություն Գլաձորի): Ըստ Տիգրան Մկրտչյանի վերջերս հրատարակած արժեքավոր ուսումնասիրության[153] Վերին Նորավանքն այժմյան Շատիկ վանքն է, որն այդ անունը ստացել է Վերին Նորավանքի 15-րդ դ. նույնանուն վանահոր՝ Շատիկի անունից, և այդպես հիշատակվել վանքի վերաշինության ժամանակից՝ 17-րդ դ. սկսած: Տեղագրական այս ճշտումը միանգամայն հիմնավոր է: Տիգրան Մկրտչյանը հայտնաբերել ու հրատարակել է նաև «Դիվան հայ վիմագրության» Վայոց ձորի հատորից դուրս մնացած, Շատիկ վանքի հարավային պատի մի հատվածաբար պահպանված արձանագրություն, որտեղ առկա «ՐԱՎԱՆ» հատվածն ամենայն հավանականությամբ հենց «ՆՈՐԱՎԱՆՔ» անվան մասնիկն է (նկ. 5): Ավելացնեմ, որ Վերին Նորավանք – Շատիկում, եկեղեցու արևմտյան կողմում, պահպանվել է նաև ռաբունապետ Դավիթ վարդապետի տապանաքարը: Այն համարվել է «փլատակներով ծածկված», բայց նրա վիմագիրը

5. «Նորավանք» անվան հատվածական («ՐԱՎԱՆ») հիշատակությունը Շատիկ վանքում (լուսանկարը Տիգրան Մկրտչյանի):

[152] Երուսաղեմ, ձեռ. 2156, Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Է, Երուսաղէմ, 1974, էջ 218:

[153] Տ. Մկրտչյան, Վայոց ձորի պատմության նոր էջեր. Վերին Նորավանքի տեղը, Երևան, 2017:

6. Վերին Նորավանքի բաբունապետ Դավիթ վարդապետի տապանաքարը:

հայտնի է եղել և տեղ գտել վիմագրության դիվանում՝ «Դ(ԱՒԻ)Թ Վ(ԱՐ)Դ(ԱՊԵՏ)»[154]: Բարեբախտաբար, տապանաքարը, որի վրա քանդակված է նաև վարդապետական գավազանի վերնամասը անսովոր ձևով բռնած ձեռք, այժմ տեսանելի է (այն լուսանկարել եմ 2019 թ. աշնանը՝ նկ. 6):

Վերին Նորավանքի կամ Շատիկ վանքի ներկայիս եկեղեցին հին կառույցների՝ նաև բազմաթիվ վիմագրեր ունեցող քարերով, կառուցվել է 1655 թ., որն այժմ վթարային վիճակում է (նկ. 7, 8): Վանքն ամբողջության մեջ, օժանդակ շինություններով պարսպապատ ուշագրավ համալիր է:

Գլաձորի անմիջական շարունակությունը հանդիսացող **Հերմոնի վանքի** դպրոցի մասին տեղեկությունները նույնպես հիշատակարաններում են պահպանվել: Հայտնի է, որ բուն վանքը հիմնվել է 936 թ. Սյունյաց գահերեց իշխան Սմբատի հրամանով՝ Հակոբ եպիսկոպոսի կողմից: Գլխավոր եկեղեցին կոչվում է Ս. Գրիգոր: Հետագայում վանքը կոչել են այդ ժամանակ այստեղ ապրող ճգնավորներից ավագագույնի անունով՝ Ահերմոնի կամ պարզապես՝ Հերմոնի վանք: Ներկայիս կիսականգուն թաղածածկ եկեղեցին կառուցվել է 17-րդ դ. հին եկեղեցու տեղում՝ նրա քարերով (նկ. 9): Վանքը ծաղկման է հասել Օրբելյան տոհմի հովանավորության շրջանում՝ 14–15-րդ դդ., երբ հայտնի է դարձել որպես ուսումնական և գրչության կենտրոն: Ինչպես վերը նշվեց, 1338 թ., Եսայի Նչեցու մահից հետո, նոր բաբունապետ Տիրատուր Կիլիկեցին համալսարանի աշակերտության հետ տեղափոխվել է Հերմոն, և համալսա-

[154] Դիվան հայ վիմագրության, պր. III, էջ 161:

7–8. Վերին Նորավանքի կամ Շատիկ վանքի եկեղեցին կառուցված հին եկեղեցու քարերով 1655 թ.:

9. Հերմոնի վանքի Ս. Գրիգոր եկեղեցին կառուցված հին եկեղեցու տեղում 17-րդ դ. (լուսանկարը Տիգրան Մկրտչյանի):

րանն այստեղ գործել է մինչև 1356 թ. (Տիրատուր Կիլիկեցու մահը):

Հերմոնում ստեղծված ձեռագրերից տեղեկություն ունենք 34-ի մասին (մեծագույն մասը գտնվում է Երևանի Մատենադարանում), որոնցից 7-ը 14-րդ, իսկ 27-ը՝ 15-րդ դարերից են: Վանքի բուռն ծաղկման շրջանը Տիրատուր Կիլիկեցու գլխավորությամբ այստեղ գործած համալսարանի տարիներն են (1338-1356 թթ.): Ժամանակակիցները վերջինիս մեծարել են «մեծ վարժապետ», «մեծ և երիցս երանեալ հռետոր» և այլ մակդիրներով: Հայտնի է, որ Տիրատուրը նաև գրչությամբ է զբաղվել: Պահպանվել է 1309 թ. Գլաձորում նրա ընդօրինակած մի Ավետարան (ՄՄ 3393): Հերմոնից մեզ հասած առաջին մատյանը 1318 թ. Հովհաննես գրչի ձեռագիրն է, որ պարունակում է Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրության» երկը (Վենետիկ, ձեռ. 358): Հատկանշական է, որ հիշատակարանում նշվում է նաև Գլաձորի ռաբունապետ Եսայի Նչեցին՝ «առ ոտս մեծ հռետորիս Եսայա[յ]»[155] ձևակերպմամբ, մի բան, որ վկայում է այս երկու կենտրոնների սերտ կապի և, հավանաբար նաև

[155] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մասն Ա, էջ 362:

շատ մոտ գտնվելու մասին:

1394 թ. մի հիշատակարանի շնորհիվ պարզվում է, որ երբ Տիրատուր Կիլիկեցու մահից հետո Հովհաննես Որոտնեցին համալսարանի սաների հետ Հերմոնից տեղափոխվել է Որոտնավանք, Հերմոնի «հին վարժարանի» մատենադարանի ձեռագրերի որոշ մասը թողնվել է տեղում՝ գրոց արկղերի մեջ: Հովհաննես գրիչն իր ունեցած նախօրինակի մասին գրում է. «...գտեալ եղև ի յարկեղս գրոց ի հին վարժարանի, ի Հերմոնի վանս կոչեցեալ»[156]**:** Ուշագրավ է, որ բավական մեծ թիվ են կազմում նաև 15-րդ դ. Հերմոնում գրված ձեռագրերը[157]:

Այսպիսով, 13-րդ դ. վերջերից սկսած Վայոց ձորը՝ **Գլաձոր-Հերմոն**, **Վերին Նորավանք** ուսումնագիտական կենտրոններով, բացառիկ դեր և առաքելություն է ստանում հայ իրականության մեջ: Այստեղ սովորելու էին գալիս երկրի բոլոր կողմերից, անգամ հեռավոր Կիլիկիայից, իսկ վարդապետական կրթությամբ շրջանավարտները մեկնում էին գավառներ և այնտեղ բացում իրենց դպրոցները[158]**:** Հարկ է ավելացնել, որ 13-րդ դ. վերջին և 14-րդ դ. առաջին կեսին բուռն վերելք են ապրել Վայոց ձորի նաև մյուս վանքերը:

Ամփոփելով կարելի է ասել, որ 13-րդ դ. վերջերին և 14-րդ դ. առաջին կեսին Վայոց ձորը Օրբելյան ու Խաղբակյան իշխանների և Սյունյաց մետրոպոլիտների հովանու ներքո բուռն ծաղկում է ապրել: Այստեղ են գործել համահայկական նշանակություն ունեցող **Գլաձոր-Հերմոնի** և **Վերին Նորավանքի** ուսումնագիտական կենտրոնները: Աննախադեպ վերելք է ապրել գրավոր մշակույթը՝ վիմագրական և ձեռագրական ուղղություններով: Այս շրջանից մեզ են հասել վայոցձորյան մեծաթիվ ձեռագիր մատյաններ, որոնց մեջ հատկապես առանձնանում են գիտակրթական բովանդակությամբ և մեծարվեստ նկարազարդմամբ աչքի ընկնող գլաձորյան մի շարք ձեռագրեր:

---

[156] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 608: Որոտնավանքից համալսարանը տեղափոխվել է Տաթևի վանք, որի հայտնի ռաբունապետն էր Գրիգոր Տաթևացին:

[157] Ժամանակագրական կարգով Հերմոնից մեզ հայտնի վերջին մատյանը 1484 թ. Ավետարան է (ՄՄ 6699), որի գրիչները վանքի միաբաններ Սարգիսը և Զաքարիան են, ծաղկողը՝ Եսային:

[158] Տե՛ս Ս. Արևշատյան, Ա. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 40-45:

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵԼ ՎԱՅՈՑ ՁՈՐՈՒՄ

1. Հայտնի է, որ Գլաձորի համալսարանը 1282–1284 թթ. Ներսես Մշեցու, այնուհետև 1284–1338 թթ. Եսայի Նչեցու ռաբունապետությամբ գործել է Աղբերց կամ Գլաձորի վանքում, իսկ 1338–1356 թթ. Տիրատուր Կիլիկեցու ռաբունապետությամբ համալսարանը գործել է Հերմոնի վանքում: Այսինքն, Հերմոնը Գլաձորի անմիջական շարունակությունն է: Հետևաբար, մինչև Աղբերց կամ Գլաձորի վանքի տեղի հայտնաբերումը (որն, ըստ որոշ տվյալների, շատ հեռու չի եղել Հերմոնից), անհրաժեշտ է Հերմոնի վանքում պատշաճ հնագիտական ուսումնասիրություն կատարել, որից հետո՝ վերականգնման աշխատանքներ տանել: Հերմոնում է գտնվում ռաբունապետ Տիրատուր Կիլիկեցու տապանաքարը, չի բացառվում, որ այդտեղ հուղարկավորված լինի նաև Եսայի Նչեցին:
2. Անհրաժեշտ է հնագիտական ուսումնասիրություն կատարել Հերմոնի վանքից հյուսիս-արևմուտք, բարձունքի վրա գտնվող Քարեվանում, որն ըստ առաջ քաշված մի տեսակետի (Տիգրան Մկրտչյան), կարող է Աղբերց վանքը լինել[159]:
3. Գլաձորի համալսարանի գործունեության սկզբից որոշ ժամանակ անց Օրբելյանները Վերին Նորավանքում հիմնել են բարձր տիպի հոգևոր դպրոց: Ինչպես պարզել են վերջին տարիներին կատարված ուսումնասիրությունները (այդ մասին է Տիգրան Մկրտչյանի գիրքը), միջնադարյան աղբյուրներում Վերին Նորավանք անունը կրող

[159] Ընդհանրապես, Գլաձորի տեղը գտնելու գործում անհրաժեշտ է ընթանալ տարբեր ենթադրությունների բացառման սկզբունքով: Այդ ճանապարհով, որպես համալսարանի գտնվելու հնարավոր վայր, Թանատի վանքն արդեն դուրս է դրված ցանկից: Մի քանի այլ տեղերի մասին նշում է Տիգրան Մկրտչյանը (Տ. Մկրտչյան, Գլաձորի համալսարանի տեղորոշման նոր վարկած, էջ 7–11): Ավելի վաղ, առկա տվյալներն ուսումնասիրելով, Արտաշես Մաթևոսյանը համալսարանի հնարավոր տեղադրության կապակցությամբ նշում է մի քանի հայտնի վայրերի մոտակայքը. «Աղբերց վանք- Գլաձորը գտնվել է Թանատի (Սյունեցու շիրիմ-Վարագա Ս. նշան), Հերմոնի (Ս. Գրիգոր) և Բոլորաբերդի կամ Պռոշաբերդի (Սպիտակավոր Ս. Աստվածածին) վանքերի մոտակայքում» (Ա. Մաթևոսյան, Նոր վկայություններ Գլաձորի համալսարանի մասին, էջ 30): Կարծում եմ, որ հնագիտական նպատակամղված աշխատանքի դեպքում այս հարցը լուծում կստանա:

վանքն այժմ հանրածանոթ Շատիկ վանքն է (այդ անունը ստացել է 17-րդ դ., Վերին Նորավանքի երբեմնի հռչակավոր Շատիկ վանահոր անունից)։ Վանքի այժմյան Ս. Սիոն եկեղեցին, որը հնի տեղում վերաշինվել է 1655 թ., վթարային վիճակում է։ Այս վանքում անհրաժեշտ է պատշաճ հնագիտական ուսումնասիրություն կատարել, միաժամանակ՝ ամրացման և վերականգնման աշխատանքներ՝ բուն եկեղեցում, որտեղ կան նաև որմնանկարի մնացորդներ։

4. Հերմոնի և Վերին Նորավանքի ուսումնասիրությամբ հայագիտությունը կհարստանա նոր տվյալներով, երևան կգան երբեմնի գիտամշակութային գործիչների տապանաքարերը և այլ տվյալներ, միաժամանակ, դրանց վերականգնմամբ ու բարեկարգմամբ հնարավորություն կստեղծվի Հայաստանի զբոսաշրջային քարտեզի վրա ավելացնել այս երկու հուշարձանները, որպես միջնադարյան Հայաստանի բարձրագույն ուսումնական և գիտական կենտրոնների գործունեության վայրեր։

ՀԱՎԵԼՎԱԾ

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳՐՔԵՐ[160]

1. Արուճ (ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և մշակույթի հուշարձանների պահպ. և օգտ. գլխավոր վարչություն), Երևան, «Հայաստան», 1987:
2. Որմնանկարչությունը Հայաստանի պետական պատկերասրահում (Հայաստանի պետ. պատկերասրահի հրատ.), Երևան, 1990:
3. Հայաստանի Ազգային պատկերասրահ. Ուղեցույց, խմբագրությամբ Շ. Խաչատրյանի, («Հայ հին և միջնադարյան կերպարվեստ» բաժինը՝ էջ 32–57), (հայերեն, անգլերեն, ֆրանսերեն), Փարիզ, 1992:
4. Ավետարանական պատկերներ (հեղինակակից՝ Ա. Ավետիսյան), («Մոմիկ» մշակութային միության հրատ.) Երևան, 1993:
5. Անի. Եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը (Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ.), Ս. Էջմիածին, 1997:
6. Հայաստան. Ուղեցույց ուխտավորների և զբոսաշրջիկների համար («Հայոց Եկեղեցին առաքյալներից մինչև մեր օրերը» բաժինը՝ էջ 75–122), Հայկական Հանրագիտարանի հրատ., Երևան, 1998:
7. Կեչառիս – 1000 (հեղինակակիցներ՝ Մ. Հասրաթյան, Վ. Դևրիկյան), (հայերեն, ռուսերեն, անգլերեն), Ս. Էջմիածին, 2004:
8. Մուղնու Սուրբ Գևորգ վանքը («Մուղնի» հրատ.) Երևան, 2000: Վերահրատարակություն լրացումներով՝ Ս. Էջմիածին, 2009 (Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ.), նաև ամբողջական ռուսերեն և անգլերեն թարգմանությամբ:
9. Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լրացումները, Մատենադարանի հրատ., Երևան, 2009:
10. Մոմիկ մանրանկարիչը (հեղինակակից՝ Լ. Զաքարյան), ալբոմ-ուսում-

---

[160] Գրքերից հետևյալ համարների՝ 2, 4, 5, 9, 11, 12, 13, 15, 17, 18, 20, 21, 24 թվայնացված օրինակները կարելի է տեսնել www.armenianart.org կայքում:

նասիրություն (հայերեն, անգլերեն), Մատենադարանի հրատ., «Նաիրի», Երևան, 2010:
11. Մոմիկ (ՀՀ մշակույթի նախարարություն), (հայերեն, անգլերեն), Երևան, 2010:
12. Անի-Շիրակի պատմության էջեր (հոդվածների ժողովածու), Երևան, 2010:
13. Հեթում Պատմիչ Կոռիկոսցին և նրա ժամանակագրությունը, Երևան, «Մուղնի» հրատ., 2011:
14. Սամուէլ Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ (բնագիրը կազմեց՝ Ա. Հայրապետյանը, առաջաբանը՝ Կ. Մաթևոսյանի), Մատենադարանի հրատ., «Նաիրի», Երևան, 2011:
15. Հավուց թառի վանքը, Երևան, «Մուղնի» հրատ., 2012:
16. Հաղբատի Ավետարանը, Երևան, «Նաիրի», 2012:
17. Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը (հեղինակակից՝ Լ. Թումանյան, Ա. Ասրյան), Ս. Էջմիածին, 2013:
18. Սամուէլ Անեցի և շարունակողներ, ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ Կարեն Մաթևոսյանի, Երևան, «Նաիրի», 2014:
19. Surb Gevorg Cathedral. The Frescoes, Preface authors Karen Matevosyan, Avet Avetisyan, Yerevan, 2015 (անգլերեն, հայերեն, վրացերեն, ռուսերեն):
20. Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, Երևան, «Մուղնի» հրատ., Երևան, 2015:
21. Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները, Երևան, «Մուղնի» հրատ., 2017:
22. Մաթևոսյան Կարեն, Ավետիսյան Ավետ, Զարյան Արա, Լամուրե Քրիստին, Դադիվանք. վերածնված հրաշալիք (հայերեն, ռուսերեն, անգլերեն), Երևան, 2018:
23. Karen Matevosyan, Edda Vardanyan, La miniature Arménienne. Matenadaran (Album), Erevan, 2018.
24. Պատմահնագիտական դիտարկումներ, Երևան, «Մուղնի» հրատ., 2020:

25. Արուճի տաճարի 666 թ. որմնանկարը, ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1981, N 3, էջ 85–92:
26. Հայոց կաթողիկոսարանի մատենադարանն ու գրչատունը Անիում, «Էջմիածին», 1981, Ժ, էջ 41–45:
27. Իշխան Գրիգոր Մամիկոնյան-պատվիրատու և հովանավոր եկեղեցական շինարարության, «Էջմիածին», 1981, Դ, էջ 39–44:
28. Հոռոմոս-Անի ճանապարհին գտնվող կամարը, «Պատմա-բանասիրական հանդես», 1982, N 1, էջ 143–149:
29. Գրիչ և մանրանկարիչ Իգնատիոս Հոռոմոսցի, «Բանբեր Երևանի համալսարանի», 1982, N 1, էջ 121–133:
30. Լմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցու որմնանկարը, «Էջմիածին», 1982, Դ, էջ 53–55:
31. Արուճի Ս. Գրիգոր և Թալինի Կաթողիկե տաճարների որմնանկարները, «Էջմիածին», 1982, Ը-Թ, էջ 67–70:
32. Նկարիչ մարգարեի «Մուտք Երուսաղեմ» մանրանկարը, ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1982, N 9, էջ 52–63:
33. Եղվարդի Ս. Զորավար եկեղեցին և մենաստանը, «Էջմիածին», 1983, Է, էջ 49–52:
34. Ձեռագիր գրված Անի քաղաքի Բեխենց վանքում, «Պատմա-բանասիրական հանդես», 1984, N 1, էջ 221–225:
35. Արջո Առիճի դպրոցը XIII դարում, ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1984, N 3, 67–70:
36. Հոռոմոսի գրչության կենտրոնի պատմությունից, «Էջմիածին», 1984, Ե, էջ 45–49:
37. Անի քաղաքի Ներքին բերդի Ավետարանը, «Էջմիածին», 1984, ԺԱ-ԺԲ, էջ 110–115:
38. Անիի քաղաքացիների դիմանկարները «Հաղբատի Ավետարանի» խորաններում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1984, 3, էջ 162–168:
39. Գրիչ և մանրանկարիչ Հովհաննես Սանահնեցու ինքնանկարները, «Գարուն», 1984, N 10, էջ 91–93:
40. 14-րդ դարի հիշատակարանները Անի քաղաքի և անեցիների մասին, Պատմա-բանասիրական հանդես, 1985, N 3, էջ 108–114:

41. Չորս խորան «Բագնայրի Ավետարանից», ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1985, N 10, էջ 93–97:
42. Անիի եպիսկոպոս Հովհաննես Ոսկեփորիկ գրիչը, «Էջմիածին», 1985, Ը, էջ 38–44:
43. Կազմարարությունը Հոռոմոսի գրչության կենտրոնում, ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1986, N 10, էջ 64–68:
44. Scriptoria et bibliotheques d'Ani, "Revue des etudes Armeniennes", Tome XX, Paris 1986–1987, p. 209–221.
45. Անի քաղաքի և նրա մերձակա վանքերի ձեռագրական հավաքածունը, «Հուշարձան» տարեգիրք, Երևան, 1987, էջ 96–98:
46. Անի քաղաքի գրչության կենտրոնը, «Պատմա-բանասիրական հանդես», 1988, N 1, էջ 132–137:
47. Վրթանես Քերթողի հայտնած մի տեղեկության շուրջ, «Պատմա-բանասիրական հանդես», 1989, N 1, էջ 242–244:
48. Հազարամյա մշակույթի վկան («Էջմիածնի Ավետարան» – 1000), «Արվեստ», 1989, N 10, էջ 22–25:
49. Անիի Մայր տաճարը – հոգևոր և մշակութային կենտրոն, «Էջմիածին», 1989, ԺԱ–ԺԲ, էջ 105–110:
50. Հայոց աշխարհիկ որմնանկարչությունը, «Արվեստ», 1990, N 9, էջ 17–22:
51. Գրչի և ստացողի միջնորդը (Վաճառքի համար նախատեսված գիրքը միջնադարյան Հայաստանում), «Պատմա-բանասիրական հանդես», 1990, N 4, էջ 121– 131:
52. Հայ թագավորների ու թագուհիների ձեռագիր մատյանները, «Գարուն», 1990, N 11–12, էջ 114–116:
53. Կոշավանքը VII–XIV դդ., «Էջմիածին», 1991, Ա–Բ–Գ, էջ 95–108:
54. Կեռան թագուհու և Հեթում արքայորդու Ավետարանը, «Գիտություն և տեխնիկա», 1991, N 5, էջ 46–50:
55. Հայոց պատմության բախտորոշ 1441 թվականը, «Էջմիածին», 1991, Է–Ը, էջ 5–17:
56. Անիի մանրանկարչությունը, «Արվեստ», 1991, N 10, էջ 28–35:
57. Սարգիս վարդապետ Անեցի, «Անի», 1992, N 1, էջ 40–47:
58. Երեք երևելի վարդապետ (Ստեփանոս Մանուկ Կարմիրվանեցի, Պետրոս Ականատես, Ստեփանոս Տերհուսկանորդի), «Գարուն», 1991, N 8, էջ 80–82:

59. Սամուել Անեցու «Ժամանակագրության» ավարտման թվականը և պատ-վիրատուն, «Պատմա-բանասիրական հանդես», 1992, N 1, էջ 156-162:
60. Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և քաղաքամայր Անին, «Էջմիածին», 1992, Ը, էջ 38-45, Թ-Ժ-ԺԱ, էջ 115-125, 1993, Ա-Բ-Գ, էջ 119-134:
61. Հոռոմոսի վանքի պատմության նոր էջեր (ԺԴ-ԺԹ դդ.), «Էջմիածին», 1993, Դ-Ե-Զ, էջ 72-79:
62. Ավետարանական թեմաները կերպարվեստում, «Արվեստ», 1993, N 9-12, էջ 4-7:
63. Անի քաղաքի հոգևորականությունը, «Էջմիածին», 1993, ԺԱ-ԺԲ, էջ 44-53, 1994, Բ-Գ, էջ 56-70:
64. Անի քաղաքի եկեղեցիները, «Էջմիածին», 1994, ԺԱ-ԺԲ, էջ 48-80:
65. Անիի եպիսկոպոսական աթոռը (Գաւազանագիրք եպիսկոպոսաց Անւոյ), «Էջմիածին», 1996, Է-Ը, էջ 149-184:
66. Անիի եպիսկոպոսական աթոռը, «Բազմավէպ», Վենետիկ, 1996, էջ 254-271, 1997, էջ 153-170:
67. Անիում Զաքարյանների հաստատման ժամանակն ըստ նորահայտ հիշա-տակարանի, «Պատմա-բանասիրական հանդես», 1997, N 1, էջ 280-283:
68. Հայ մանրանկարիչների յիշատակարանները, «Սիոն» (Երուսաղեմ), 1997, հուլիս-դեկտեմբեր, էջ 312-326:
69. Խոր Վիրապի վանքը և նրա գրչության կենտրոնը, «Էջմիածին», 1997, Բ-Գ, էջ 174-178:
70. Հառիճի վանքը ԺԳ դարի սկզբին (գրչության կենտրոնը և հարակից հարցեր), «Էջմիածին», 1998, Ա, էջ 115-124:
71. Հայաստանի թեմերը (պատմություն և արդիականություն), «Էջմիածին», 1998, Բ-Գ, էջ 185-190:
72. Հայ եկեղեցու թեմական բաժանումը. Գուգարաց թեմի պատմությունից, «Էջմիածին», 1998, Զ, էջ 68-76:
73. Նոր էջեր Նորավանքի եպիսկոպոսական Աթոռի պատմության, «Էջմիա-ծին», 1999, Բ, էջ 71-86:
74. Դրուագներ Նորավանքի եպիսկոպոսական Աթոռի պատմութիւնից (Արատես և Վերին Նորավանք), «Նորավանք» տարեգիրք Բ, Մոնթրէալ-Երևան, 2001, էջ 62-76:
75. Les cle rcs dans la cite ou la ville «aux mill et une eglises», ANI capitale de l'Ar-

menie en l'an mil, Paris musees, 2001, p. 136–143.
76. Վարդան Արևելցին Անիի մասին, «Էջմիածին», 2002, ԺԱ–ԺԲ, էջ 92–95:
77. Սամուել Անեցի (կենսագրական լրացումներ), «Էջմիածին», 2003, Զ, էջ 47–57:
78. Հազարամյա Կեչառիսի հիմնադրման պատմությունից, «Էջմիածին», 2004, Ա, էջ 77–91:
79. Սամվել Անեցու Ժամանակագրության հնագույն ձեռագրերը, ակադեմիկոս Ն. Մառի ծննդյան 140 և մահվան 70–ամյակներին նվիրված ժողովածու, Երևան, 2005, էջ 37–48:
80. Հովհաննես Սարկավագի պատմական թղթերն ըստ Սամվել Անեցու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 6, Երևան, 2005, էջ 122–131:
81. Հովհաննես Սարկավագի գործունեությունն Անիում, «Էջմիածին», 2005, Է–Ը, էջ 59–72:
82. Սամվել Անեցին Անիի պատմության մասին, «Էջմիածին», 2006, Բ–Գ, էջ 72–85:
83. Հավուց թառի վանքի և Ապիրատյան տոհմի պատմության նորահայտ տվյալներ, «Բանբեր Մատենադարանի», 17, Երևան, 2006, էջ 147–167:
84. Սամվել Անեցու Ժամանակագրության Մխիթար Անեցու ընդօրինակությունը, «Էջմիածին», 2006, Ժ–ԺԱ, էջ 88–100:
85. Պատմամշակութային նորաբաց էջեր, «Հայ արվեստ», 2006, N 4, էջ 34–36:
86. Մշո Ս. Կարապետ վանքի պատմության մի դրվագ, «Պատմա–բանասիրական հանդես», 2007, N 1, էջ 188–197:
87. Ժամանակագրական նոր միավորներ Մատենադարանի երկու ձեռագրից, «Հանդէս ամսօրեայ», 2007, էջ 257–276:
88. Սամվել Անեցու Ժամանակագրության Հայրապետ վարդապետի ընդօրինակությունը, «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. ԻԷ, 2007, էջ 77–88:
89. Ժամանակագրական նոր միավորներ Սամվել Անեցու ձեռագրերից, «Էջմիածին», 2007, Ե, էջ 50–59:
90 Սամվել Անեցու Ժամանակագրության Ստեփանոս Օրբելյանի օրինակը, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի Տարեգիրք Բ, Երևան, 2007, էջ 180–192:

91. «Հայոց կաթողիկոսական աթոռի վերահաստատումը Ս. Էջմիածնում՝ 1441 թ.», հոդված «Սուրբ Հայաստան» ցուցահանդեսի կատալոգում (Երևան, 2007) էջ 399-402:
92. Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը և նրա տոհմը 11-րդ դարում, «Բանբեր Մատենադարանի», թիվ 18, Երևան, 2008, էջ 67-93:
93. Սմբատ Մագիստրոս, «Հանդէս ամսօրեայ», 2008, էջ 173-186:
94. Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերի աղբյուրագիտական արժեքը, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, «Հայ աստվածաբան», գիտական հոդվածների ժողովածու, 2008 թ. հ. Բ, էջ 257-266:
95. Յոհան գրչի ընդօրինակած պատմական ժողովածուն և կատարած հավելումները, «Էջմիածին», 2008, Զ-Է, էջ 102-112:
96. Անին մայրաքաղաք և կաթողիկոսանիստ «Պատմա-բանասիրական հանդես», 2008, N 3, էջ 3-30:
97. Անի քաղաքը և Ծառաքար-Մաղասբերդը 11-14-րդ դդ., «Հուշարձան» տարեգիրք Դ-Ե, Երևան, 2008, էջ 236-247:
98. Ճարտարապետ Մոմիկ (կենսագրական նոր տվյալներ), «Նորավանք-2009» Նորավանքի վերաօծման 10-ամյակին նվիրված ժողովածու, Երևան, 2009, էջ 22-32:
99. Արուճի պատմամշակութային ժառանգությունը և դրա պահպանությունը (Հայկական մշակութային ժառանգության պահպանությունը Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում, Կլոր սեղան, Երևան-Օշական, 2008 թ. դեկտեմբերի 2-6), էջ 129-134:
100. Արուճի և Թալինի պատմության էջեր, «Էջմիածին», 2009, Ա, էջ 50-62:
101. Գրիգոր Հառիճեցու նորայայտ թուղթը, «Հանդէս ամսօրեայ», 2009, էջ 171-178:
102. Հոռոմոսի վանահայրերի գավազանագիրքը, «Էջմիածին», 2009, Է, էջ 60-64:
103. Գրիգոր Պիխտ Շիրակացի, «Էջմիածին», 2009, Ժ, էջ 95-105:
104. Les tentatives de restauration du siège Patriarcal d'Ani au XIIe siècle, L'Eglise armnnienne entre Grecs et Latins fin XIe-milieu XVe siècle, Geuthner, Paris 2009, p. 235-240.
105. Բագնայրի վանքի հազարամյակը, «Էջմիածին», 2010, Բ, էջ 53-76:
106. Արուճի հնագոյն բազիլիկ եկեղեցին, «Հանդէս ամսօրեայ», 2010, էջ 198-211:

107. Բագնայրի հազարամյա վանքը, ՀՀ ԳԱԱ և Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի միջազգային 8-րդ գիտական նստաշրջանի նյութեր (Գյումրի, 22-24 հոկտեմբեր, 2010 թ.), Երևան, 2010, էջ 3-9:
108. Հեթում Կոռիկոսցու ժամանակագրությունը և նորահայտ ժամանակագրական լրացումները, Լ. Խաչիկյանի 90-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերը, Երևան, 2010, էջ 119-149:
109. Հեթում Կոռիկոսցու լրացումները Սամվել Անեցու ժամանակագրության մեջ, «Էջմիածին», 2010, Թ, էջ 48-61:
110. Սամուէլ Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց...» Ժամանակագրութիւնը, «Հայկազեան հայագիտական հանդէս», 2011, հ. ԼԱ, էջ 73-91:
111. Իլու «Քառասուն խորան Ս. Աստուածածին» եկեղեցու կառուցման մասին, «Հանդէս ամսօրեայ», 2011, էջ 409-418:
112. Սամվել Անեցին և նրա շարունակողները մի քանի վանքերի կառուցման մասին, «Էջմիածին», 2012, Բ, էջ 10-21:
113. Լրացումներ Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերում, «Էջմիածին», 2013, Ա, էջ 130-139:
114. Հոռոմոսի վանքի հնագոյն եկեղեցու անուան շուրջ, «Հանդէս ամսօրեայ», 2013, էջ 311-326:
115. Հավուց թառի գրչության կենտրոնը, «Բանբեր Մատենադարանի», թիվ 19, Երևան, 2013, էջ 159-172:
116. Վիմագրական նշխարներ Արևմտյան Հայաստանից, «Էջմիածին», 2015, Դ, էջ 142-153:
117. Գրիգոր Մագիստրոսը և կաթողիկոսական աթոռի անցումը Պահլավունիներին, «Հանդէս ամսօրեայ», 2015, էջ 89-138:
118. Գրիգոր Ապիրատ Մագիստրոս. 11-րդ դարի մոռացված մեծ իշխանը, «Վէմ», 2015, N 3, էջ 24-41:
119. Միհնի եկեղեցու շինարարական առանձնահատկությունները, վարպետանշանները և որոշ վիմագրեր (համահեղինակ՝ Ա. Ղազարյան), «Պատմաբանասիրական հանդես», 2015, N 3, էջ 125-144:
120. "History of the Monastery of Horomos", in Horomos monastery: Art and History (Edited by Edda Vardanyan), Paris, 2015, pp. 17-53.
121. "The scriptorium of Horomos Monastery", (համահեղինակ՝ S. Baloyan), in Horomos monastery: Art and History (Edited by Edda Vardanyan), Paris, 2015,

pp. 325–359.
122. Անիի մերձակա Արջառիճի վանքը, «Էջմիածին», 2016, Ջ, էջ 35–49:
123. Երկու նոր գրիչ–հեղինակ Անիի շրջանից, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», պրակ 19, Երևան, 2016, էջ 19–26:
124. Միջնադարյան հեղինակների վկայությունները հայկական որմնանկարչության մասին, «Հայկական որմնանկարչություն», գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, խմբագիր Կ. Մաթևոսյան, Երևան, 2019, էջ 7–18:
125. Նյութեր հայկական միջնադարյան որոշ որմնանկարների վերաբերյալ, «Հայկական որմնանկարչություն», գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, խմբագիր Կ. Մաթևոսյան, Երևան, 2019, էջ 85–97:
126. Մաշտոցյան Մատենադարան գիտահետազոտական ինստիտուտի 60–ամյակը, «Բանբեր Մատենադարանի», թիվ 28, Երևան, 2019, էջ 5–15:
127. Հայկական ձեռագիր գիրքը և գրչության կենտրոնները, «Պատմության և մշակույթի հարցեր», օժանդակ ձեռնարկ զբոսավարների, երիտասարդ գիտաշխատողների, ասպիրանտների և հայցորդների համար, խմբագիր Վ. Տեր–Ղևոնդյան, Երևան, 2020, էջ 9–16:
128. Հայկական մանրանկարչության հիմնական դպրոցները, «Պատմության և մշակույթի հարցեր», օժանդակ ձեռնարկ զբոսավարների, երիտասարդ գիտաշխատողների, ասպիրանտների և հայցորդների համար, խմբագիր Վ. Տեր–Ղևոնդյան, Երևան, 2020, էջ 17–28:
129. Հայերեն ձեռագրերի հիշատակարանների հրատարակության հարցի շուրջ, «Բանբեր Մատենադարանի», թիվ 29, Երևան, 2020, էջ 447–463:
130. Վանքերի և ուսումնական կենտրոնների ծաղկումը Վայոց ձորում (13–րդ դ. վերջ – 14–րդ դ. առաջին կես), «Վայոց ձոր. վառ անցյալ, վառ ապագա» միջազգային գիտաժողովի (Եղեգնաձոր, 13, 03, 2020) զեկուցումների ժողովածու, Երևան, 2020:

Karen Matevosyan

HISTORICAL ARCHAEOLOGICAL OBSERVATIONS

Summary

The book presents the author's historical and archaeological observations on a number of places and monuments, proposing some assumptions and suggestions that can serve as a guideline for further studies. The author referred to those places about which he had previously published studies.

ARUCH – In the book, titled *Aruch* (Yerevan, 1987), Matevosyan K. assumed that the basilica which was excavated in the 1950s and considered to be part of the palace complex, is the ancient basilica church of Aruch (5th century), the western wing of which was later downsized and therefore the altar has not been preserved. This assumption was confirmed during the excavations in 2006.

Another assumption made in the same book has not yet been verified. It refers to the place of the entrance to the palace hall, which could not be determined during the excavations. Since the pedestal of the throne is on the eastern side of the hall, the entrance must have been from the western side, and if making excavations in a small area, the western wall of the palace and the entrance section can be opened.

From an archeological point of view, the 7th-century fortress of Aruch is also of great interest, the walls of which are currently in a state of disrepair.

HAVUTS TAR – A few years ago, in a 14th-century manuscript of the Matenadaran (Ms 3681) Matevosyan K. found the text of the spiritual leader of the Havuts Tar Monastery, Nathanael, about the history of the monastery. It is mentioned in this text that in 1002, Prince Gevorg built the Katoghike Church of the monastery, which had nine altars. The church is now in ruins, the area is covered with many church stones and architectural fragments. The gavit (narthex) of the monastery has been built in front of it, which is also currently destroyed. In the book, the author tries to restore the original plan of the monastery, showing the location of the Katoghike Church and suggests to make excavations in that area for discovering it.

ANI – the famous capital of medieval Armenia, the ruins of which are now in the territory of Turkey. It was especially famous for its numerous churches. Information about one of them, St. Stepanos, has been preserved only in the lithographs of other monasteries. In one of them it is mentioned that St. Stepanos was near the Kars Gate of Ani. In **J**. Orbeli's *Brief Guideline of the City of Ani* it is mentioned under the number 20 – "the ruins of the big temple." Therefore, it was the Church of St. Stepanos.

The Bekhents Monastery of Ani is famous for the two manuscripts copied and illustrated there which have come down to us (Matenadaran, ms. 5554, ms. 6288). Its exact location is unknown, but in the coastal part of the gorge of the Akhuryan River, where there are two more famous monasteries (St. Gregory built by Tigran

Honents and the Kusanats Monastery), ruins and architectural fragments have been preserved, which allow us to assume that there were also a church and a monastery there. (Matevosyan K. made observations there in 2012–2013). It is possible that it was the Bekhents Monastery.

AGHTAMAR – King Gagik Artsruni made this island on Lake Van his residence, built a city, a palace, and the Church of the Holy Cross (915–921) there, which is famous especially for being completely decorated with reliefs from the outside. In the history ordered by the king it is said that in order to build the church, he invaded and occupied the Kotom fortress, destroyed the pagan temple there, and brought these stones to Aghtamar. First, Lydia Durnovo, then Asatur Mnatsakanyan, made the assumption that the reliefs of the temple presenting the images of animals, which form a separate ornamental belt, are quite protruding from the walls and differ from the other reliefs of the church in some respects. They were brought from Kotom and initially belonged to the temple situated there. The author of this book brings additional arguments in favor of this view.

The palace built by Gagik Artsruni on the Aghtamar Island has not been preserved and even its exact place is not known. When Matevosyan K. was in Aghtamar in 2012, he noticed a platform on the south-eastern side of the Church of the Holy Cross, on a high place, which was devoid of grass and was intentionally leveled. There are traces of walls on the northern and southern sides of the area. Taking into account these and several other circumstances, the author supposes that the Aghtamar Palace could have been in that place.

VAYOTS DZOR – This province of Armenia flourished in the late 13th and the first half of the 14th century. The University of Gladzor, having a pan-Armenian reputation, was founded here. In 1282–1338, it functioned at the Aghberts Monastery, the location of which is currently unknown. In 1338–1356, the university operated at the Hermon Monastery, which is now abandoned and in a state of disrepair.

Since the end of the 13th century, under the auspices of the Orbelian princes another high-class school functioned at the Upper Noravank in the Vayots Dzor province, the location of which was also unknown, but due to the recent studies (Discovery of Tigran Mkrtchyan) it was discovered that it is the nowadays famous Shatik Monastery.

Matevosyan K. suggests to carry out corresponding archeological and restoration works in these two monasteries, Hermon and Upper Noravank, which are far from the roads. Due to them, Armenology will be enriched with new data, the tombstones of some medieval educational figures will be discovered. At the same time, it will be possible to add these two monuments to the tourist map of Armenia as places of activity of the higher educational and scientific centers of medieval Armenia.

English translation by Sona Baloyan

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 5
ԱՐՈՒՃ 15
Ինչ է անհրաժեշտ անել Արուճում 28
ՀԱՎՈՒՑ ԹԱՌ 34
Նաթանայել Հավուցթառեցու տեղեկությունները 38
Հավուց թառի Կաթողիկե եկեղեցու տեղի հարցը 41
Ինչ է անհրաժեշտ անել Հավուց թառում 50
ԱՆԻ 51
Անիի Ս. Ստեփանոս եկեղեցու տեղորոշումը 56
Անիի Բեխենց վանքը որոնելիս 58
ԱՂԹԱՄԱՐ 68
Ս. Խաչի պատկերաքանդակների ստեղծման պատճառի մասին 70
Պատվիրատուի հանգամանքը 75
Կոտոմ բերդի և տաճարի մասին վկայությունը 82
Ճարտարապետը, նրա խորհրդատու կրոնավորը և
պատկերաքանդակները 83
Աղթամարի պալատի տեղի մասին 94
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ 101
Գլաձորից Հերմոն և Վերին Նորավանք 106
Ինչ պետք է անել Վայոց ձորում 122
ՀԱՎԵԼՎԱԾ Կ. Մաթևոսյանի հրատարակությունների ցանկ 124
SUMMARY 133

Կարեն Արտաշեսի Մաթևոսյան

ՊԱՏՄԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Սրբագրիչ՝ Անժելա Ամիրխանյան

Ձևավորումը Տիգրան Ապիկյանի

Շապիկի Ա երեսին՝ Ադամ (Աղթամար)

Լուսանկարը Սասուն Դանիելյանի

Բ երեսի լուսանկարը Տեր Սահակ Մարտիրոսյանի (2019)

«Մուղնի» հրատարակչություն

ՏԻԳՐԱՆ ՄԵԾ տպագրատուն

Երևան 2020

Չափսը՝ 70x108 1/16

Տպաքանակը 300

ISBN 978-99941-33-87-1

9 789994 133871



Կարեն Մաթևոսյան
պատմագիտության դոկտոր
պրոֆեսոր

Karen Matevosyan
Doctor of Historical Science
Professor

HISTORICAL ARCHAEOLOGICAL OBSERVATIONS